

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
XXIII
ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Ձեռնարկները

XXIII
CONFERENCE OF
YOUNG ORIENTALISTS
OF ARMENIA

THESES

ԵՐԵՎԱՆ - 2002 - YEREVAN

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է

ՀՀ ԳԱՍ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Պատասխանատու խմբագիր՝

պ.գ.ք. ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄՔ

ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՄՊԱՆՈՒԹՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԶՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՐՅԱԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Օսմանյան խորհրդարանը, տեղի տալով մամուլի ճնշումներին և փորձելով արդարացնել իր չորսամյա լուծքունը, անդրադարձավ նախորդ կառավարության օրինա-լախտումներին: Խորհրդարանային նիստերի ընթացքում քննարկման առարկա դարձավ նաև հայերի տեղահանության և կոտորածների հարցը: 1918թ. հոկտեմբերի 28-ին արաբ պատգամավոր Ֆուադը, հիմնվելով օսմանյան սահմանադրության 31-րդ հոդվածի վրա, օսմանյան խորհրդարանի նախագահին ներկայացրեց տաս կետից բաղկացած զեկուցագիր (takrir), որում նախ-կին կառավարությանը մեղադրում էր առանց հիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, իրականությանը չհամապատասխանող տե-ղեկություններ տարածելու, ազգային միջոցները հափշտակելու, երկիրը տնտեսապես կործանելու, ոճրագործ չեթեներին աջակցելու մեջ: Վիճաբա-նությունների առիթ հանդիսացած զեկուցագիրը խորհրդարանը ընդունեց նոյեմբերի 4-ին: Որոշում կայացվեց Գերագույն ատյանին հանձնել Մայիլ Հալիմ և Թալեսթ փաշաների գլխավորած կառավարության անդամներին: Օսմանյան սահմանադրության և ներքին կանոնակարգի համաձայն՝ Գե-րագույն ատյան ուղարկվող կառավարության անդամների նախաքննությունը պետք է իրականացվեր նախնական հանձնաժողովների կողմից: Ուտոի ստեղծվեց 5-րդ հանձնաժողովը, որի կազմի մեջ մտան վիճակահանությանը ընտրված 44 պատգամավորներ, այդ թվում էր նաև Մարաշի հայ պատգամավոր Հակոբ Խրլաքյանը: Զննիչ հանձնաժողովը գործեց նոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 12-ը, գումարվեց 14 նիստ: Հարցաքննվեցին Մեծ վե-զիր Մայիլ Հալիմը, 12 նախարար և երկու շեյխուլ իսլամ:

Հայերի բռնագաղթի վերաբերյալ թուրք պաշտոնյաների պատասխանները ընդհանուր առմամբ համընկնում էին: Բռնագաղթը որակավորվեց որպես օրեն-քով անրագրված ժամանակավոր տեղահանություն՝ թելադրված երկրի անվտանգության պահպանման նորմերից: Հայերը մեղադրվեցին հակապե-տական գործունեություն ծավալելու մեջ, ինքնապաշտպանական կռիվները ներկայացվեցին որպես ապստամբություններ: Հայերի «ապստամբական շար-ժումների» վերաբերյալ ստանող պնդումները հիմնվում էին ներքին գործերի նախարարության հրապարակած գրքույկների վրա:

Ըստ տեղահանության օրենքի՝ պետք է տեղահանվեր միայն ռազմաճա-կատին մոտ գտնվող բնակչությունը, որը սպառնում էր օսմանյան բանակի քիկունքի ապահովությանն ու պարենի և զինամթերքի առաքմանը: Խաղաղ բնակչության, ինչպես նաև ռազմական քառերաբեմից հեռու գտնվող վայրե-րում կատարված տեղահանության վերաբերյալ պաշտոնյաները հայտնեցին

իրենց անտեղյակությունը՝ կատարվածի ամբողջ պատասխանատվությունը գցելով ռազմական և ներքին գործերի նախարարությունների վրա՝ ի դեմս Էնվերի և Թալեաթի՝ մեղադրելով վերջիններին իրականությունը քաղցնելու մեջ: Հիրավի տեղահանության և կոտորածների կարգադրությունները եղել էին Թալեաթի կողմից, բայց ժամանակավոր օրենքները քննարկվել և հավանության էին արժանացել մաև նախարարների խորհրդում: Ուստի հայերի տեղահանության հետևանքներ հանդիսացող կոտորածների պատասխանատվությունը ընկնում է կառավարության բոլոր անդամների վրա: Սակայն նախարարները տեղահանությանը ուղեկցող կատարված քալանցի և ջարդերի մեջ մեղադրեցին միայն օրենքը չարաշահող պաշտոնյաներին: Այսպես, ըստ արդարադատության նախարար Իբրահիմ բեյի՝ «Ղժբախտ դեպքերի» համար պատասխանատու էին ոչ թե օրենք ստեղծող մարդիկ, այլ դրանք գործադրողները: Մինչդեռ տեղահանության ժամանակավոր օրենքը իրավական հիմք չունեւր. օրենքի առաջարկը 1915թ. մայիսի 13-ին արել էր ներքին գործերի նախարար Թալեաթը, մայիսի 14-ին այն ստորագրել էր մեծ վեզիր Մայիթ Հալիմը, իսկ նախարարների խորհուրդը ընդունել էր այն մայիսի 30-ին: Որոշումը կարող էր օրենքի ուժ ստանալ միայն խորհրդարանի վավերացումից հետո, սակայն այդ շրջանում խորհրդարանի աշխանանքները արհեստականորեն դադարեցված էին: Խորհրդարանը վավերացրեց որոշումները միայն 1916թ. դեկտեմբերին, երբ ոչնչացված էր տեղահանված բնակչության մեծամասնությունը: Պաշտոնյաները պնդում էին, որ տեղահանվածները անպատճառ պետք է վերադառնային իրենց բնակավայրերը, իսկ օրենքը չարաշահողները պետք է պատասխանատվության ենթարկվեին: Հարցաքննության կանչվածները գերադասեցին լռել տեղահանությանը և կոտորածներին զուգակցող զույքի և ունեցվածքի քալանցին, մշակութային արժեքների ոչնչացմանը օրինական տեսք տալու և հանցագործությունները քողարկելու նպատակով թուրքական կառավարության 1915թ. մայիսի 27-ի, սեպտեմբերի 13-ի և հոկտեմբերի 28-ի որոշումների մասին, որոնցում ներառված հողվածները հակասում էին միմյանց և չէին կարող հայերի զույքի ապահովության երաշխիք հանդիսանալ: Մինչդեռ 1915թ. հուլիսին և հոկտեմբերին տրված ՆԳՆ հրամաններով թույլատրվում էր հայերի զույքը վաճառել մուսուլմաններին, վերջիններիս տրամադրվեցին հայերի տները: Որոշ մեղադրյալներ (մեծ վեզիր Մայիթ Հալիմը, արդարադատության նախարար Իբրահիմ բեյ, արտաքին գործերի նախարար Սեմեթ Նեսիմի բեյ և այլն) վկայեցին, որ դիմել են Թալեաթին օրինախատումները կանգնեցնելու համար և որ իրենց դիմումների հիման վրա ստեղծվել են քննիչ հանձնաժողովներ՝ մեղավորներին պատժելու համար: Հանձնաժողովների կատարած աշխատանքի արդյունքների վերաբերյալ իրենց անտեղյակությունը նրանք քացատրեցին ներքին գործերի նախարարության կողմից գործի ուսումնասիրման անվերջ հետաձգումով: Ըստ էության, այդ հանձնաժողովները ձևական բնույթ էին կրում և հաճախ

հետաքրքրության արդյունքում ոճրագործ ճանաչված պաշտոնյան պատժի փոխարեն ստանում էր պաշտոնի բարձրացում:

Խորհրդարանի հարցաքննությունը անավարտ մնաց, քանի որ 1918թ. դեկտեմբերի 21-ին սուլթան Մեհմեդ VI Վահիդեդդինը լուծարեց խորհրդարանը: Հանձնաժողովը չկարողացավ ամփոփել իր եզրակացությունները և դրանք ներկայացնել խորհրդարանին, այնուամենայնիվ 5-րդ հանձնաժողովի, ինչպես նաև Անկարայի նախկին կուսակալ Մազհար բեյի պետական քննիչ հանձնաժողովի, և դաժոական լրացուցիչ հանձնաժողովների աշխատանքները նախարայլ հանդիսացան երիտթուրքերի դատավարության համար:

ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒՒԻԱ (ԵՊՀ)

ԿԱԽԱՐԴՆԵՐԻ ԹՈՉՈՂ ԱՆՈՒԸ ԵՎ ՇԱՍԱՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կախարդների մասին հին հայկական աղբյուրներում առկա են մի շարք հետաքրքրություններ կայացնող հաղորդումներ: Միջնադարյան աղբյուրներից մի քանիսը, որպես կախարդական գործիք հիշատակում են ջրով լի անոթը, որի օգնությամբ կարելի է տեղափոխվել հոգիների աշխարհ (այլ երկրներ):

Մենք արդեն փորձել ենք զուգահեռներ անցկացնել հայկական կախարդների և դասական շամանների միջև: Փաստարկներից մեկն էր հենց շամանական դափի և կախարդական անոթի/կոնճի գործառույթների մասնությունը: Դափը, ինչպես հայտնի է, մույնացվում է հեծվող կենդանու հետ (ձիու, եղջերուի), ինչպես նաև ներկայանում է որպես աշխարհի հորիզոնական և ուղղահայաց խորհրդանշանային մոդել:

Փորձենք գտնել կախարդական անոթի մասին պատկերացումների ակունքները և հետագա ձևափոխումները:

Ջրով լի, հոսող անոթի հետքերը հնարավոր է գտնել Արևելքի ամենահայտնի մշակույթներում, օրինակ՝ որպես ասորական Նաբու աստծո ատրիբուտներից մեկը, կամ հին հնդկական առասպելաբանության մեջ: Վերջինում այն մեկնաբանվում է, որպես բերրության, բեղմնավորման խորհրդանշան: Անոթի կապը հողի, մեյալների աշխարհի հետ դրսևորվում է նաև ստուպայի մեջ, որը բուդդայական մշակույթում զերեզմանային հուշարձանն է և ունի հնդեվրոպական ակունքներ: Անոթի և ստուպայի կառուցվածքը թույլ է տալիս մտածելու աշխարհի կենտրոնի, նրա ուղղահայաց եռանաս կառուցվածքը խորհրդանշող (ջրով շքապատված) ժառի, սարի մասին: Մյուս կողմից հին մշակույթներում գտնում ենք անոթի թռչելու, այլ աշխարհ տեղափոխելու հատկանիշը (ինչը երևում է, օրինակ, հին հունական կոնճների վրա պատկերած Ապոլոն աստծո հետ կապված որոշ սյուժեներից): «Անոթը» բառը տարբեր հնդեվրոպական լեզուներում կապված է այնպիսի փոխադրամիջոցի

հետ, ինչպիսին է նալը, որը առասպելաբանության մեջ ունի իր քոչող հիպոստառը: Հետաքրքրական է, որ այն առասպելաբանական աստվածությունները կամ հերոսները, որոնց ատրիբուտներից է քոչող անոթը, նալը կամ վերջինս փոխարինող ձիակառքը ունեն հատկանիշներ, որոնք նմանեցնում են նրանց շամանի կերպարի հետ, առաջին հերթին բուժելու, ապա ստորգետնյա աշխարհ (մեռյալների, հոգիների աշխարհ, հեռավոր առասպելաբանական երկիր, աշխարհի ծերը) պարբերաբար արշավելու, մեռնելու և հառնելու, ինչպես նաև հառնելու հետ մեկտեղ նոր հատկանիշներ ձեռք բերելու ունակություններ:

Նման վերլուծությունը թույլ է տալիս վերծանելու հին հայկական և ընդհանուր հնդեվրոպական (հատկապես արևելյան) շամանական առասպելաբանության կառուցվածքի որոշ գծեր և տարրերը:

ԱՆՈՒՄՅԱՆ ՍԵՆԻՆԵ (ՀՅԹԻ)

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ (1919-1920թթ.) ԸՆԹԱՅՔՈՒՄ ԵՎ ՄԱՍՈՒՈՒՄ

Մուդրոսի զինադադարի կնքումից հետո (հոկտեմբեր, 1918թ.) Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրած Օսմանյան կայսրության սուլթան Սեհմեդ VI Վահիդեդինը, Անտանտի կողմից թելադրվելիք հաշտության ծանր պայմանները մեղմելու նպատակով, հրամայեց նորընտիր վարչակազմի նախագահ Ահմեդ Իզզեթ փաշային հետաքննիչ հանձնախմբեր կազմել պատերազմի տարիների երկու վարչակազմերին պատկանող նախարարներին և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանությունն ու կոտորածները կազմակերպելու մեղադրանքների հիման վրա դատական պատասխանատվության ենթարկելու համար:

1919 թ. հունվարին կազմված ռազմական արտակարգ ատյանը նույն թվականի փետրվարից սկսեց դատավարությունը:

Թուրք փաստաբանների ասոցացիայի նախագահ Ջելալեդդին Արիֆ բեյի գլխավորությամբ ամբաստանյալների շահերի պաշտպանությունն իրականացնող 16 փաստաբաններ, ժամանակ շահելու և դատը հետաձգելու նպատակով, թե՛ դատասկզբում, թե՛ հետագա դատախոսների ընթացքում հարցականի տակ դրեցին ռազմական արտակարգ ատյանների՝ նախարարների նկատմամբ դատաքննություն կատարելու իրավասությունը՝ այն վերապահելով գեղազույն դատաբանին և իրենց առաքելությունները փորձելով հիմնավորել օսմանյան սահմանադրության մի շարք կետերով:

Պաշտպանող կողմը մասնավորապես վկայակոչում էր օսմանյան սահմանադրության 31-րդ հոդվածը, ըստ որի հանցագործությունն ի պաշտոնե կատարելու դեպքում նախարարներին դատելուն իրավագոր է միայն գերագույն դատարանը: Ըստ պաշտպանող կողմի, հանցագործության ոչ պաշտոնեական բնույթ ունենալու դեպքում անգամ գործն ընդդատյա պետք է լիներ գոյություն ունեցող քրեական և ոչ քե ռազմական ատյաններին: Որպես փաստարկ բերվում էր նաև այն հազամանքը, որ օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը, որը 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրել էր ամբաստանվող նախարարների հարցաքննությունը, որոշում էր ընդունել նրանց ուղարկել գերագույն դատարան:

Ռազմական ատյանը 1919 թ. ապրիլի 21-ին տեղի ունեցած դատալսման ժամանակ հերքեց դատապաշտպանների փաստարկները՝ ռազմական դատարանի իրավունակության վերաբերյալ: Նախ մերժվում էր հանցագործությունների՝ պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված լինելու փաստարկը, նշվում էր, որ մեղադրյալները դատվում են ոչ քե որպես նախարարներ, այլ որպես զաղամի և դավադիր կազմակերպության անդամներ (Հատուկ կազմակերպություն/Teşkilât-I mahsusa):

Ի պատասխան պաշտպան փաստաբանների՝ քրեական (ոչ քե ռազմական) ատյանի իրավասությունը պաշտպանող փաստարկի՝ ռազմական դատարանը նշեց, որ շարունակում է գործել Իսթիհատի իշխանության տարիներին հայտարարված ռազմական դրությունը, որի դեպքում, ըստ ռազմական դրությանը վերաբերող 113-րդ հոդվածի, բոլոր քաղաքացիական օրենքները ժամանակավորապես կասեցվում են:

Դատարանը նմանապես մերժեց ամբաստանյալների այն փաստարկը, ըստ որի օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը որոշում էր ընդունել նախարարներին ուղարկել գերագույն դատարան: Ըստ ռազմական դատարանի հերքման, սույթանի կողմից խորհրդարանի լուծարման պայմաններում Հինգերորդ հանձնախմբի պատգամավորների քվեարկությունը չէր կարող օրինական համարվել:

Եվ, վերջապես, մեղադրյալներին դատելու համար ռազմական ատյանին շնորհվել էր անհրաժեշտ իրավասությունը կայսերական հատուկ մի իրադեով, որն ուներ հրովարտակ-օրենքի ուժ:

1919 թ. մայիսի 4-ին՝ իր երկրորդ սեսիայի ընթացքում, դատարանը մեկ անգամ ևս հերքեց ատյանի իրավասության խնդիրը հարցականի տակ դնող փաստարկները՝ ընդգծելով, որ այդ որոշումն ընդունվել է «առանց շեղվելու Ղուրանի փառապանծ օրենքներից և լի է Աստծո նկատմամբ երկյուղածությամբ»:

Խնդիրը լուսաբանվեց և քննարկվեց նաև ժամանակակից մամուլում: Հիշատակման արժանի է հատկապես 1919 թ. Կ.Պոլսում Տիգրան Չավենի խմբագրությամբ լույս տեսնող «Ժողովուրդի ձայնը» քաղաքական-հասարակական օրաթերթը, որի էջերում հրատարակվեցին խնդիրը լուսաբանող մի

շարք հողվածներ: Այսպես, 1919 թ. ապրիլի 20-ի համարում ռազմական ատյանի իրավասության խնդրի շուրջ իրենց տեսակետն են արտահայտել երկու նշանավոր իրավագետներ: Առաջինը, որը ցանկացել էր գաղտնի պահել իր անունը, շեշտում էր մեղադրյալների ոչ թե որպես նախարար, այլ իբրև գաղտնի կազմակերպության անդամ դատվելու հանգամանքը: Նույն կերպ էր խնդիրը բացատրում նաև երկրորդը, որը ֆրանսիացի հայտնի փաստաբան Սեզար Պոնիեն էր:

Օրաքերքի հաջորդ համարում հայ հայտնի իրավաբան Հնայակ Խոսրովյանը հարցը քննելիս համեմատական օրինակներ էր բերում ֆրանսիական իրականությունից՝ նշելով, որ նախարարներին դատելու իրավասությանը վերաբերող համանման օրենք գոյություն ուներ նաև ֆրանսիական սահմանադրության մեջ, սակայն օրենքը ոչ թե պարտադրում էր, այլ կարելիություն ենթադրում: Գալով թուրքական սահմանադրությանը՝ հայ իրավաբանը պաշտպան փաստաբաններից պահանջում էր իրեն ներկայացնել որևէ բացառիկ օրենք, ըստ որի սովորական դատարաններն իրավասու չեն դատելու նախարարներին: Որպես վերջնական փաստարկ, Հ. Խոսրովյանը բերում էր իբրև հատկանշանքի օրոք հայտարարված և դեռևս շարունակվող ռազմական դրությունը, որը կասեցնում էր քաղաքացիական, այդ թվում և սահմանադրական բոլոր օրենքները:

Ինչևէ, խնդիրը իրավաբանական բնույթ էր կրում, այնուամենայնիվ պետք է նշել, որ պաշտպան փաստաբանների կողմից բերված նախարարների ի պաշտոնե կատարած հանցագործության փաստարկը համապատասխանում էր իրականությանը. չնայած տեղահանության և կոտորածների նախնական որոշումներն ընդունվել էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղտնի նիստերում, սակայն բռնազարթի և ջարդերի պատասխանատվությունն ընկնում էր ամբողջ պետական ապարատի վրա, քանի որ «Տեղահանության մասին» օրենքը հաստատվել էր նախարարական և պետական խորհուրդների կողմից, այն վավերացրել էր նաև օսմանյան խորհրդարանը:

ԱՄԱՅՆՆԵՐ ՆԱԻՐԱ (ԱԻ)

ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՂԱՆԱՅԻ 1909թ.
ԻՐԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1908թ. երիտթուրքերն անցնելով իշխանության գլուխ, սկսեցին իրականացնել իրենց բուն ծրագրերը կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, որը պետական քաղաքականության մակարդակի բարձրացրեց ազգայնամտությունը: Երիտթուրքերի ծրագրի իրականացման առաջին նախանշանը 1909թ. գարնանը Կիլիկիայի քաղաքների, մասնավորապես, Ադանայի հայ ազգաբնակչության կոտորածն էր:

Աղանայի երկվուկ կոտորածը, որին նոր վարչակարգի պայմաններում գոն գնացին մեծ թվով հայեր, կազմակերպվել և հրահանգավորվել էր երիտ-թուրքերի կողմից, թեև վերջիններս փորձեցին մեղքը բարդել սկզբում Աբդուլ Համիդ II-ի կողմնակիցների վրա՝ օգտագործելով այն հանգամանքը, որ Աղանայի ջարդերը համընկան Մտամբուլում սուլթանի կազմակերպած հեղաշրջմանը, այնուհետև հայ քաղաքական կուսակցությունների վրա՝ մտացածին մեղադրանք հարուցելով, թե նրանք պատամբություն նախապատրաստելու պատճառով սանձաձարվել են տեղական իշխանության զորամասերի և մահմեդական բնակչության կողմից:

Փաստորեն, Աղանան դարձավ երիտթուրքերի՝ Թուրքիան միատարր ազգային պետության վերածելու արմատական ծրագրի մի փորձաքար:

Ամենամեծ ապացույցը, որ Երկրորդ սահմանադրության հռչակումը չփոխեց կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների վիճակը, Օսմանյան պատլամենտի դիրքորոշումն էր Աղանայի դեպքերի ճշմարտությունն երևան հանելու ուղղությամբ:

Խորհրդարանի հայ երեսփոխանները դեպքի հենց առաջին օրերին իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին ընդդեմ անօրինությունների և միաձայն Իթքիհատից պահանջեցին հայտարարել, որ Աղանայի գործում հայերը բացարձակապես անմեղ են: Միևնույն ժամանակ նրանք հանդես եկան հանցագործներին պատժելու և պատասխանատվության ենթարկելու, տուժածներին նյութական օգնություն ցույց տալու պահանջներով:

Մեջլիսը, քննարկելով Աղանայի ջարդի խնդրո շուրջ երեսփոխանների կողմից ներկայացրած *բարբիոր* (զեկուցագիրը), մի շրջաբերական հետազոտ ուղարկեց Աղանայի բոլոր կուսակալներին ու կառավարիչներին՝ ամեն հնարավոր միջոցներով աղետը կասեցնելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու պահանջով:

Հաշվի առնելով դեմոկրատական շրջանակների արձագանքը, ինչպես նաև ջարդի առնչությամբ հայ խորհրդարանականների պահանջները, երիտթուրքերը հարկադրված կազմեցին չորս հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողով՝ Օսմանյան պառլամենտի պատգամավոր Հակոբ Պապիկյանի զլխավորությամբ: Վերջինիս կողմից կազմած տեղեկագիրը, որն այդպես էլ երևան չհանվեց, մի շարք փաստերով հաստատում էր Իթքիհատի անդամների անմիջական մասնակցությունը Աղանայի կոտորածներին:

Հիմնվելով կառավարության կողմից Աղանա ուղարկված քննիչ հանձնախմբերի պատրաստած տեղեկագրերի և այլ տեղեկատվության վրա, 1909թ. օգոստոսին Օսմանյան մեջլիսը հրապարակեց մի հայտարարություն, որը պետական պաշտոնաթերթ «*Takvimi Vekâyi*»-ի հուլիսի 31-ի համարում հրատարակվեց իբրև նախարարական շրջաբերական և ուղարկվեց գավառային իշխանություններին: Վերոհիշյալում, իբրև եզրակացություն, հաստատվեց հայերի անմեղությունը: Սակայն մի շարք իրողություններ ընդգծում են բուրք կառավարության կողմից արված այս զուսպ հայտարարության բացառիկ

կարևորությունը, քանի որ ոչ մի ակնարկություն չի արվում, թե ովքեր են իրական մեղավորները: Հարկ է նշել, որ դա բացառիկ երևույթ էր. օսմանյան կառավարությունը պաշտոնական խոստովանություն էր անում և վաբախմբի պատասխանատուները պատժվում էին քրիստոնյաներին, մասնավորապես, հայերին կոտորելու համար:

Չնայած խորհրդարանում կազմվեց զեկուցագիր՝ Ադանայում ռազմական վիճակ հայտարարելու, պետական պաշտոնյաններին ու տեղական ազդեցիկ անձանց (այդ թվում նաև կուսակալ Ջևադ բեյին և ներքին գործերի նախարարի խորհրդական Ատիլ բեյին) ռազմական ատյանի առջև դատելու վերաբերյալ, սակայն այն մնաց զուտ որպես ձևակերպում և գրեթե չգործադրվեց:

Հակառակ հայ երեսփոխանների բողոքներին, Ադանայի ջարդի քննության հարցը այդպես էլ չդարձավ քննարկման առարկա, թեև վերջիններիս և, հատկապես, Գր.Չոբրայի համառ ջանքերի շնորհիվ, Երեսփոխանական ժողովի 66-րդ նիստի որոշման համաձայն՝ 20 հազար ոսկի նպաստ ուղարկվեց Ադանայի տուժածներին: Հետագայում քննարկման առարկա դարձան նաև այլ փոխառություններ ու վարկեր տրամադրելու մի շարք խնդիրներ:

Փաստորեն, դրանով դրսևորվեց թուրքական քաղաքականությանը բնորոշ գծերից մեկը՝ նման հայտարարություններով իրական փաստերը քողարկելու երևույթը, ինչը առկա է նաև մեր օրերում:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ԱԻ)

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Ազգային ինքնությունը երկրի արտաքին և ներքին քաղաքականության կարևոր գործոններից է: Ամենաընդհանուր ձևով այդ հասկացության տակ ընդունված է հասկանալ որևէ պետությանը կոլեկտիվ պատկանելիության, այն է՝ կոնկրետ երկրի քաղաքացիների՝ անցյալի, ներկայի և ապագայի ընդհանրության զգացումը:

Այս առումով, թուրքական ազգային ինքնության կարևոր առանձնահատկություններից են, մեր կարծիքով, սեփական անցյալի մասին պատկերացումները և արտաքին աշխարհի նկատմամբ վերաբերմունքը: Այդ գործոնի հիմքը կազմում են թուրք ժողովրդի հարաբերությունները իրենց հարևանների և աշխարհի մեծ տերությունների հետ: Եթե Օսմանյան կայսրությունը սկզբից որդեգրեց Արևմուտքին հակադրվելու և անգամ այն նվաճելու մտտեցումը, փորձելով ներքին խնդիրները ենթարկեցնել արտաքին հարցերին, որի արդյունքում այն ի վերջո փլուզվեց, ապա ժամանակակից Թուրքիայի

Հանրապետությունը նախընտրեց կենտրոնանալ ներքին խնդիրների լուծման վրա և միաժամանակ ինտեգրվել Արևմուտքի հետ:

Նորաստեղծ հանրապետությունը դիտվեց որպես օսմանյան անցյալից, նրա արատավոր շրջանից ազատվելու լավագույն ուղի, և Թուրքիայի Հանրապետության հիմնադրումը հռչակվեց որպես բուրքական պատմության «զրոյական կետ»: Անցյալի հետ այդ արմատական խզման էական հատկանիշ դարձավ հասարակական գիտակցության զտումը: Այդ գիտակցությունը պետք է ծառայեր որպես մաքուր թերթ (tabula rasa), որի վրա կդրոշմվեր նոր բուրքական պետության հիմնարար գաղափարախոսությունը: Սակայն ազգային ինքնության չափազանց ազդեցիվ դրսևորումը երկրի ներսում և արևմտյան քաղաքակրթության հետ ներհյուսման փորձը հանգեցրին ներքաղաքական անկայունությանը, որն արտահայտվեց Թուրքիայում քրդական հարցի շիկացման և ազգայնական ու իսլամիստական ուժերի ակտիվացման տեսքով: Եվ այն բոլոր սոցիալական, տնտեսական ու ժողովրդագրական պրոբլեմները, որոնք ապրում է այսօր Թուրքիան, իրենց արմատներն ունեն հենց այդ երկվության մեջ:

Այսպիսով, բուրք ժողովրդի ազգային ինքնությունը մինչև XIX դար արտահայտվում էր «մեծ տերություն» կամ «կայսրություն» ընկալման մեջ, իսկ Առաջին աշխարհամարտից հետո այն վերածվեց երկրորդական նշանակություն ունեցող, սակայն տարածաշրջանային առաջնորդության հավակնող պետության ընկալմանը: Օսմանյան կայսրության գաղափարակիր բուրքական էքնոսը իր մեջ ուժ գտավ հրաժարվելու կայսրական գաղափարից՝ վերջնականապես ճշտելով իր տարածքը, որի պահպանմանն ու զարգացմանը ուղղեց սեփական եռանդն ու ներուժը՝ պահպանելով տեսանելի ապագայում որպես ուժեղ պետություն վերականգնվելու հնարավորությունը: Դրանով նոր ազգային ինքնության և միջազգային փորձի ու ձեռքբերումների համադրման արդյունքում Թուրքիան, որպես տարածաշրջանային պետություն շոշափելի դիրքեր նվաճեց արդի աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական համակարգում:

Այնուամենայնիվ, այսօր Թուրքիայի առջև ծառայած գլխավոր ներքին հիմնահարցը հետևյալն է. ինչպիսի նախադրյալների վրա է հիմնված նրա՝ որպես ընդհանրության (պետության) գոյությունը: Թուրքիան այժմ կանգնած է մի խաչմերուկում և պետք է սկսի նոր սեփական «եսի» որոնումը: Այդ ճգնաժամը ուժեղանում է նաև արտաքին գործոնների ազդեցության ներքո: Այսպես, 1970-1980-ականներին սկսած՝ անգամ երկրի կառավարող վերնախավը, որը կողմնորոշված էր Արևմուտքի հետ ավելի սերտ ինտեգրմանը, գիտակցում էր, որ Թուրքիայի դերը արդի զարգացած պետությունների համակարգում մնալու է երկրորդական: Այդ պատճառով որոշակի միջոցներ ձեռնարկվեցին սկզբից իսլամական աշխարհի հետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ, իսկ 1990-ական թթ.՝ Թուրքիան իր շուրջ տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունների հետևանքով ստիպված էր կրկին վերանայել իր

ազգային ինքնությունը, ջանքեր գործադրել Անդրկովկասում ու Կենտրոնական Ասիայում աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ազդեցության տարածման ուղղությամբ: Որպես այդ քաղաքականության արդյունք՝ 1980-1990-ականներին ճակերպվեց թուրքական արտաքին քաղաքական դոկտրինի նոր կարևոր տեսական հիմնադրույթը, որի համաձայն՝ նա պետք է կանոնադրի դեր ստանձնե՛ր Արևմուտքի և իսլամական աշխարհի միջև:

Թուրքական իշխող ղեկավարները մոտ այսօր առկա է սպազայի վերաբերյալ երկու տեսիլք՝ կամ հարկավոր է հանրապետության այսօրվա տեսնանքում առաջ գնալ ժողովուրդավարացման ուղիով և սերտացնել կապերը Արևմուտքի հետ, կամ էլ փորձել իրականացնել նորից մեծ տերություն դառնալու երազանքը՝ վերակենդանացնելով կապերը Կենտրոնական Ասիայի և Անդրկովկասի թյուրքալեզու ժողովուրդների հետ: Նրանից, թե որ ինքնությունը ավելի կենսունակ կլինի, կախված է ժամանակակից զարգացող, գլոբալիզացվող և արդիականացվող աշխարհի ետմաքենում Թուրքիայի տեղի և դերի ամրագրման խնդիրը:

ԳՆՈՒՆԻ ԱՐՏԱԿ (ՀԱԻ)

ՇԵՆԳԱՎԻԹՅԱՆ (ՔԻՐԲԵԹ ՔԵՐԱԿՅԱՆ) ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻՐԻԱ,
ՊԱՂԵՍՏԻՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼ ԹԱՓԱՆՅԱՆ ՇՈՒՐՁ

Շենգավթյան (քիբբեթ քերակյան) մշակույթը Սիրիայում, Պաղեստինում և Իսրայելում հաստատագրված է մոտ 100 բնակավայրերում: Վերջին տասնամյակներին այստեղ պեղումները թույլ են տալիս որոշակիացնել Սիրիա Պաղեստին և Իսրայել շենգավթյան մշակույթի քափանցման ժամանակը, եղանակը և փուլերը:

1. Զ.ա. IV-III հազ. սահմանագլխով քվազրվող Հյուսիսային Սիրիայի Թել Ջուդայիդահ բնակավայրի G հորիզոնում հայտնաբերված է մի շինություն, որն իր հատակագծով մնան է կուր-արաքսյան մշակույթի կառույցներին (Մոխարբուր, Նորաբաց, Բորիսպուրեփե): Թել Ջուդայիդահի G հորիզոնում շենգավթյան տիպի խեցեղենը բացակայում է, սակայն այն հայտնաբերված է դեպի հարավ ընկած Թել Ջուդայիդահի G-ին համաժամանակյա Ուզարիթ (III A1), Մեզիդո (XIX-XVIII) բնակատեղիներում:

2. Զ.ա. XXVIII-XXVII դդ. քիբբեթ քերակյան խեցեղենն ի հայտ է գալիս Թել Ջուդայիդահի H, Փուբթիի XI-VIII, Երիքուլի D-E, Բեթի Շանի XII-XI, Քիբբեթ էլ Քերակի IV, Ուզարիթի III A1, Համայի K1, Էբլայի II A հորիզոններում, Թաբարթա էլ Աքրադում: Դարտարապետությունը, բնորոշվում է ուղղանկյուն աղյուսաշեն կացարաններով:

3. Մի շարք հուշարձաններում (Համա, Թաբարթա էլ Աքրադ) քիբբեթ քերակյան հորիզոնները զատվում են նախորդներից մոխրի հաստ շերտերով,

ինչը վկայում է ավերածությունների մասին: Սակայն Թեյ Ջուդայիդահուն ան-
ցումը չի գուգորդվում ավերածությունների հետքերով, ինչը վկայում է նշված
մշակույթի խաղաղ քափանցման մասին:

4. Շենգավթյան խեցեղենի պարունակող բնակավայրերը Պաղեստին-
նում և Իսրայելում հիմնականում տեղադրված են Հորդանան գետի արևմտյան
ափին և Գազայի հովտում: Դեպի արևելք և հարավ ընկած հուշարձաններում
շենգավթյան տիպի խեցեղենի գտածոները նվազում են: Մեր կարծիքով, դրա
պատճառներից մեկը տվյալ տարածաշրջանում աճող եգիպտական ազդե-
ցությունն էր:

Եգիպտական ազդեցությունը Սինա քերակղզում և Լիբանանում հաս-
տատագրված է դեռևս Վաղ քազավորության I-II դիմաստիանների օրոք (Ք.ա.
IV-III հազ. սահմանագլուխ): Դեռևս II դիմաստիայի փարավոններ Ուաիֆերը և
Սիմերխեսը պարբերաբար պատերազմում էին Սինայի հարավ-արևմուտքում
գտնվող պղնձի հանքավայրերը տիրելու համար: Ք.ա. XXVII-XXV դդ. և
եգիպտական ազդեցությունը Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում խիստ
ակներև է: Ջուեր և Սնուֆուու փարավոնները (Հին քազավորության III
դիմաստիա) մի քանի արշավանք են ձեռնարկել դեպի Սինա քերակղզի: Բիբ-
լոսում հայտնաբերված են Քեուփա և Մենկատրա փարավոնների անուններով
սալիկներ: Եգիպտական փարավոններն անվանվում էին Բիբլոսի տիրա-
կալներ և Լիբանանի աստվածներ: Սիրիայում և Պաղեստինում եգիպտական
ազդեցությունն արտացոլված է Այ, Բիբլոս, Սեզիդո, Երիքով, Բեթի Շան, Թեյլ
Ջուդայիդահ բնակավայրերից հայտնաբերված խեցեղեն նյութում և աշխա-
տանքային գործիքներում: Պաղեստինի մկատմամբ Հին քազավորության
փարավոնների հետաքրքրությունը բացատրվում էր նաև դեպի Լիբանան
ճանապարհի վերահսկողության անհրաժեշտությամբ:

5. Ք.ա. XXVIII-XXVII դդ. են քվազրվում Պաղեստինում են Այ (Էլ
Թեյլ) բնակավայրի A-B հորիզոնները: Նշված հորիզոններում շենգավթյան
մշակույթը ներկայացված է խեցեղենի առանձին նմուշներով, եգիպտականը՝
մի շարք վարչական և պաշտամունքային շինություններով և խեցեղենով:

6. Այ բնակավայրի VII-VIII հորիզոններում քիբբեթ-քերական
խեցեղենի հետ մեկտեղ հայտնաբերվել են կտցավոր կացիններ, որոնք իրենց
գուգահեռներն ունեն Տրոյայի II հորիզոնում: Նման տիպի կացին պատկերված
է Նարան-սինի կոթողին, ինչպես նաև հայտնաբերված է Գյումրիից,
Արավերոց, Գմանիսիից: Հետևաբար Այ բնակավայրի նշված հորիզոնները,
ինչպես նաև համաժամանակյա հուշարձանները (Ամուկի I, Երիքովի C-B,
Բեթի Շանի XII, Զիբբեթ Էլ Քերակի III, Սեզիդոյի XVI հորիզոնները, Համայի
IV դամբարանը) քվազրվում են Ք.ա. III հազ. երրորդ քառորդով:

7. Ք.ա. XXIII դ. շենգավթյան մշակույթը Սիրիայում և Պաղեստինում
անհայտանում է՝ ներկայացված լինելով Թեյլ Ջուդայիդահի J հորիզոնում
ընդհանրում մի քանի բեկորներով:

Այսպիսով, նկատի ունենալով վերոնշյալ տվյալները, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

ա) շենգավիթթյան մշակույթի առավել վաղ հետքերը քվագրվում են Բ.ա. III հազ. սկզբով,

բ) շենգավիթթյան մշակույթը Միջերկրական ծովի որևէյան ավազանում լայնորեն տարածվում է Բ.ա. XXVII-XXV դդ. բախման մեջ մտնելով եգիպտական ազդեցության հետ, ինչով բացատրվում է քիբբեք-քերական խեցեղենի բացակայությունը Սինա քերակկղզում և Լիբանանում,

գ) Շենգավիթթյան մշակույթի ավանդույթները նշված տարածաշրջանում մարում են Բ.ա. XXIII դ., կապված Հայկական լեռնաշխարհում տվյալ մշակույթի հանգչման, ինչպես նաև արքադական առաջխաղացման հետ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ. (ԱԻ)

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐՏԱԶԻՆ ԲԱՂԱԶԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ներկայացվող խնդրին ուսումնասիրողներից անդրադարձել են Բ. Շթայնը, Ու. Քուանթը, Յ. Մեյթալը, Ռ. Մաթլոֆը, Փ. Բլաուզոնը, Գ. Գուչետը, Ի. Չվեագելսկայան, Ա. Վասիլևը, ինչպես նաև՝ արաբ հեղինակներ Մուհամմեդ Հասան ազ-Չայաթը, Մուրադ Հալեթը, Մուֆիդ Շեհաբը և այլք:

1981թ. հոկտեմբերի 14-ին գալով իշխանության՝ Մուհամմեդ Հոսնի Մուբարաքը Եգիպտոսում հիմք է դնում արտաքին քաղաքականության նոր հայեցակարգի ձևավորմանը: Երկար տարիներ Իսրայելին հակադրող արաբական պետություններից ամենակարևորը Եգիպտոսն էր, շնորհիվ իր քաղաքական, ռազմական, տնտեսական ներուժի և աշխարհագրական դիրքի:

Անվար Սադատի իշխանության տարիներին Եգիպտոսը, Իսրայելի հետ կնքելով Քենդի-Դեկդի հաշտության համաձայնագիրը 1979թ., կորցրեց իր երբեմնի դերը: Արաբական գրեթե բոլոր պետությունները խզեցին Եգիպտոսի հետ դիվանագիտական կապերը, դադարեցվեց նրա անդամակցությունը Արաբական պետությունների լիգային (ԱՊԼ) և Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը (ԻԿԿ): 1981թ. հոկտեմբերի 6-ին Ա. Սադատի սպանությունից հետո երկրի նախագահի պաշտոնը ստանձնում է Հ. Մուբարաքը, որը, հայտարարելով Սադատի քաղաքական ուղեգծին անվերապահորեն հետևելու վճռակալությունը, մինևույն ժամանակ արտաքին քաղաքականության մեջ առաջ քաշեց նոր սկզբունքներ և մտեցումներ: Հ. Մուբարաքը, իր արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Ռոսամա ալ-Բազի անմիջական մասնակցությամբ, մշակեց «զգուշորեն արաբական ընտանիք վերադառնալու» Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր ուղին, որը հանգում է հետևյալ կարևոր սկզբունքներին.

1. Քենփ-դևիդյան համաձայնագրի շրջանակներում հետամուտ լինել պաղեստինցիների համար անկախ պետականության ստեղծմանը:

2. Շարունակել համագործակցությունը ԱՄՆ-ի հետ, վերականգնել հավասարակշռված հարաբերությունները մնացած բոլոր պետությունների և առաջին հերթին գերտերություն ԽՍՀՄ-ի հետ:

3. Շարունակել Իսրայելի հետ հարաբերությունների «կարգավորման գործընթացը», հաղթահարել արաբական մեկուսացվածությունը և վերականգնել Կահիրեի վճռորոշ դերը արաբական աշխարհում:

4. Ազգային շահերից ելնելով՝ տարափոխել և բազմաբնույթ դարձնել ստացվող օգնության աղբյուրները:

5. Հետևել չմիասնալու քաղաքականության սկզբունքներին և խոչընդոտել ռազմական բռնկների ստեղծման նախաձեռնությունները:

Փաստորեն, արտաքին քաղաքականության մեջ պահպանելով Քենփ-դևիդի «տառը», սակայն փոխելով նրա «օգին», Մուբարաքը ձգտում էր համադրել Գամալ Աբդել Նասերի համաարաբական և ազգայնական գաղափարները Անվար Մադաթի քաղաքական մոտեցումների հետ:

Մուբարաքն իր արտաքին քաղաքական հայեցակարգը իրականացնելու համար կարողացավ հմտորեն օգտագործել Մերձավոր Արևելքում ստեղծված իրավիճակը՝ կապված իրաքա-իրանյան պատերազմի հետ, որը պատակտել էր արաբական պետությունները երկու ճամբարի: Բացի այդ, 1980-ականների սկզբին պաղեստինյան հարցի փակուղի մտնելը վերաբժեվորեց Եգիպտոսի դերը խնդրի լուծման գործում:

Ահա այս հայեցակարգի ձևավորումը հիմք դարձավ 1980-ականներին Եգիպտոսի քաղաքականության մեջ հետևյալ կարևորագույն ձեռքբերումների համար: 1982թ. Իսրայելը Եգիպտոսին վերադարձրեց 1967թ. զբաղված Մինայի թերակղզու մի մասը: 1983թ. Եգիպտոսն ընդունվեց ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի անդամ, նույն թվականին վերականգնվեցին հարաբերությունները Պաղեստինի Ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) հետ, իսկ հաջորդ տարում՝ ԽՍՀՄ-ի: 1984-89թթ. ընթացքում վերականգնվեց Եգիպտոսի անդամակցությունը ԻԿԿ-ին, ինչպես նաև՝ ԱՊԼ-ին, դիվանագիտական հարաբերություններ վերահաստատվեցին Հորդանանի, Սաուդյան Արաբիայի, Ջիբրութի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Քուվեյթի, Իրաքի, Բահրեյնի, Կուտարի, ԵԱՀ-ի, Մարոկկոյի, Մավրիտանիայի, Սյրիայի, Լիբանանի և մնացած արաբական պետությունների հետ: Մուբարաքը ընտրվեց Աֆրիկյան միասնության կազմակերպության նախագահ: 1980-ական թ. նոր ելիքների վրա դրվեց համագործակցությունը Եգիպտոսի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի և Ճապոնիայի միջև:

Այդպիսով, արտաքին քաղաքականության մեջ, կիրառելով նոր սկզբունքներ և հիմնվելով իր դիվանագիտության կարևոր հատկանիշների վրա՝ զգալիություն, չափավորություն, պրագմատիզմ, հետևողականություն, Մուբարաքը

կարողացավ վերականգնել Եզիպտոսի որոշիչ դերը արաբական աշխարհում և նորովի ներկայացնել իր պետությունը միջազգային հարաբերություններում:

ԴԵՄՈՅԱՆ ՀԱՅԿ (ԵՊՀ)

**ՂԱՐԱԲԱԳՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ
ԱՐԵՎԱՏՅԱՆ ՁԼՄ-ՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՍԻ**

Անվիճելի է, որ ՁԼՄ-ները որոշակի դեր են կատարում էթնիկ հակամարտությունների կարգավորման, և ընդհակառակը՝ դրանց բորբոքման և հակամարտող կողմերի մոտ անհանդուրժողական տրամադրությունների սրման գործում: Պատերազմների և էթնիկ հակամարտությունների ժամանակ մամուլի ունեցած դերի և նշանակության վերաբերյալ Արևմուտքում հրատարակվել են մեծ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքներ:

Դեռ դարաբաղյան շարժման սկզբնական փուլում մամուլի, հատկապես, կենտրոնական հրատարակումների նկատմամբ թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական կողմը որոշակի զգացմունքային վերաբերմունք ուներ: Այս առումով խորհրդային մամուլի, հակամարտության հետագա ծավալման գործում խաղացած դերի և հրատարակումներում հեղինակների մոտեցումների էվոլյուցիան որոշակի հետաքրքրություն է ներկայացնում իրադարձությունների զարգացումն ուսումնասիրելու տեսանկյունից:

Խորհրդային մամուլի ու հեռուստատեսության առաջին հաղորդագրությունները Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ աչքի չէին ընկնում իրենց վերլուծական բովանդակությամբ և ավելի շատ ուղղված էին «կոծկելու» իրականությունը և փնտրելու մեղավորների՝ երկուստեք կողմերից: Դա հատկապես ակնառու էր Սումգայիթում կազմակերպված հակահայկական ջարդերը լուսաբանելու ժամանակ: Ավելի ուշ խորհրդային մամուլի էջերում փորձեր էր կատարվում իրադարձությունների վերլուծությամբ բացահայտել հակամարտության պատճառները, շարժիչ ուժերը և տալ որոշակի եզրահանգումներ: Որպես կանոն, այս հրատարակումները հակված էին ստեղծելու որոշակի հավասարակշռություն հակամարտող կողմերի միջև, փորձելով գտնել համարժեք դեպքեր և իրադարձություններ երկուստեք կողմերում:

Դատապարտելով «ազգայնամոլական» բնույթ կրող հանրահավաքները և մերժելով արցախահայության արդարացի պահանջները, խորհրդային ՁԼՄ-ներում տեղ գտած հրատարակումները, որպես կանոն, գտնում էին, որ վերակառուցման քաղաքականության օրոք տեղ չկա սահմանները վերածնելու և այլ կարգի «ազգայնամոլական» պահանջների:

Նույն շրջանում արևմտյան ՁԼՄ-ներն իրենց ուրույն մոտեցումներն ու գնահատականներն էին տալիս դարաբաղյան խնդրի հիմնապատճառների ու

զարգացման շուրջ: Այսպես, եթե խորհրդային մամուլում համարյա չէր հիշատակվում հակամարտող կողմերի դավանական պատկանելիությունը, ապա արևմտյան առաջին հրապարակումներում հակամարտող կողմերի ներկայացման ժամանակ շեշտվում էր հայերի քրիստոնյա և աղբյուրագիտների մահմեդական լինելը: Ընդ որում, ի տարբերություն խորհրդային հրապարակումների, արևմտյան մամուլը հիշատակում էր նաև երկու ժողովուրդների միջև գոյություն ունեցող պատմական անհանդուրժողականության և նախկինում տեղ գտած ազգամիջյան բախումների փաստերը:

Ուսումնասիրվող քեմայի համատեքստում հետաքրքիր է նաև խորհրդային և արևմտյան ԶԼՄ-ների՝ դարաբաղյան հիմնահարցի շուրջ տարվող «տեղեկատվական պատերազմի» դրսևորումները, որոնք անշուշտ պետք է դիտել որպես սառը պատերազմի վերջին շրջանում Արևելք - Արևմուտք դիմակայության դրսևորումներից մեկը:

ԹԱԹՈՅԱՆ ՈՌՔԵՐՏ (ՀՅԹԻ)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱԶԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ (XIX ԴԱՐԻ 60-90-ԱԿԱՆ ԹԹ.)

1853-56թթ. Գրիմի պատերազմից հետո Մեծ Բրիտանիայի հետաքրքրությունը Օսմանյան կայսրության արևելյան նահանգների նկատմամբ կտրուկ աճում է: Բրիտանական դիվանագիտությունը նախ կարևորվում էր Արևմտյան Հայաստանի ռազմաստրատեգիական դիրքը, որպես Օսմանյան կայսրությունում Անգլիայի հիմնական աշխարհաքաղաքական հակառակորդ Ռուսաստանին սահմանակից երկրամաս, ապա նաև նրա տնտեսական նշանակությունը անգլիական արդյունաբերության և առևտրի զարգացման համար՝ որպես առևտրական ճանապարհների խաչմերուկ, անգլիական տարանցիկ առևտրի հանգուցային կետերից մեկը:

Բացի Կոստանդնուպոլսում Անգլիայի դեսպանից Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան քաղաքականության իրականացումը դրված էր Օսմանյան կայսրության վիճակներում նշանակված անգլիական հյուպատոսների վրա: Արևմտյան Հայաստանում անգլիացիների հիմնադրված հյուպատոսական ծառայությունը պաշտոնապես անվանվում էր Զուրդխտանի հյուպատոսություն և իր մեջ ներառում էր Էրզրումի և Դիարբեքիրի վիճայեցները: Հյուպատոսության նստավայրն էր Էրզրում քաղաքը: Զուրդխտանի հյուպատոսի վրա դրված էր, մասնավորապես, Արևմտյան Հայաստանում տիրող սոցիալական և քաղաքական վիճակի, ազգաբնակչության ընդհանուր քվաքսնակի, ազգային կազմի և տարբեր էթնիկական խմբերի ներսում առկա

քաղաքական տրամադրությունների մասին տեղեկություններ հավաքելու և Լոնդոն ուղարկելու պարտականությունը:

Բրիտանական դիվանագիտական փաստաթղթերում գետնոված էր գրումի, Վանի և Բիթլիսի առաջին ընդհանրական վիճակագրությունը վերաբերում է 1863թ.: Ըստ այդ վիճակագրության, որը Ֆոքին Օֆիս էր ուղարկել անգլիական հյուպատոս Ռոբերտ Դելիելը, Էրզրումի վիլայեթի բնակչության ընդհանուր բիլլը կազմում էր 1 260 514 մարդ, որից 791 746-ը իսլամադավան էին, իսկ 409 028-ը ոչ մահմեդական ազգաբնակչությունն էր:

Ավելի մանրամասն են Արևմտյան Հայաստանին վերաբերող վիճակագրական տվյալները, որոնք բերված են 1869թ. գարնանը Արտաքին գործերի նախարար կոմս Քլարենդոնին հասցեագրված Քուրդիստանի հյուպատոս Ջ. Գ. Թեյլորի ընդարձակ զեկույցում:

Ինչպես ցույց է տալիս օսմանյան և քրիտանական վիճակագրությունների համեմատությունը, Դելիելը և Թեյլորը իրենց ընդհանրական վիճակագրական աղյուսակները կազմելիս, ինչպես ընդհանուր քրիստոնյա տարրի քվաքանակի որոշման հարցում, այնպես էլ հայ ազգաբնակչության քվաքանակը ներկայացնելով, որպես հիմք ընդունել են քուրդական դևեթների (սալմամեների) տվյալները:

Անգլիական դիվանագիտության հետաքրքրությունը Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ընդհանուր քվաքանակի, նրա էթնիկական կազմի նկատմամբ աճում է Բեռլինի 1878թ. վեհաժողովի ավարտից անմիջապես հետո, երբ միջազգային դիվանագիտության ասպարեզ է մտուք գործում Հայական հարցը: Կիպրոսի կոմվենցիայով Անգլիան հնավորություն ստացավ ուղղակիորեն, շրջանցելով մյուս մեծ տերություններին, ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա Արևմտյան Հայաստանի վիլայեթներում բարենորոգումների իրականացման հարցում: Անգլիայի արտգործնախարարությունը, գտնելով, որ բարեփոխումների հաջող իրագործման համար անհրաժեշտ է պարզել Արևմտյան Հայաստանի ազգագրական և ժողովրդագրական իրավիճակը, արևելյան վիլայեթների իր հյուպատոսներին և փոխհյուպատոսներին նոր հանձնարարականներ է տալիս մանրամասն ուսումնասիրել երկրի տեղագրությունն ու աշխարհագրությունը, բնակչության քվակազմն, սովորույթներն ու տրանսդրությունները:

1878թ. հոկտեմբերին Էրզրումում Մեծ Բրիտանիայի նոր հյուպատոս է նշանակվում Հենրի Թրոտտերը: Թրոտտերի և 1879թ. ապրիլին Անատոլիայում Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոս նշանակված զեդասպետ Վիլսոնի վրա դրվեց Արևմտյան Հայաստանի բնակչության վիճակագրության պատրաստման գլխավոր պատասխանատվությունը: Հրապարակում առկա վիճակագրական նյութերի հավաքման և Կ.Պոլսի դեսպանություն ուղարկման գործում մեծ է նաև Վանում և Տրապիզոնում անգլիական փոխհյուպատոսներ կապիտան Էմիլիոս Քլայթոնի և Ալֆրեդ Բիլիոթիի, բարեփոխումների հանձ-

նաժողովում անգլիական ներկայացուցիչ լեյտենանտ Հերբերտ Չերնսայդի և այլ պաշտանյաների ավանդը:

1880թ. գարնանը պառլամենտական ընտրությունների արդյունքում իշխանությունը Մեծ Բրիտանիայում անցնում է լիբերալ կուսակցությանը՝ Գլադսթոնի ղեկավարությամբ: Կ. Պոլսում Անգլիայի նոր դեսպան է նշանակվում Ջորջ Գոշենը: Գոշենի և նրան 1881թ. հունիսին փոխարինած կոմս Դաֆֆերինի օրոք նոր քննիչ է ստանում Փոքր Ասիայում անգլիական հյուպատոսների աշխատանքը վիճակագրական տեղեկությունների հավաքման և վերլուծության ուղղությամբ:

Համաձայն Գոշենից ստացած բանավոր առաջադրանքի՝ Թրոտտերը իր ձեռքի տակ առկա նյութերից կազմում է դեսպանի ուշադրությանն է ներկայացնում Արևմտյան Հայաստանի բնակչության բաղդատական աղյուսակներ՝ ըստ իրենց տրամադրության տակ եղած տարբեր աղբյուրների:

Թրոտտերը և Վիլսոնը իրենց վիճակագրական աղյուսակները կազմելիս օգտագործում էին հետևյալ չորս աղբյուրները՝

1. Կ. Պոլսի հայոց պատրարքարանի և տեղական հայ հոգևորականության տվյալները,
2. Օսմանյան պաշտոնյաների կողմից ստացած տվյալները և հրապարակված տարեգրքերից (սալնամեններից) քաղված տեղեկությունները,
3. տարբեր անհատների հաշվարկները,
4. սեփական դիտարկումների և ճանապարհորդությունների ընթացքում հավաքած տվյալները:

Այս չորս աղբյուրներից անգլիական հյուպատոսների համար հիմնականներն էին առաջին երկուսը:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից և տեղական հայ հոգևորականությունից ստացած տվյալները արժանանում էին բարձր գնահատականի և ընդունվում էին հայ բնակչության թվաքանակին վերաբերող մասով:

Թերացումները, որոնք նկատում էին հյուպատոսները հայ պատրիարքի տվյալներում մահմեդական բնակչության թվաքանակին վերաբերող հաշվարկների մասով, անհիմն էր և քերահասկացման արդյունք: Օսմանյան պաշտոնական վիճակագրության հավաստիությունը հայ բնակչության թվաքանակը որոշելու համար միանշանակ մերժվում էր:

1882թ. իր օգտին լուծելով Եգիպտական հարցը՝ Անգլիան վերջնականապես հրաժարվում է հայկական բարենորոգումների հարցում Կիպրոսյան համաձայնագրով միայնակ նախաձեռնություն հսնելու բերելու իրեն վերապահված հեռավորությունից: Համապատասխանաբար, բրիտանական հյուպատոսները կտրուկ կերպով ընդհատում են իրենց աշխատանքները վիճակագրական տվյալների հավաքման, քաղդատման, համեմատական աղյուսակների կազմման ուղղությամբ՝ սահմանափակվելով հատուկներտ արձագանքներով օսմանյան կառավարության հրատարակվող պաշտոնական վիճակագրության վերաբերյալ:

1953թ. ՕԳՈՍՏՈՍԻՆ ԻՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ «ԱՅԱԶՍ»
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

1951թ. Իրանի նավթի ազգայնացման պատճառով երկրում առաջագամ ծայրահեղ լարված իրավիճակի լուծման միակ ուղին 1953թ. ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան համարում էին պետական հեղաշրջումը: Այն իրականացվեց ԱՄՆ-ի Կենտրոնական հեռախուզական վարչության և Անգլիայի գաղտնի ծառայության ծրագրերով: Երկու գերտերությունները, ինչպես նաև Իրանի շահ Մոհամմեդ Ռեզա Փեհլևին, շահագրգռված էին Իրանի նավթի ազգայնացման ջատագովի, վարչապետ՝ Մոհամմեդ Մոսադեղի իշխանականության մեջ: Սակայն կար «մի փոքր» խնդիր. ժողովուրդը, ինչպես նաև Իրանի մի շարք կուսակցություններ իրենց բարյացակամ վերաբերմունքն էին ցուցաբերում Մ. Մոսադեղի հանդեպ և նրա հետ կիսում էին նավթի ազգայնացման անհրաժեշտության գաղափարը: Այս «փոքր» խոչընդոտը հարբելու նպատակով, ԱՄՆ-ը միջոցներ չխնայեցին համուն բաղձալի հաղթանակին հասնելու: Իրան ուղարկվեցին լավագույն մասնագետները, որոնք երաշխիքներ տվեցին, որ հեղաշրջումը կիրականացվի առանց արյունահեղության: Հեղաշրջման ծրագիրը մանրամասն քննարկվեց նախագահ Գ.Գ. Էյզենհաուերի, ԿՀՎ-ի տնօրեն Ալլեն Գալլեսի, պետքարտուղար Ջոն Ֆոսթեր Գալլեսի կողմից: Ծրագրի անհաջողության դեպքում նախագահը, ինչպես նաև պետքարտուղարը և ԿՀՎ-ի տնօրենը հերբելու էին հեղաշրջման իրականացման գործին իրենց անջությունները:

Հեղաշրջումը, գաղտնագրված էր «ԱՅԱԶՍ» անվան տակ, իրականացվեց 1953թ. օգոստոսի 19-ին: Արդյունքում Մ.Մոսադեղը և իր զինակիցները հեռացվեցին իշխանությունից, որին փոխարինելու եկավ հեղաշրջումն իրականացրած գեներալ Ֆ.Ջահեդին:

ԱՄՆ-ի վարչակազմը խոստովանում է 1953թ. հեղաշրջմանը իր մասնակցության և դրա բացասական ազդեցության մասին, որն, անշուշտ, խիստ բացասական հետևանքներ ունեցավ Իրանի հետագա տնտեսական և քաղաքական զարգացման վրա:

ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ՏԻՐՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ
19-ԴԻ ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ ԵՎ 20-ԴԻ ԴԱՐԻ ՄԿՁԲԻՆ

1882թ. Եգիպտոսը դարձավ անգլիական գաղութ: Սակայն նրա միջազգային-իրավական կարգավիճակում մինչև 1914թ. ոչ մի փոփոխություն

տեղի չունեցավ: Մի շարք միջպետական հակասությունների պատճառով Անգլիան ի վիճակի չէր ո՛չ հայտարարելու Եզիպտոսի բռնակցման մասին, ո՛չ էլ հաստատելու իր գերիշխանությունը: Չնականորեն երկիրը շարունակում էր համարվել Օսմանյան կայսրության մի մաս, իսկ Անգլիան հանդիսանում էր ժամանակավոր օկուպացնող կայսրություն:

Պետական կարգը Եզիպտոսում հետևյալն էր: Պահպանվել էին կառավարության նախկին սկզբունքները: 1883թ. մայիսի 1-ին Աբբաս 2-րդը լույս ընծայեց «Օրգանական օրենքը», ըստ որի Եզիպտոսում ստեղծվում էին երկու ներկայացուցչական պալատներ՝ Օրենսդիր խորհուրդը և Գերագույն ժողովը: Պալատների որոշումները պարտադիր գործածություն չունեին, միայն ուղղակի հարկավորում հաստատելու դեպքում էր պարտադիր Գերագույն ժողովի համաձայնությունը: Բոլոր մյուս դեպքերում և՛ Գերագույն ժողովը, և՛ Օրենսդիր խորհուրդը բացարձակ ոչ մի իրավասություն չունեին: Նմանապես անիրավասու էին նաև Նախարարների խորհուրդը, ինչպես և խղիվը: Փաստորեն, իշխանությունը կենտրոնացած էր անգլիական կառավարչի ձեռքում: Նա չուներ բարձրահունչ տիրադոսներ և համարվում էր Անգլիայի դիվանագիտական ներկայացուցիչ՝ գլխավոր հյուպատոս կամ գլխավոր պատվիրակ:

Ինչ վերաբերում է Եզիպտոսի տնտեսական վիճակին, ապա վերոհիշյալ ժամանակաշրջանում իրադրությունը հետևյալն էր: Անգլիական զորքերի՝ Կահիրե մտնելուց անմիջապես հետո՝ 1882թ. սեպտեմբերի 20-ին, Անգլիան տեղեկացրեց Ֆրանսիային, որ Եզիպտոսի ֆինանսների հանդեպ կիրառվող երկակի հսկողությունը դադարեցվում է: Փոխարենը Անգլիան առաջարկեց Ֆրանսիային տնօրինել եզիպտական պետական պարտքի Գանձարկղի նախագահի պաշտոնը, բայց ֆրանսիացիները անվայել համարեցին իրենց համար՝ զբաղեցնելու հասարակ զանձնապահի պաշտոնը անգլիական կառավարչին կից: Գրավելով Եզիպտոսը՝ Անգլիան սկսեց մի շարք բարեփոխումներ կատարել և մշակեց ֆինանսական միջոցառումների հստակ պլան, որի հիմնական դրույթները մոտավորապես հետևյալն էին՝

1. ասիզնացված և ոչ ասիզնացված եկամուտների մի մասի օտարման մասին օրենքի վերացում,
2. նախկին փոխառությունների վճարման մասնակի և ժամանակավոր կրճատում,
3. Եզիպտոսի համար նոր փոխառություն՝ 9մլն. ֆունտ ստեռլինգ՝ 3 տոկոսադրույքով,
4. պետական և խղիվական կալվածքների վաճառքի իրավունք,
5. օտարերկրյա ռեզիդենտներին հարկավորելու իրավունք:

1885թ. մարտի 18-ին Լոնդոնում կնքվեց Եզիպտական պետական պարտքի մասին միջազգային պայմանագիրը, որը բավարարում էր Անգլիայի բոլոր պահանջները, սակայն այստեղ կար մեկ կետ, որը Ֆրանսիան էր մտցրել: Այդ կետը հետևյալն էր. «Տրե Անգլիան երեք տարվա ընթացքում Եզիպտոսի

բյուջեն չկարողանա բալանսի բերել, ապա այդ երկրի ֆինանսների կառավարումը կանցնի միջազգային հանձնաժողովին»:

Անգլիացիներին հաջողվեց Եգիպտոսում իրականացնել ճշգրիտ հաշվարկված ֆինանսական քաղաքականություն, և արդյունքում նրանք հասան իրենց գլխավոր տնտեսական նպատակին՝ Եգիպտոսը դարձնել բրիտանական արդյունաբերությանը բամբակ տրամադրող խոշոր մի բազա:

Վերոհիշյալ ժամանակաշրջանում կազմավորվում և մեծ թափ է առնում նաև ազատագրական պայքարը՝ ուղղված անգլիական բռնապետության դեմ: Ի հայտ եկան ազգային-ազատագրական կուսակցություններ, որոնք համախմբեցին եգիպտացի ժողովրդին և օգնեցին ցույց տալ Եգիպտոսի անկախություն ոգին:

ԿՈՍՏԻԿՅԱՆ ԶՐԻՍՏԻՆԵ (ԱԻ)

ՍԵՖՅԱՆ ՇԱՀԵՐ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ, ՍՈՒԼԹԱՆ ՀՈՒՍԵՅՆԻ ԵՎ ԹԱՀՄԱՍՊ
II-Ի ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ

Երևանի Մատենադարանում պահվում են Իրանի Սեֆյան պետության թուլացման ու անկման շրջանի Սուլեյման (Սեֆի II - 1666-1694), Սուլթան Հուսեյն (1694-1722) և Թահմասպ II (1722-1732) շահերի շուրջ 100 հրամանագիր և հրամանագրի պատճեն, որոնք ուսումնասիրված չեն և դրանց ճշգրիտ ցուցակի բացակայության հետևանքով դուրս են մնացել գիտական շրջանառությունից: Այդ հրամանագրերը, սակայն, առաջնակարգ պատմական սկզբնաղբյուրներ են՝ հարուստ արժեքավոր տվյալներով ու տեղեկություններով, որոնք առատ փաստագրական նյութ կարող են մատակարարել և՛ հայագետներին, և՛ իրանագետներին:

Նշված շրջանի հրովարտակներում արտացոլված է շահական իշխանության թուլացման պայմաններում մահմեդական հոգևորականության հզորացումը, հրամանագրերից շատերը ընդամենը հաստատում են այս կամ այն խնդրի վերաբերյալ բարձրաստիճան հոգևորականներ սաղրի, շեյխ-ուլ-խալամի կամ մուֆթիի վճիռը (ֆաթվա, միսալ):

Իրանում կենտրոնացված պետության անկման հետևանքով նկատվում է տեղական կառավարիչների, պաշտոնյաների կամայականությունների ու չարաշահումների, հայության դեմ կրոնական հալածանքների ուժեղացում, ինչպես նաև զանազան օրինախախտ տարրերի ակտիվացում: Այս պատճառով թերևս հարկ է եղել արքայական հրամանագրերով ապահովել «հնազանդ գիմնի հպատակներ հանդիսացող» հայ բնակչության մի շարք իրավունքներ. օրինակ հայկական օրենքներով ամուսնանալը, հանգուցյալներին քաղելը, եկեղեցու զանգեր խփելը, ժամերգությունը, ինչպես նաև եկեղեցիներ վերանորոգելն ու նորերը կառուցել:

Մատենադարանի ինչպես այս, այնպես էլ ավելի վաղ ժամանակաշրջանի շահակյան հրովարտակաների մեջ զգալի տեղ են զբաղեցնում Էջմիածնի, Տաթևի և այլ վանքերի վակֆային կալվածքների անձեռնմխելիությունը և նրանց մուսֆուխությունը (պետական հարկերից ազատված լինելը) պաշտպանող փաստաթղթերը:

Հայ կաթողիկոսների ընտրությունը սովորաբար հաստատվում էր շահակյան արքունիքի կողմից: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում կարելի է գտնել այս ժամանակաշրջանի Էջմիածնի ու Գանձասարի գրեթե բոլոր կաթողիկոսների իրավունքները հաստատող հրամանագրերը կամ նրանց պատճենները:

Վերը նշված ժամանակաշրջանի հրովարտակաների մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում եվրոպացի կաթողիկ և այլ քարոզիչների՝ «Ֆրանկների ու պատրիսների» XVII դարի կեսերից հայության շրջանում սկսած ակտիվ գործունեության դեմ ուղղված հրամանագրերը: Այդ քարոզիչները շահակյան արքունիքից ստանալով արտոնություններ, ինչպես նաև կաշառելով տեղի կառավարիչներին՝ կարողանում էին ազատ քարոզչություն ծավալել, որի հետևանքով հետևորդների սովոր խմբեր ունեին Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքներում: Նրանց գործունեությունը առավել մեծ չափով վնասում էր հայությանը՝ պառակտելով այն, ուստի հայոց կաթողիկոսները (հատկապես Իրանի Սուլթան Հուսեյնի իշխանության տարիներին) մի շարք հրամանագրեր են ձեռք բերում, որպեսզի սահմանափակեն հայության շրջանում եվրոպական քարոզիչների գործունեությունը՝ «հայ երեխաների կրթումը նրանց դպրոցներում, կրոնական քարոզչությունը, հայ կանանց հետ անուսնությունը և այլն»:

ՀԱԿՈՒՅԱՆ ԱՐՄԵՆ (ԵՊՀ)

ՀԱՅ-ԹԱԹԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ

Այսրկովկասի հյուսիս-արևելյան (երվ. Գաղստան, Գերբենտ-Չոդի շրջան) և արևելյան շրջանների քաղաքական և էթնոմշակութային պատմության մի շարք հարցեր կապված են «հայ-թաթեր» կոչվող խմբի ծագումնաբանական, ձևավորման խնդիրների հետ: Մասնավորապես, այդ խնդրին անմիջականորեն առնչվում են տարածաշրջանում հայկական և իրանական էթնոմշակութային շերտերի առկայության, դրանց հարաբերակցության ու փոխազդեցության հարցերը, տեղի ունեցած մի շարք քաղաքական փոփոխությունները և դրանց հետևանքով առաջ եկած էթնիկ, դավանական, ժողովարդագրական գործընթացները: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում այս տարածքները եղել են Աղվանից մարզպանության, այնուհետև Շիրվանի կազմում, ուստի վերը նշված խնդիրները որոշակիորեն առնչվում են այդ կազմավորումների քաղաքական և էթնոմշակութային զարգացումների հետ:

Հարցը կայանում է նրանում, որ նշված խումբը կա՞ն պետք է հայադավան դարձած իրանական նախնիներ ունենաք, կա՞ն ընդհակառակն՝ իրանալեզու դարձած հայ նախնիներ: Պատմական քննությունն աներկբա վկայում է վերջինիս օգտին:

Ներկայիս բաթերը համարվում են այս տարածաշրջանում Մասանյանների օրոք հաստատված իրանական բնակչության հետնորդներ, ուստի իրանական ազդեցության խնդիրը մենք քննարկում ենք այդ շրջանից սկսած:

Հայ-բաթերի պատմական աշխարհագրությունն ընդգրկում է ներկայիս Գաղստանի հարավից մինչև Ապշերոն: Մա այն տարածքն է, որտեղ, ինչպես հայտնի է, Մասանյանների հետևողական ու նպատակաուղղված քաղաքականության հետևանքով 5-6-րդ դդ. իրանական ազդեցությունը գերակա դիրքեր գրավեց: Իրանական ռազմածառայական խավի գոյությունը, իրանական ծագմամբ դինաստիաները, էթնիկ իրանցի վերարձակիչների առկայությունը ամուր հենարան էին ծառայում իրանական լեզվամշակութային ազդեցության գերակայության ու տարածման համար, և նույնիսկ 10-րդ դ. չնայած ռեզիդում տեղի ունեցած քաղաքական, դավանական փոփոխությունների հետևանքով Պարսկաստանի ազդեցության կորստին, «Ֆարսերենը» տարածված էր ոչ միայն սոցիալական բարձր միջավայրում, այլև հանդիսանում էր «ընդհանուր գործածության» լեզու Առանում և Շիրվանում: Մինչև դոլբաշական նվաճումները (15-16-րդ դդ.) այդ իրավիճակը, որոշ փոփոխություններով, պահպանվում էր, և շիրվանյան վերնախավը հիմնականում իրանական էր:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, հայկական մշակութային, քաղաքական, էթնիկ տարրը նույնպես ակտիվ դերակատարում է ունեցել:

4-րդ դ. այդ շրջանում տարածվեց քրիստոնեությանը, որը զգալի հետք թողեց տարածաշրջանի մշակութային և դավանական զարգացումների մեջ:

Հայտնի է նաև, որ 5-րդ դ. «Հոնաց պահակի» պաշտպանությանը մասնակցում էին նաև հայ նախարարները, իսկ 6-րդ դարում երբ Խոսրով Անուշիրվանը իրանցի վերաբնակիչներ էր բնակեցնում հյւս-արև. Այսրկովկասում Գերբենտ-Չողի պաշտպանության համար, այդ վայրերում (երվ. Գաղստան, Մուշկուր) նույն կարգավիճակով և գործառույթներով հաստատվում է նաև հայկական տարրը: Տարածքը, որտեղ կային նաև Ֆարսից և Սպահանից եկած իրանցի վերաբնակիչներ, հիշյալ ժամանակշրջանում հանդիսանում էր հայ-իրանական ակտիվ փոխազդեցությունների գոտի:

Թեև հայկական էթնոմշակութային շերտը տեղական չլիոնալիդացված «աղվանականի» համեմատ զտնվում էր ավելի բարձր դիրքերի վրա, սակայն զիջում էր իրանականին, որը օժտված էր քաղաքական իշխանությամբ և էթնիկ լայն ներկայությամբ: «Արմանի» բաղադրամասով անվանումների թույլ տարածվածությունը այս շրջանում վկայում է, որ հայկական կամ քրիստոնեական տարրը փոքրամասնություն էր կազմում:

Իրանական և հայկական էթնոմշակութային շերտերի սոցիալական, քաղաքական և քանակական հարաբերակցությունը ցույց է տալիս, որ ըստ

Լուսինայի հայկական դավանական ազդեցությունը չէր կարող տարածում ունենալ քաղաքական իշխանությանը օժտված իրանական միջավայրում և, ավելին, բերել իրանական բնակչության «հայացմանը», քանի որ Պարսկաստանի կողմից իրականացվող զրադաշտականության տարածմանը և վերաբնակեցմանն ուղղված հետևողական ու նպատակաուղղված միջոցառումները հենց կոչված էին ծառայելու նրա դիրքերի ամրապնդմանը:

Հետևաբար, ինչպես ցույց են տալիս փաստերը և տարածաշրջանի էթնոմշակութային զարգացումների տրամաբանությունը, հայ-քաթերի ձևավորման գործընթացները պետք է դիտարկել հայկական էթնիկ շերտի հենքի վրա:

Դեռևս վաղ միջնադարից փոխառնչվող այդ շերտերի հարաբերակցությունը, հայկական շերտի շարունակական գոյությունը արևելյան Այսրկովկասի բազմադարյան իրանական ազդեցության գերակայության պայմաններում, զուգակցված առկա իրողությունների, յուրահատուկ աշխարհագրական ու էթնոմշակութային միջավայրի հետ, բավարար սոցիալական, քաղաքական, մշակութային նախադրյալներ էին հանդիսանում իրանական շերտի հետ սերտ փոխհարաբերությունների մեջ գտնվող հայկական տարրի էթնոլեզվական փոփոխությունների համար, որի հետևանքով այս շերտը 18-րդ դ. հիշատակվում է արդեն որպես թաթախոս խումբ:

Շատ խոսում է այն փաստը, որ Դերբենդի, Մուշկուրի թաթախոս բնակչությունն ունեցող մի շարք հայկական գյուղերում տապանաքարերը քվազրվում էին 6-ից 18-19-րդ դարերով:

Բացի վերը նշվածից, լեռնային շրջաններում մի շարք հայկական գյուղերի առկայությունը, կարծում ենք, կապված է դեռևս 7-րդ դ. խազարական արշավանքի հետևանքով սկիզբ առած և հետագայում շարունակական բնույթ ունեցող Դերբենդ-Չողից սկսված տեղաշարժերի հետ:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, թաթախոս հայկական խոշոր բնակավայր Մադրասան հիմնադրվել է 14-րդ դ. Ապշերոնի նախկինում Մադրասա կոչվող Բուզովնա գյուղից եկած մի քանի ընտանիքների կողմից, որոնք ծառայել են Օիրվանի սոցիալական վերնախավում: Հետագայում գյուղի բնակչության թիվն ավելացել է ի հաշիվ այլ վայրերից եկած բնակչության (այդ թվում թաթախոս), իսկ Բուզովնա-Մադրասան՝ թաթախոս հայկական բնակչությանը, շարունակել է իր գոյությունը մինչև 1500-ական թթ.: Այդ ժամանակաշրջանում (1501թ., 1509թ.) Ապշերոն և Բաքու են արշավում ղզլբաշները, և բնակավայրի քրիստոնյա բնակիչները, ըստ Լուսինայի, ցրվում են տարբեր կողմեր (այդ թվում և Աստրախան):

Ինչ վերաբերում է մադրասցիների ձևավորման խնդիրներին, ապա «վարս» արխայիկ անվան առկայությունը և լեզվաբանական չափանիշները ուղղակիորեն մատնանշում են հայ-քաթերեն բարբառի էթնոգենետիկ կապը Իրանի կենտրոնական և հարավային շրջանների հետ: Ինչպես արդեն ասվեց, Ֆարս նահանգից և Սպահանից 6-րդ դարում իրանական բնակչություն է հաստատվում հրվ. Դադատանում և Մուշկուրում: Դրանք այն տարածքներն

էին, որտեղ այդ ժամանակաշրջանում, ինչպես արդեն ասվել է, հաստատվում է նաև հայկական տարր՝ նույն կարգավիճակով և գործառույթներով, ինչ Գերբեմոյի մյուս «պահապանները»: Ենթադրելի է թերևս, որ Գերբեմոյից և Մուշկուրից դեռևս 7-րդ դ. սկսված և հետագայում շարունակվող տեղաշարժերի հետևանքով հայկական և իրանական խմբեր են հաստատվում նաև Այշերոնում: Ավելացնենք նաև, որ Բուզովնա բնակավայրում հանդիպում են 12-15-րդ դդ. հայկական վիճագրական նյութեր:

Կարող ենք եզրակացնել, որ հայ-թաթերի այս հատվածի ձևավորումը նույնպես որոշակիորեն առնչվում է այս.-արլ. Այսրկովկասում դեռևս վաղ միջնադարում առկա իրողությունների, հայկական և իրանական շերտերի փոխազդեցությունների հետ:

Չնայած տարբեր բնակավայրերում և շրջաններում հայ-թաթերի ցրվածությանը, խնդրի մնան քննարկումը հնարավորություն է տալիս նրանց ձևավորումը դիտարկել որպես ընդհանուր երևույթ և գործընթաց, իսկ էթնոգենետիկ տեղեկությունների ու ավանդությունների բազմազանությունը (հաճախ նաև հակասականությունը) փաստում են այս խմբի ձևավորման բարդ ու բազմաշերտ ընթացքը, որը, սակայն, համապատասխանում է արևելակովկասյան տարածաշրջանի քաղաքական, էթնոշակութային զարգացումների տրամաբանությանը:

Լեզվաբանական նյութը և առկա լեզվամշակութային իրողությունները բոլլ են տալիս այս խմբի նախնական ձևավորման ժամանակաշրջանը համարել 6-11-րդ դարերը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ (ԱԵ)

ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՌԱԶՄԱ-ԶԱՂԱԶԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958-1975թթ.)

Պաղեստինցիների առաջին ներհոսքը Լիբանան սկսվեց 1948թ., երբ պաղեստինա-իսրայելական առաջին պատերազմի արդյունքում շատ պաղեստինցիներ, փախստականի կարգավիճակով, հաստատվեցին հարևան արաբական երկրներում, այդ թվում նաև Լիբանանում: Լիբանանում գտնվում էին պաղեստինյան փախստականների մոտ 15 ժամբարներ՝ Սաբրա, Շաախլա, Թել-Չաաաաա, Այն ալ-Հիլվե, Ռաշիդիյա, Նահար ալ-Բադիդ և այլն, որոնք հիմնականում տեղակայված էին Լիբանանի հարավում և Բեյրութի արվարձաններում:

Մեր կողմից քննարկվող խնդիրը ուսումնասիրվել է մի շարք հեղինակների կողմից՝ Ս. Մաքեյ, Զ. Սալիբի, Ա Հուրանի, Թ. Խալիլի, Բ. Օդեհ, Ս. Ֆիշեր, Ա. Ֆուլլեր, Բ. Համիզրաչի և այլք: Հայ իրականության մեջ այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Ն. Հովհաննիսյանը:

Պաղեստինցիների երկրորդ մեծ ներհուսքը Լիբանան տեղի ունեցավ 1967թ. արաբա-իսրայելական պատերազմից հետո: Չմայած պաղեստինցիների հիմնական ռազմական ուսումնական բազաները մինչև 1970թ. գտնվում էին Հորդանանի տարածքում, պաղեստինյան զինված խմբավորումների մի զգալի մաս կենտրոնացել էր Լիբանանի հարավում, որը սահմանակից էր Իսրայելի հյուսիսային բնակավայրերին: 1969թ. կեսերին Լիբանանում արդեն գտնվում էին մոտ 2 հազար պաղեստինյան զինված մարտիկներ, որոնք օգտագործելով Լիբանանի, հարավը, գրոհներ էին ձեռնարկում Իսրայելի հյուսիսային որոշ բնակավայրերի վրա: Այս գրոհներին ի պատասխան՝ Իսրայելը, որպես «պատժիչ» քայլեր, 1968թ. սկսած պարբերաբար օդային հարձակումներ էր իրականացնում Լիբանանի ողջ տարածքում:

1969թ. նոյեմբերի 3-ին Կահիրեում Լիբանանի կառավարության և ՊԱԿ-ի միջև ստորագրվեց զաղտնի համաձայնագիր, որով սահմանվեցին պաղեստինցիների իրավունքները և գործողությունների բնույթը Լիբանանի տարածքում:

Պաղեստինցիներին իրավունք տրվեց ռազմական բազաներ ունենալ Լիբանանի հարավում, սակայն հարգել Լիբանանի անկախությունն ու ազգային անվտանգությունը:

Այս փաստաթուղթը առաջին համաձայնագիրն էր, կնքված որևէ արաբական պետության և Պաղեստինի Ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) միջև, որտեղ ՊԱԿ-ը առաջին անգամ պետական մակարդակում հանդես էր գալիս որպես հավասարազոր գործընկեր:

1970թ. Հորդանանում «ալ սեպտեմբերի» արյունալի դեպքերից հետո Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը Յասիր Արաֆաթի գլխավորությամբ, իր ռազմական կառույցներով հաստատվեց Լիբանանում: Այս դեպքերից հետո Լիբանանում պաղեստինյան զինված մարտիկների թիվը հասավ 10-12 հազարի: Պաղեստինցիների և Լիբանանի ծախս ազգային-հայրենասիրական ուժերի միջև հաստատվեցին բարեկամական հարաբերություններ, որոնք այնուհետև վերածվեցին սերտ համագործակցության և փոխադարձ աջակցության: Կասկածից վեր է, որ այդ հանգամանքը նպաստեց նաև Լիբանանի հայրենասիրական ուժերի դիրքերի ամրապնդմանը, ինչից այդքան երկյուղում էին լիբանանյան աջ ուժերը:

Ատերես ընդունելով Կահիրեի 1969թ. նոյեմբերի 3-ի համաձայնագիրը, լիբանանյան բոլոր երանգի աջերը, իրականում ամեն բան անում էին այն ծախողելու համար: Մարտի վերնախավը ոչ միայն դեմ էր պաղեստինցիների հետ համագործակցությանը և նրանց կողմից Լիբանանի տարածքի օգտագործմանը Իսրայելի դեմ պայքարում, այլև պահանջում էր, որ նրանք հեռանան Լիբանանի տարածքից, ինչն, ըստ էության, համապատասխանում էր Իսրայելի շահերին: Հենց այս հանգամանքն էլ ընկած էր մարտնչա-իսրայելական հետագա համագործակցության հիմքում:

Պաղեստինցիների և նրանց իրավունքների հանդեպ լիբանանյան հասարակության տարակարծությունը ջրբաժան գիծ դարձավ Լիբանանի քաղաքական ուժերի միջև և հանդիսացավ ներքաղաքական իրավիճակի հետագա սրման և Լիբանանում 1975թ. քաղաքացիական պատերազմի բռնկման հիմնական պատճառներից մեկը:

Իր հերթին ՊԱԿ-ը, չնայած բազմիցս հայտարարում էր, որ հարգում է Լիբանանի անկախությունը, տարածքային ամբողջականությունը և կայունությունը, ելնում էր այն դրույթից, որ ամբողջ արաբական ներուժը՝ ռազմական և քաղաքական, պետք է ի սպաս դրվի Պաղեստինի ազատագրման գործին և շարունակում էր օգտագործել Լիբանանի հարավը Իսրայելի դեմ պայքարում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ (ԵՊՀ)

ԵՓՐԱՏ-ՏԻԳՐԻՄԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՋ

Ջրի հիմնախնդիրն իր տնտեսական, քաղաքական և իրավական ասպեկտներով Մերձավոր Արևելքի 21-րդ դարի առաջնային խնդիրներից է: Խնդրի սրությունը պայմանավորված է տարածաշրջանի մակրոտնտեսական իրավիճակով, այն է՝ ջրի աղբյուրների սակավություն, խիտ բնակչություն և բնակչության աճի բարձր տոկոս, տնտեսական և տեխնոլոգիական հետամնացություն և առկա ջրային պաշարներն օպտիմալ օգտագործելու անկարողություն, տարածաշրջանային հարատև կոնֆլիկտներ և փոխադարձ անվստահություն և այլն: Քաղաքական առումով, Մերձավոր Արևելքում ջրի խնդիրն օրըստօրե ավելի ու ավելի մեծ հնչեղություն է ձեռք բերում՝ պայմանավորելով տարածաշրջանային հարաբերություններն ու պետությունների ազգային անվտանգությունը:

Իրավական տեսանկյունից, ջրի խնդիրը շարունակում է մնալ «չլուծված», որովհետև միջազգային իրավունքն այս խնդրում անկատար է, և տարածաշրջանի պետություններն ավելի մեծ նշանակություն են տալիս երկկողմ համաձայնագրերին, քան միջազգային իրավական ինստիտուտների կողմից ընդունված այս կամ այն նորմին և շատ հաճախ միջազգային իրավունքը «հարմարեցնում» և մեկնաբանում են ըստ իրենց քաղաքական նպատակների և շահերի: Խնդրի իրավական բարդությունը կայանում է նրանում, որ Մերձավոր Արևելքի երկու հիմնական գետավազանների՝ Եփրատ-Տիգրիսի և Հորդանանի (Նեղոսի գետավազանը նշված չէ, որովհետև այն չի դիտվում որպես զուտ մերձավորարևելյան գետ) սնման շրջանին տիրապետող երկրների միջև գոյություն չունեն ջրօգտագործումը կարգավորող բազմակողմ պայմանագրեր, որոնք հստակ կերպով սահմանեն յուրաքանչյուր երկրի մասնաբաժինը: Եփրատ և Տիգրիս գետերի մերձափնյա երեք երկրները՝ Թուր-

քիան, Սիրիան և Իրաքը տարբեր պաշտոնական մոտեցումներ ունեն խնդրի նկատմամբ, ինչը բխում է նրանց քաղաքական շահերից:

Թուրքիայի կողմից ներկայումս իրականացվող Անատոլիայի հարավ-արևելյան շրջանը զարգացնելու GAP (Guncydogu Anadolu Projesi) ծրագիրը ամենավիճահարույցն է Թուրքիայի և նրա արաբ հարևանների հարաբերություններում: 32 մլրդ ԱՄՆ դոլար ընդհարուր արժեքով այս ծրագրի լրիվ իրականացումը նախատեսում է Եփրատ և Տիգրիս գետերի վրա 22 ջրամբարի և 19 հիդրոէլեկտրակայանի կնոուցում՝ տարեկան 27 մլրդ կվտ/ժ էլեկտաէներգիա արտադրելու հզորությամբ: Երբ 1990թ. GAP ծրագրի կորիզը կազմող Աբաթուրքի ջրամբարը լցնելու համար թուրքերը մոտ մեկ ամիս դադարեցրին Եփրատի հոսքը դեպի Սիրիա, գետի հունը մինչև Սիրիայի Ալ Ասադ ջրամբարը ցամաքեց, և թուրք սիրիական հարաբերությունները ծայրաստիճան սրվեցին: Թուրքիան ցուցադրեց ջրի ռազմավարական իր գեները արաբների նկատմամբ, իսկ թուրք գեներալներն էլ հայտարարեցին, որ վերահսկելով դեպի արաբական երկրներ հոսող ջրերը՝ իրենք կվերահսկեն արաբական քաղաքականությունը:

Սիրիան ու Իրաքը բազմիցս քննադատել են Թուրքիային Եփրատ և Տիգրիս գետերի ջուրը միակողմանիորեն տնօրինելու մեջ: Իր ջրային ծրագրերի մասին Անկարան մույնիսկ չէր տեղեկացրել ստորին հոսանքի երկրներին, ինչպես ընդունված է միջազգային իրավունքում, թեև պնդում էր, թե այդ երկրները բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունը ստացել են երեք երկրների ներկայացուցիչների Համատեղ տեխնիկական հանձնաժողովի շրջանակներում:

Սիրիան Եփրատն ու Տիգրիսը համարում է միջազգային գետավազան և գտնում է, որ գետավազանի ջուրը երեք երկրների կողմից պետք է օգտագործվի ըստ համապատասխան քվոտայի:

Իրաքը միջազգային ջրահոսք է համարում այն ջրահոսքը, որը գտնվում է մեկից ավելի պետությունների տարածքում: Իրաքը Եփրատ և Տիգրիս գետերը դիտում է որպես առանձին միջազգային գետավազաններ և հանդիմանում է Թուրքիային այն հարցում, երբ վեջինս պնդում է, որ թուրքական ծրագրերի իրականացման հետևանքով ջրի նվազումը դեպի Իրաք Թուրքիան կհատուցի՝ Տիգրիսից, որը կազմում է ընդհանուր գետավազանի մի մասը: Սակայն սեզոնային վարարումների պատճառով Տիգրիսը ավելի անբարենպաստ է գյուղատնտեսության համար և չի կարող փոխարինել Եփրատին:

Թուրքիան, ելնելով իր քաղաքական շահերից, յուրօրինակ մոտեցում ունի այս խնդրի նկատմամբ: Վկայակոչելով այն հանգամանքը, որ Եփրատ և Տիգրիս գետերը սկիզբ են առնում իր տարածքից և օգտվելով այն բանից, որ նշյալ գետերի ջրօգտագործման շուրջ գոյություն չունի միջազգային-իրավական հստակ կարգավիճակ, գտնում է, որ դրանք ոչ թե միջազգային գետեր են, այլ՝ սահմանը հատող ջրահոսքեր: Նա միջազգային ջրահոսք է համարում այն ջրահոսքը, որը սահման է առաջացնում պետությունների միջև, ինչպես օրինակ՝ Արաքսը: Իր տարածքում գտնվող ջուրը Թուրքիան դիտում է սեփական ինքնիշխանության առարկա և իրեն իրավունք է վերապահում ըստ ցան-

կության տնօրինելու այդ ջրերը: Անկարան հայտարարում է, որ ինքը հնարավորինս հաշվի կառնի ստորին հոսանքի երկրների շահերը, սակայն վերջիններին «տրվող» ջուրը թուրքերը դիտում են որպես «նվեր» արարներին:

Եփրատ-Տիգրիսի ավազանի պետությունների ամտեսական և քաղաքական շահերից, ինչպես նաև տարածաշրջանային քաղաքական զարգացումներից է կախված նշյալ գետերի միջազգային-իրավական կարգավիճակի հստակեցումը: Մերձավոր Արևելքի բարդ աշխարհաքաղաքական և տարածաշրջանում կարճաժամկետ հեռանկարում ջրի խնդրի իրավական կարգավորումն ակնկալելն իրատեսական չէ: Խնդրի իրավական լուծումը կախված է տարածաշրջանային ընդհանուր խաղաղության հաստատումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏԻԿ (ԱԻ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՁԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՅԼ ՍԵՊԱԳԻՐ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի ղեկավարը հիշատակվում է Ջ.ա. XV-XIII դդ. խեթական արքյորներում, որպես խեթական տերության հակառակորդներից մեկը: Նրա լեզվի, պատմության և էթնոմշակութային հարցերին անդրադարձել են մի շարք գիտնականներ, որոնց կարծիքները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի:

1. Գ. Ղափանցյանը, զարգացնելով և առավել հստակեցնելով է.Ֆոռերի և Պ.Կրեյմերի առաջ քաշած տեսակետները, հայասացիներին համարում է հայերի նախորդները, իսկ լեզուն՝ հայերենի հիմքը:

2. Ի. Գյակոնովը Հայասայի և հայ անվանումները համարում է պատահական նմանություն, իսկ լեզվի մասին կարծում է, որ ամենայն հավանականությամբ այն պատկանում է հյուսիս-արևմտյան կովկասյան խմբին:

3. Գ.Ջահուկյանը նախկինում գտնում էր, որ Հայասայի անվանումը կապված է հայ անվան հետ, բայց հայասերները հայերենի ամնիջական հիմքը չէ, այլ հայերենից տարբեր հնդկարապական լեզու, որ հանդես է գալիս նրա մեջ, որպես կողմնակի շերտ (ենթաշերտ): Սակայն վերջին շրջանում նա վերանայել է իր այդ տեսակետը և հայասերները համարում է վաղանջական հայերեն:

Հայասայի լեզվի ուսումնասիրության համար նյութը շատ սահմանափակ է: Այն կարելի է բաժանել երեք խմբի.

ա/ անձնանուններ,

բ/ դիցանուններ,

գ/ տեղանուններ:

Մենք այստեղ կանդրադառնանք երեք հայասական տեղանվանական վերջավորությունների, որոնք են ճa, ta, ja:

Հայասական տեղանուններից մեր դիտարկված վերջածանցներով կազմված են *Hajša*, *Arnija*, *Parraja*, *Pahhuteja*, *Arhita*, *Tamatta* տեղանունները:

Այս վերջավորությունները հանդիպում են տարբեր շրջաններում.

1. Արճեշ - Արաարապշա (^{KUR}Artarapša), Տակտունիա (^{URU}Taktumnia),

2. Վանա լճի ավազան - Ալլուրիա (^{ᵀᵀ}Alluria/u), Ալտուկյա (^{URU}Altukia), Անզալիա (^{URU}Anzalia), Բիտայա (^{URU}Bitaja), Դիլիզիա (^{URU}Dilizia), Իննայա (^{ᵀᵀ}Innaja), Մախունիա (^{SADU}Mahunia), Էրիդիա (^{URU}Eridia),

3. Ուրմիո լճի ափազան - Անիաշտանիա (^{URU}Aniaštania), Արծաբիա (^{KUR}Arsabia), Արծաբիյա - (^{SADU}Arsabi(i)a), Աշկայա-Ուշկայա (^{KUR}Ašq/kajia-^{URU}Ušqaja),

4. Ուրուտարի - Իկկիա - (^{URU}Ikkia), Իշտամնիա (^{URU}Ištamnia), Խարդիա (^{URU}Hardia), Էլիդա (^{URU}Elida), Դունաշա (^{URU}Dunaša),

5. Մալաբիա (^{KUR/URU}Meliše(i)a), Ջափշա (^{URU}Zapša asuni)(?) Մալաբիայի հարևանությամբ,

6. Տիգրիսի վերին մասում և ակունքների մոտ - Դանիա (^{URU}Dania), Իրսիա (^{URU}Irsia), Լուկիա (^{URU}Luqia), Լուլուտա (^{KUR}Luluta), Ալլաբրիա (^{KUR/URU}Allabria),

7. Արածանի գետի հովիտ - Արծանիա (^{ᵀᵀ}Arsania), Շեբեթերիա (^{URU}Sebeteriani),

8. Ծոփք - Ծանծալիյա (^{URU}Zanzalija), Խինձուտա = Անձիտ (^{URU}He/inzuta), Տախիսիշա (^{URU}Tahhiša), Թիմիյա (Ժամանակակից Ջիմին՝ Երզնկայից հարավ-արևելք, ^{URU}Timija, ^{URU}Temija), Փարիա (^{KUR}Paria):

Գ. Ղափանցյանը, ստուգաբանելով մի շարք հայասական անձնանուններ, որոնք կազմված են յա վերջավորությամբ, փորձում է այդ վերջավորությունը բացատրել խտիերենի քերականությամբ, ինչը իրավացիորեն քննադատվել է Ի. Դյակոնովի կողմից: Նրա կարծիքով խտիական վերջավորություն պարունակող անձնանունը չի կարող պատկանել հնդեվրոպական ծագում ունեցող բնակչությանը: Մեր կարծիքով այդ յա խտիական փոքրացուցիչ մասնիկը պետք է տարբերակել (i)յա վերջածանցից, որը հանդիպում է ոչ միայն հայասական, այլև խեթական տեղանուններում և: Մենք ենթադրում ենք, որ դա հնդեվրոպական վերջավորություն է, որ կարող է ունենալ բուն տեղանվանակերտ նշանակություն: Գ. Ջահուկյանի կարծիքով այն ծագում է հնդեվրոպական ijo ածանցից: ša և ta վերջածանցների հնդեվրոպական ծագումը նույնպես ապացուցված է Գ. Ղափանցյանի և Գ. Ջահուկյանի կողմից, որոնցով կազմված տեղանուններն, ըստ մեր դիտարկումների, նույնպես մեծ քանակությամբ հանդիպում են խեթական տեքստերում:

Մեր նշած տարածքներից Հայասայի, Մալաբիայի, Ծոփքի և հարակից շրջանների հնդեվրոպաբնակ կամ հայաբնակ լինելու մասին գիտության մեջ բազմիցս արտահայտվել են տեսակետներ, որոնք ապացուցվում են նաև վերջին ժամանակների հնագիտական ուսումնասիրություններով: Վանա լճի շրջանում այդ վերջավորությունները հիմնականում հանդիպում են Այադու

երկրում և նրա շրջակայքում, որի հնդեվրոպաբնակ լինելու մասին գիտության մեջ նույնպես եղել են կարծիքներ (Գ. Ջահուկյան, Հ. Կարազոյան): Ինչ վերաբերում է Ուրմիո լճի շրջանում և Ուրուատրիում նրանց առկայությանը, ապա պետք է նշել, որ դա հետաքրքրական փաստ է և ավելի խոր ուսումնասիրության կարիք է զգում: Ամփոփելով շարադրվածը՝ եզրակացնում ենք.

1. Տա, տա, իա վերջավորությունները հնդեվրոպական վերջածանցներ են:

2. յա խառնիական փոքրացուցիչ մասնիկը պետք է տարբերակել (i) յա տեղանվանական հնդեվրոպական վերջածանցից:

3. Տա, տա, յա վերջավորությունները, որոնք հանդիպում են Հսյասայում, Մայաթիայում, Վանա և Ուրմիո լճերի շրջակայքում, Արճեշում, Ծովքում և Ուրուատրիում խոսում են այդ տարածքներում հնդեվրոպական տարրի առկայության մասին:

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ (ԱԻ)

1963-1964 ԹԹ. ԿԻՊՐՈՍՈՒՄ ԾԱԳԱԾ ՃԳՆԱԺԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կիպրոսի ժողովրդի ծանր և համառ պայքարի արդյունքն եղավ այն, որ Յուրիխյան և Լոնդոնյան բանակցություններում, այնուամենայնիվ, Կիպրոսին պարտադրված պայմանների հիման վրա, 1960թ. օգոստոսի 16-ին հռչակվեց Կիպրոսի անկախ հանրապետությունը: Մակայն նորաստեղծ պետության եռամյա փորձը ցույց տվեց, որ այս պետությունը լիարժեքորեն անկախ չէ, և որ սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել: Ուստի երկրի նախագահ Մակարիոսը առաջարկեց թուրքական և հունական համայքների ներկայացուցիչներին համաձայնության գալ միմյանց միջև սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ, քանի որ երկրին պարտադրված սահմանադրությունը միջհամայքային տարածայնությունների աղբյուր է հանդիսանում, և հակասում է ընդունված միջազգային դեմոկրատական նորմերին:

1963թ. նոյեմբերի 30-ին նախագահ Մակարիոսը (հույն) փոխնախագահ Քուչուքին (թուրք) հանձնեց 13 կետից բաղկացած սահմանադրական ռեֆորմների մի փաթեթ, որի կրկնօրինակները ուղարկվեցին Հունաստանի և Թուրքիայի կառավարություններին՝ տեղեկատվական կարգով:

Մակայն յուրաքանչյուր փոփոխություն, որը կարող էր հակասել ՆԱՏՕ-ի շահերին տարածաշրջանում, բնական է, որ չէր կարող ընդունվել ԱՄՆ-ի, Անգլիայի, ինչպես նաև Թուրքիայի կողմից. և պատահական չէ, որ ռեֆորմների վերաբերյալ առաջինը բացասական արձագանքով հանդես եկավ ոչ թե թուրքական համայքը, այլ հենց Թուրքիան: Մրան հետևում են հակահունական ալիքների բողբոջումներ Թուրքիայում: ՆԱՏՕ-ի ռազմական շրջանակները սկսում են մեծ քանակությամբ զենք մատակարարել Կիպրոսի թուրք և

հույն ծայրահեղականներին և միջհամայրային ընդհարումներ հրահրում՝ նպատակ ունենալով առիթ ստեղծել ռազմական միջամտության համար:

Այդպիսի առիթ հանդիսացավ 1963թ. դեկտեմբերի 21-ին թուրք ծայրահեղականների և հույն ոստիկանների միջև տեղի ունեցած փոխհրածոթյունը, որի արդյունքում սպանվեց երկու թուրք: Մի քանի օր անց կոնֆլիկտն ընդգրկեց ողջ կղզին և վերածվեց միջհամայրային արևահեղ պատերազմի:

Այս հանգամանքը շտապեցին օգտագործել ՆԱՏՕ-ի ռազմագետները, և 1963թ. դեկտեմբերի 26-ին «Երաշխիքների մասին» պայմանագրի համաձայն, Անգլիայի, Թուրքիայի և Հունաստանի զորքերը օկուպացրեցին Կիպրոսը: Նույն օրը Մակարիոսի կառավարությունը բողոք հղեց ՄԱԿ-ին՝ ընդդեմ օտարերկրյա միջամտության, որը սպառնալիք էր հանդիսանում Կիպրոսի անկախության և տարածքային ամբողջականության համար:

1964թ. հունվարի 15-ին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ կոնֆլիկտի կարգավորման նպատակով Լոնդոնում բացվեց կոնֆեռանս՝ ԱՄՆ-ի, Անգլիայի Թուրքիայի, Հունաստանի և Կիպրոսի երկու համայքների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մակայն առաջարկված բազմաթիվ տարբերակներից ոչ մեկը չընդունվեց Կիպրոսի կառավարության կողմից, որն իր հերթին պահանջում էր անհապաղ դուրս բերել զորքերը Կիպրոսից ու դադարեցնել բոլոր տեսակի միջամտությունները նրա ներքին գործերին և Կիպրոսի ժողովրդին տալ ինքնորոշման իրավունք: Չգալով բանակցությունների անարդյունավետությունը՝ ԱՄՆ-ն և Անգլիան վերսկսում են միջամտության համար նոր պատրվակ ստեղծելուն ուղված իրենց գործողությունները:

Որպես ժամանակավոր միջոց, մինչև կոնֆլիկտի դիվանագիտական կարգավորումը, ՆԱՏՕ-ն նոր զորքեր էր նախապատրաստում Կիպրոս ուղարկելու համար, ինչի մասին 1964թ. փետրվարի 2-ին վերջնագրային տեսքով տեղեկացրեց Կիպրոսի կառավարությանը:

Ստեղծված այս ծանր պայմաններում ճգնաժամի վերաբերյալ իր դիրքորոշմամբ հանդես եկավ ԽՍՀՄ-ը, որում ասվում էր. «ԽՍՀՄ-ը ողջունում է անկախության համար մղվող Կիպրոսի ժողովրդի արդարացի պայքարը և դատապարտում որևէ օտարերկրյա միջամտություն նրա ներքին գործերին: ՆԱՏՕ-ի ագրեսիայի վտանգը սպառնալիք է ոչ միայն կիպրոսցիների, այլ նաև բոլոր ազատասեր ժողովրդների համար, և հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը: Ուստի ԽՍՀՄ-ը չի կարող անտարբեր մնալ այս ամենից, և առաջարկում է հարցի կարգավորումը իրականացնել ՄԱԿ-ի շրջանակներում»: Սառը պատերազմի տարիներին, երբ հակադիր ճամբարների մեջ պայքար էր գնում ազդեցության ոլորտների ընդլայնման գործում, ԽՍՀՄ-ի այս հայտարարությունը չէր կարող անտեսվել ՆԱՏՕ-ի կողմից, և պատահական չէ, որ դրանից ոգեշնչված՝ մի քանի օր անց Մակարիոսը մերժեց ՆԱՏՕ-ի վերջնագիրը:

Խուսափելով ռազմական միջամտությունից՝ ՆԱՏՕ-ն գործի է դնում դիվանագիտությունը: ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Գ. Աչեսոնը ՄԱԿ-ի

ներկայացուցին է առաջարկում ճգնաժամի կարգավորման իր տարբերակը, որը նախատեսում էր՝

1. Կիպրոսի էնոզիալը (միավորումը) Հունաստանի հետ,
2. Հունաստանի կողմից Կաստելորիսա կղզու հանձնումը Թուրքիային,
3. Թուրքական սուլերեն ռազմաբազաների տեղակայումը Կիպրոսի

հյուսիս-արևելյան շրջաններում: Այս ծրագիրը, որը իրականում նշանակում էր Կիպրոսի բաժանում, ըննարկման դրվեց Ժնևի կոնֆերանսում 1964թ. հուլիսին: Սակայն այն մերժվեց Կիպրոսի, իսկ ավելի ուշ նաև Հունաստանի կողմից:

Իսկ իրավիճակը շարունակում էր մնալ լարված: Երբ բուրբակյան ավիացիան 1964թ. օգոստոսի 8-9-ին ոմբակոծեց Կիպրոսի հյուսիս-արևմտյան մի շարք խաղաղ բնակավայրեր, իրադրությունը այնքան լարվեց, որ Թուրքիան և Հունաստանը կանգնեցին պատերազմի վտանգի առաջ: Անգլիայի և ԱՄՆ-ի դիվանագետները ելք էին փնտրում ստեղծված իրավիճակից. ՆԱՏՕ-ի հարավ-արևելյան թևը կործանման շեմին էր: Ծնշումներ սկսեցին գործադրվել Հունաստանի նկատմամբ՝ սպառնալով նրան զրկել ռազմական աջակցությունից Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու դեպքում:

Օգոստոսի 10-ին Կիպրոսի կառավարությունը օգնության դիմեց ԽՍՀՄ-ին: Արձագանքը շատ շուտ ստացվեց ԽՍՀՄ-ի կողմից, որն այս անգամ ևս դատապարտեց միջամտությունները Կիպրոսի ներքին գործերին, կոչ արեց բոլոր շահագրգիռ կողմերին ցուցաբերել զսպվածություն և ՄԱԿ-ի շրջանակներում հասնել հարցի խաղաղ կարգավորմանը: Դեպքերի հակառակ զարգացման դեպքում ԽՍՀՄ-ը իրեն իրավունք էր վերապահում հնարավոր բոլոր միջոցներով աջակցել Կիպրոսի ժողովրդին:

Այս անգամ ևս ԽՍՀՄ-ի դիրքորոշումը սքափեցնող ազդեցություն գործեց: Ռազմական լարվածությունը գնալով թուլանում էր: ՆԱՏՕ-ն ստիպված ժամանակավորապես մեղմացրեց իր «վերջնագրային» քաղաքականությունը՝ խուսափելով Կիպրոսի և ԽՍՀՄ-ի մերձեցումից: Սակայն սա ամենևին էլ չէր նշանակում, թե նա հրաժարվել էր Կիպրոսի նկատմամբ ունեցած իր վաղեմի ծրագրերից: Այժմ նրա քաղաքականությունը հիմնականում ուղված էր հարցը թուրք-հունական մակարդակի վրա տեղափոխելու և այն ՆԱՏՕ-ի շահերին համապատասխան լուծելուն:

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՂԱՐ (ԵՊՀ)

ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆԻ ԳԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ

Իրանը գտնվել է Հնդկաստանից և Չինաստանից դեպի արևմուտք գնացող առևտրական ուղիների խաչմերուկում: Առևտրական հարաբերությունները Իրանի տարածքում պարզ ապրանքափոխանակության ձևով ունեն մոտ 5000-ամյա վաղեմություն: Սակայն Իրանի դերը միջազգային առևտրում

բարձրացավ հատկապես հզոր Սասանյան կայսրության ստեղծումից հետո: Սասանյաններին հաջողվեց իրենց իշխանության տակ միավորել բոլոր իրանական փոքր թագավորություններն ու իշխանությունները, ամրապնդել իր սահմանները հյուսիսում և հարավում և իր հզոր ռազմական ուժի շնորհիվ սպառնալից առեվտրական ուղիների անվտանգությունը կայսրության տարածքում:

Իրանին հաջողվեց իր ձեռքում կենտրոնացնել նաև ծովային առևտուրը, քանզի նրա հարավային ափերը ողողում էին Արաբական ծովի և Պարսից ծոցի ջրերը: Ծովային առևտրում Իրանի միակ մրցակիցը Եթովպիան էր, սակայն շնորհիվ իրանական որոշ ապրանքների, հատկապես, իրանական ձիերի, որոնց առևտուրը Չինաստանում և Հնդկաստանում ազատված էր հարկերից, իրանական առևտրականներին հաջողվեց արտոնյալ դիրք գրավել այդ երկրներում և հաջողությամբ մրցակցել եթովպացի առևտրականների հետ: Իսկ ցամաքային առևտրում Իրանին հաջողվեց ուղղակի մենաշնորհային դիրք գրավել արևելք-արևմուտք առևտրական հարաբերություններում: Չինական մետաքսը Բյուզանդիա և այլ երկրներ էր մտնում միայն Իրանի վրայով, ուստի մետաքսի առևտրում Իրանը չունեւ ոչ մի մրցակից և իր այդ մենաշնորհային դերը պահպանեց ընդհուպ մինչև արաբական նվաճումները:

Ամփոփելով վերը նշվածը՝ կանգ առնենք Սասանյան Իրանի վաղ միջնադարյան առևտրում մենաշնորհային դերն սպառնալից հիմնական գործոնների վրա:

Գրանցից առաջինը Իրանի աշխարհագրական դիրքն էր: Գրավելով Առաջավոր Ասիայի մեծ մասը՝ Իրանը գտնվում էր արևելքից արևմուտք ձգվող ճանապարհների հենց կենտրոնում: Նրա հարավային ափերը ողողում էին Արաբական ծովի և Պարսկական ծոցի ջրերը և հնարավորություն էին տալիս Իրանին զբաղվել նաև ծովային առևտրով:

Երկրորդ կարևոր գործոնը հզոր պետության ստեղծումն էր, որին հաջողվեց վերամիավորել պառակտված երկիրը, սպառնալից սահմանների անվտանգությունը և հզոր ռազմական ուժի շնորհիվ ընդլայնել իր ազդեցության ոլորտները և՛ առևտրում, և՛ քաղաքական կյանքում:

Երրորդ գործոնը նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների հաստատումն էր, որն ի տարբերություն ուշ միջնադարյան արևմտաեվրոպական ֆեոդալիզմի, բնորոշվում էր ապրանքադրամային հարաբերությունների զարգացմամբ և քաղաքային կյանքի աշխուժացմամբ:

Եվ վերջինը՝ Իրանի առևտուրը քաջալերող արտաքին և ներքին քաղաքականությունն էր. առևտրի պետական վերահսկողության հաստատումն մաքսային և հարկային քաղաքականության մշակում, առևտուրը կազմակերպող և իրականացնող պետական կառույցների և մարմինների ստեղծում:

**ՈՒՂՂԻՉ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱԳԻՍՏԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ
ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՐԻԱՅՈՒՄ**

1970թ. նոյեմբերի 13-ին Սիրիայի պաշտպանության նախարար գեներալ Հաֆեզ ալ-Ասադի գլխավորությամբ տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում և իշխանությունն անցավ զինվորական խմբակցությանը: Նոյեմբերի 15-ին ստեղծվեց Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցության (ԱՎՄԿ կամ Բաաս) ժամանակավոր երկրամասային ղեկավարությունը, որը նոյեմբերի 16-ին հայտարարությամբ դիմեց բնակչությանը, որտեղ շարադրվում էր Սիրիայի ղեկավարության գործունեության ծրագիրը ներքին և արտաքին քաղաքականության մասին: Հայտարարության մեջ նշվում էր, որ «նոյեմբերի 16-ի շարժումը» կոչված էր ուղղելու Բաասի սիրիական մասնաճյուղի նախորդ ղեկավարության սխալները և կուսակցության առջև կանգնած խնդիրները լուծել՝ նրա համագումարների որոշումները կյանքի կոչելով: Այստեղից էլ ծնունդ առավ «ուղղիչ շարժում» անունը (արաբերեն «ալ-հառաքա աթ-թասիհիյա»):

Թեև Սիրիայում տեղի ունեցավ իշխանափոխություն, այնուամենայնիվ, ուղղիչ շարժման սկզբնավորմամբ Բաաս կուսակցությունը պահպանեց իր կարգավիճակը՝ որպես իշխանության կուսակցություն, կամ նոր իշխանության գաղափարական հենարան: Ասադը դեմ չէր Բաաս կուսակցությանը և ոչ էլ նրա իշխանությանը երկրում, անդամագրվել էր Վերածնունդ կուսակցությանը հենց նրա կազմավորման պահից՝ 1946թ., և ղեկավարում էր ուսանողական շարժումը ֆրանսիական գաղութատիրության դեմ Վերածնունդ կուսակցության դրոշի ներքո: 1963թ. մարտի 8-ի հեղափոխության ժամանակ, երբ Բաաս կուսակցությունը Սիրիայում եկավ իշխանության գլուխ, Ասադը հինգ հոգուց բաղկացած ընդհատակյա ռազմական կոմիտեի գլխավոր առաջնորդներից մեկն էր, որը ղեկավարեց հեղափոխությունը: Նա պարզապես գտնում էր, որ ծախքաասականները շեղվել էին կուսակցության հիմնական սկզբունքներից և ծրագրային դրույթներից:

1971թ. մարտի 12-ին համաժողովրդական գաղտնի քվեարկությամբ Հաֆեզ ալ-Ասադը ընտրվեց Սիրիայի նախագահ, իսկ ապրիլի 3-ին կազմավորվեց նոր կառավարություն՝ Արդ առ-Ռահման ալ-Խոլեյֆաուիի գլխավորությամբ: 1971թ. մայիսին գումարվեց Բաաս կուսակցության 5-րդ երկրաճառային ինքնագումարը, որը նշանավորվում էր նրանով, որ ուղղիչ շարժման սկզբնական հետո առաջին ինքնագումարն էր: Բաասի սիրիական մասնաճյուղի գլխավոր քարտուղար ընտրվեց Հաֆեզ ալ-Ասադը, իսկ ներքին քաղաքական ասպարեզում ինքնագումարը հաստատեց Ազգային Առաջադիմական ճակատ ստեղծելու իր մտադրությունը, ինչը մերժվում էր նախկին ծախքաասական ղեկավարության կողմից:

1972թ. Սիրիայի ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցած ամենաշանակալից իրադարձությունը Ազգային Առաջադիմական ճակատի (ԱԱՃ) ստեղծումն էր, որի անհրաժեշտության մասին նշված էր «նոյեմբերի 16-ի» ուղղիչ շարժման ծրագրում: Սիրիայի առաջադիմական ուժեր համարվող կազմակերպությունները՝ Արաբական սոցիալիստական միությունը, Սիրիայի կոմունիստական կուսակցությունը, Արաբական սոցիալիստական յունիոնիստական շարժումը, Արաբական սոցիալիստների շարժումը՝ Բասա կուսակցության գլխավորությամբ, 1972թ. մարտի 7-ին պաշտոնապես հայտարարեցին Սիրիայի Ազգային Առաջադիմական ճակատի ստեղծման մասին:

Ճակատի կենտրոնական ղեկավարության 17 անդամներից 9-ը Բասաից էին, իսկ 8-ը մյուս կուսակցություններից: ԱԱՃ-ի նախագահ դարձավ Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ, ԱՎՍԿ-ի գլխավոր քարտուղար Հաֆեզ ալ-Ասադը: Մարտի 9-ին հրապարակվեցին ճակատի հիմնական փաստաթղթերը՝ խարտիան և կանոնադրությունը: Խարտիան նշում էր ԱԱՃ-ի խնդիրները ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում, ինչպես նաև միջարաբական ասպարեզում: Գլխավոր նպատակ էր համարվում 1967թ. Իսրայելի կողմից գրավված արաբական տարածքների ազատագրումը: Խարտիայում ընդգծվում էր Պաղեստինի Ազատագրության Կազմակերպությանը, որպես արաբական ազգային-ազատագրական շարժման ամենագլխավոր կազմակերպության, վճռական և բազմակողմանի օժանդակության անհրաժեշտության մասին:

Անհրաժեշտ է նաև նշել, որ խարտիայով որոշ չափով սահմանափակվում էին ճակատի մեջ ներգրավված ոչ բասասական ուժերի գործունեության շրջանակները, որոնք պարտավորվում էին ճակատից դուրս չստեղծել որևէ խմբավորումներ և չվարել կուսակցական-գաղափարական և քարոզչական գործունեություն ո՛չ երիտասարդության, ո՛չ բանակային շրջաններում:

ԱԱՃ-ի հիմնական մարմինը կենտրոնական ղեկավարությունն էր, որն իրականացնելու էր հետևյալ գործառնությունները. կազմակերպելու էր խարտիայի իրագործումը, մշակելու էր ԱԱՃ-ի գործունեության ծրագիրը, սահմանելու էր ճակատի մասնաճյուղերի ղեկավարության կազմը: Առաջադիմական ճակատի նախագահը ինքն էր իրավիքում կենտրոնական ղեկավարության նիստերը և նա էր իրականացնում ընդունված որոշումների իրագործման հսկողությունը: Կենտրոնական ղեկավարությունը պարբերաբար խորհրդակցություններ էր անցկացնելու ամիսը երկու անգամ, իսկ նախագահի առաջարկությամբ կարող էր գումարել արտահերթ նիստ: Կենտրոնական ղեկավարության նիստերը փակ են, իսկ որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Ինչպես վերը նշվել էր, կենտրոնական ղեկավարության տասնյոթ անդամներից ինը բասասականներ էին և հաշվի առնելով, որ բոլոր որոշումները պետք է ընդունվեին ձայների մեծամասնությամբ, կարող ենք եզրակացնել, որ Բասան, ըստ իր կամքի և հայեցողության, կարող էր անցկացնել ցանկացած որոշում, առանց

հաշվի առնելու ճակատում ներկայացված մյուս կուսակցությունների կարծիքն ու դիրքորոշումը:

Առաջադիմական ճակատի կանոնադրության 5-րդ հոդվածը սահմանում էր, որ «ճակատի մասնակիցները օգտվում են իրենց կազմակերպությունների շրջանակներում ազատ գործելու իրավունքից», սակայն 4-րդ հոդվածը սահմանում էր, որ «Միրիայի Արաբական Հանրապետությունում պաշտոնական որոշումներ են համարվում ԱԱԾ-ի և Բասսի որոշումները»: Փաստորեն ճանաչելով Միրիայում մի քանի քաղաքական կուսակցությունների գոյությունը, չէր ճանաչվում քաղաքական ուժերի ինքնուրույն գործունեության իրավունքը երկրի հասարակական կյանքում:

ԱԱԾ-ի ստեղծումը հնարավորություն տվեց Ասադին ավելի վստահ իրագործել էր քաղաքական ծրագիրը, քանի որ նրա մասնակիցները պետք է իրականացնեին Բասսի հավանությանն արժանացած ընդհանուր քաղաքականությունը, իսկ երկիրը ձեռք բերեց ներքաղաքական կայունություն: Փաստորեն Հաֆեզ ալ-Ասադը քաղաքակիրթ և օրինական ճանապարհով գրկեց Միրիայում գործող կուսակցություններին երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա հնարավոր ազդեցություններից և նպաստավոր պայմաններ ստեղծեց ամբողջ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու համար:

Հիմնադրելով Ազգային առաջադիմական ճակատը, դառնալով նրա նախագահը և երկրում քիչ թե շատ քաղաքական ուժ ներկայացնող բոլոր կազմակերպությունները ղնելով իր հսկողության տակ՝ Ասադն էլ ավելի ամրապնդեց իր և Բասս կուսակցության դիրքերը Միրիայում, իսկ վերոհիշյալ կուսակցությունների գործունեության սահմանափակումները նախադրյալներ ստեղծեցին Միրիայի՝ իրականում միակուսակցական համակարգով պետության վերածվելու համար:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼԻԶՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ
ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**

Իսլամական ֆունդամենտալիզմը Միրիայում ունի երկար պատմություն: Այն առաջացել է 1930-ական թվականներին, երբ Եգիպտոսում ուսումը ավարտած սիրիացի ռաաեոդները ներշնչվելով Մուսուլման-եղբայրների գաղափարախոսությամբ և վարադառնալով հայրենիք՝ հիմնեցին իսլամիստական ակումբներ և միություններ:

1946 թ. այդ ֆունդամենտալիստական խմբակները միավորվեցին «Մուսուլման եղբայրների» կազմակերպության մեջ: Մինչև Բասս կուսակցության իշխանության գալը (1963 թ.), քաջառությանը Արաբական Միացյալ Հանրապետության շրջանի (1958-61 թթ.), կազմակերպությունը հանդի-

սանում էր սիրիական քաղաքական կյանքի ակտիվ դերակատարներից մեկը: Այն մշտապես ներկայացուցիչներ էր ունենում խորհրդարանում և նույնիսկ մի շարք նախարարական կաբինետներում:

Բաաս կուսակցության իշխանության գալուց հետո ֆունդամենտալիստները անցան ընդհատակ և գլխավորեցին մի շարք (1964, 1965, 1967 և 1973 թթ.) էլույթներ բաասական վարչակարգի դեմ: 1976-ից Միրիայում գրանցվեց իսլամիստական շարժման նոր վերելք: Սպանության քիթախ դարձան բազմաթիվ ալավի գործիչներ: Իսկ 1979-82 թթ. փաստորեն երկրում ծավալվեց իսկական քաղաքացիական պատերազմ իսլամական ֆունդամենտալիստների և բաասական վարչակարգի միջև:

Շարժման հզորացումը և ակտիվացումը ուներ մի շարք պատճառներ:

1. Գաղափարական: Արմատական իսլամը ներթափանցեց հիասթափության հետևանքով առաջացած վակուումը, որի պատճառը մի կողմից աշխարհիկ լիբերալ զարգացման, իսկ մյուս կողմից սոցիալիզմի իդեալների տապալման մեջ պետք է փնտրել: Ազգայնական, բաասական լոզունգների նկատմամբ հիասթափության ֆոնին անխուսափելիորեն հետևեց բնիկ արաբական գաղափարախոսության առաջ գալը, քանի որ սիրիական վարչակարգին չհաջողվեց մշակել նրան համարժեք գաղափարախոսություն:

2. Տնտեսական: Տնտեսական ճգնաժամը ևս նպաստում էր հակակառավարական տրամադրությունների զարգացման և, որպես հետևանք, նոր՝ «արդար, իսլամական կառավարման» գաղափարի առաջացմանը: Իսրայելի հետ բախումը չէր կարող չանբաղաճալ տնտեսական վիճակին: Պաշտպանության ծախսերը կազմում էին ՄԱՀ բյուջեի ծախսերի կեսը: Բացի այդ, գաղափարական վերապահումները պահանջում էին տնտեսությանը գործել ոչ պրոլետարիական սոցիալիզմի հայացքների բաասիստական մեկնաբանության թելադրանքով, ինչը բերում էր երկրի տնտեսության էլ ավելի լճացմանը: Նման ծանր պայմաններում բնական էր հակակառավարական շարժումների համար նպաստավոր հողի ստեղծումը:

3. Դեմոգրաֆիական: Վերջին տարիներին արագորեն աճող բնակչության թիվը հանգեցրեց իսլամական և, մասնավորապես, արաբական երկրների բնակչության երիտասարդացմանը: Հետազոտողներից Այուբին արմատական իսլամիզմը ուղղակի կոչում է «տիպիկ երիտասարդական էլույթ»: ՄԱՀ բնակչության մեծամասնությունը 1960-80-ական թթ. 30 տարեկանից ցածր զանգված էր, որը և՛ ավելի շարժունակ է, և՛ ազդեցության ենթարկվող: Բացի այդ, սրան գումարվում է զբաղվածության պրոբլեմը:

4. Կոնֆեսիոնալ: Միրիայում իսլամական ֆունդամենտալիզմը արտահայտվել է առավելապես սլավիների նկատմամբ անտագոնիզմով: Բաաս կուսակցության իշխանության գալը նախանշեց ալավիստական գերիշխանության սկիզբը: Իսկ վերջիններս, կազմելով երկրի բնակչության 12 տոկոսը միայն, իսլամիստների կողմից համարվում էին հերետիկոսներ և ցածր

խավի ներկայացուցիչներ: Բացի այդ, նոր քաղաքական վերնախավը հանձն առավ հասարակության արմատական աշխարհիկացման և իսլամի հետ իշխանության երկփեղկման գործընթացին: Կենտրոնացնելով իշխանությունը՝ արավիները իրենց ձեռքերը վերցրեցին բոլոր լծակները: Չնայած նախարարների, ԱԺ անդամների և ՊԱՍՎ ղեկավարության մոտ 60 տակոսը կազմում էին երկրի մեծամասնությունը կազմող սուննիները, սակայն բարձրագույն սուլայական կազմի 90 տոկոսը արավիտներ են, ինչով և սպառնալից էր նրանց ազդեցիկության աստիճանը:

5. Ներքաղաքական: Այն պայմաններում, երբ երկրում բացակայում է ընտրության ազատությունը, զարմանալի չէ, որ ֆունդամենտալիստական կազմակերպությունները, որոնք առաջ էին քաշում հասարակ ժողովրդի մեծամասնությանը հասկանալի կոչեր, գրավում էին ընդդիմադիր դաշտն ամբողջությամբ: Փաստորեն, իսլամական ֆունդամենտալիզմը դառնում էր եզակի մասսայական գաղափարախոսությունը, որի միջոցով հնարավոր էր արտահայտել դժգոհությունը: Եվ դառնալով պրոպագանդայի միջոց, այն սպառնալից է իր քաղաքական առաջնորդներին զգալի ժողովրդականություն:

6. Արտաքին քաղաքական: Հաշվի առնելով, որ հենց Իսրայելի հետ պատերազմում արաբական երկրների պարտությունը ազգայնական, աշխարհիկ գաղափարախոսությունների, այդ թվում՝ բասսիզմի ու նասերիզմի, խաթարման և արմատականության զարգացման պատճառ դարձավ, պետք է կարևորել նաև արտաքին քաղաքական գործոնի ազդեցության կարևորությունը: Այդ պատճառով Ասադը և նրա շրջապատը իրականում չէին ձգտում խաղաղության, քանի որ նմանօրինակ պայմանագիրը կարող է նախ դառնալ արմատական ընդդիմության առաջացման պատճառ, իսկ հետո խաղաղության ձգտումը կվերացներ մեծ ռազմական կոնտինգենտի առկայության անհրաժեշտությունը: Բացի այդ, խաղաղության պայմանագրին դեմ են նաև սիրիական գործարար շրջանակները, որոնք չէին ցանկանում Արևմտաքի մուտքը սիրիական շուկա, քանի որ դա կարող է կործանարար հետևանքներ ունենա սիրիական արդյունաբերության համար: Չպետք է մոռանալ նաև, որ 1976 թ. ելույթների պատճառներից մեկը հանդիսացավ Լիբանանյան պատերազմին սիրիական զորքերի ոչ միանշանակ մասնակցությունը:

7. Հոգեբանական: Դեպի սեփական քաղաքակրթության «ուսկե դարը» վերադարձի՝ արևելյան ժողովրդների ձգտումը շատ երկար թերազնահատվում էր գիտնականների կողմից, սակայն այդ զգացումը միշտ շատ ուժեղ է եղել, ինչը հաստատավում էր շատ ժամանակակից տեղեկեցիկներով: Սա ուղեկցվում է արժեքային համակարգի ճգնաժամով: Նոր համակարգային որակ ունեցող կառույցները ներմուծվում են արևմտյան ուժերի կողմից, ինչը չի կարող չիանգեցնել պատասխան գործողության և այն արտահայտվել է սեփական իսլամական ավանդական արժեքների ընդգծմամբ:

**ՀԱՅՈՑ ԵՎ ԲԱՐԵԼՈՆՅԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ» ՎԻՊԱՍՔՈՒՄ**

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» ոչ միայն մեր, այլև տարածաշրջանի մի շարք երկրների ու ժողովուրդների պատմության անփոխարինելի սկզբնաղբյուր է:

Այնքան մեծ է Պատմահոր արծարծած հարցերի շրջանակը, որ այսօր էլ բազմաթիվ ուսումնասիրության կարոտ հարցեր կան, որոնք ավելի են արժևորում «Հայոց պատմությունը»: Մասնավորապես, ուսումնասիրության կարոտ են Պատմահոր վեր հանած մարտավարության զարգացման պատմության հարցերը:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ Խորենացին համեմատում է հայոց և այլ ժողովուրդների մարտավարությունները և փորձում ցույց տալ հայոց մարտավարության տեղը նրանց շարքում: Այս առումով ուշագրավ է «Հայկ և Բել» վիպասքը, որտեղ, ճիշտ է, Խորենացին հարցին անդրադառնում է այնքանով, որքանով նա հարկ է համարում ամբողջացնել հայ ժողովրդի պատմությունը, սակայն խնդրին հարևանցիորեն անդրադառնալով հանդերձ՝ նա, այնուամենայնիվ, մարտավարության վերաբերյալ բավարար նյութ է տալիս: Հարցն առավել ևս կարևորվում է, քանի որ մեզ հնարավորություն է տալիս պատկերացնել, թե 5-րդ դարում պատմիչը (հետևաբար՝ նաև գորավարը) որ չափով էր կարողանում վերլուծել այլ երկրների բանակների կողմից կիրառվող մարտավարությունը, այսինքն՝ ի՞նչ մակարդակի վրա էր գտնվում ռազմարվեստի տեսությունը:

Ռազմարվեստը վերլուծելու և այլ երկրների մարտավարությունների հետ հայոց մարտավարության համեմատման հարցը մեզ հնարավորություն է տալիս մեկ այլ կողմից մոտենալ «Հայոց պատմության» գնահատման խնդրին: Եթե մինչ այժմ պատմաբաններին առավելապես հետաքրքրել է, թե որ ժամանակաշրջանում տեղի ունեցած դեպքերն են հիմք հանդիսացել վիպասքի համար կամ, թե որքանով է իրական նրա պատմական հիմքը, ապա մեզ հիմնականում հետաքրքրում է կոնկրետ մարտական գործողությունների ընթացքի մեկնաբանությունը և Արևելքի երկրների տարբեր մարտավարական համակարգերը համադրելու Պատմահոր կարողությունը:

Նկատենք, որ Խորենացին, թեև համառոտ, սակայն նկարագրում է ռազմական գործողությունների ամբողջ ընթացքը: Ընդ որում, պատերազմի նախապատրաստումն ու վարումը նկարագրելիս Խորենացին աչքաթող չի արել մարտավարության տեսանկյունից կարևոր ոչ մի հարց: Այսպես.

1. շարադրվում է ինչպես Բելի պատերազմին նախապատրաստվելը (գորահավաքը և արշավանքը դեպի հյուսիս), այնպես էլ Հայկի ձեռնարկած

պաշտպանական միջոցառումները (Կադմոսի կազմակերպած նահանջն ու Հայկի հետ միավորվելը, գորահավաքը, հակառակորդին ընդառաջ շարժվելը),

2. ընդգծվում է վճռական ճակատամարտից առաջ երկու զորավարների կատարած տեղազննության և մարտավարական իրավիճակի գնահատման դերը,

3. բացահայտվում է մարտակարգերի կառուցման սկզբունքները,

4. մեծ նշանակություն է տրվում տեղանքին՝ որպես մարտավարական կարևոր տարրի, երկու կողմերի համար տեղանքի նպաստող ու խոչընդոտող հատկություններին,

5. նկարագրվում է սպառազինությունն ու ռազմական հանդերձանքը, սակայն կարևորվում է ոչ այնքան զենքի ու զրահի որակը, որքան զենքին տիրապետելու կարողությունը,

6. կարևորվում է բարոյահոգեբանական գործոնը, այն համարվում է հաղթանակի հասնելու վճռական կովան:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ԵՊՀ)

ԸՐԴԵՐ-ՀԱՅԵՐ-ԹՈՒՐԵՐ. ԱՇԽԱՀՐԱԶԱՎԱԶԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ

Մեր պահանջատիրությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ բխում է համաշխարհային հանրության կողմից ճանաչված «Ցեղասպանության հետևանքների վերացման անհրաժեշտության» միջազգային նորմից, որն էլ բխում է Միջազգային տրիբունալների (զինվորական) կանոնադրություններից, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի բանաձևերից ու «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի կոնվենցիայից» (9 դեկտեմբերի 1948թ., ուժի մեջ է մտել 1951թ-ի հունվարի 12-ից): Սակայն, ժամանակակից միջազգային հարաբերությունների հարուստ փորձը զալիս է մատնանշելու, որ հողի նկատմամբ նկրտումներ կարող է ունենալ եւ իր ինքնիշխանությունը տվյալ տարածքի վրա հաստատել այն հանրությունը, որը բնակվում է և էթնիկական ամենագորեղ տարրի է հանդիսանում այդ տարածաշրջանում: Այսինքն՝ անկախ պատմական և իրավական գործոններից, տարածքի վրա կարող է գերիշխել այն էթնիկ տարրը, որը ի վիճակի է բավականաչափ ուժային և այլ միջոցներ կիրառելու տվյալ երկրում իր սուվերենությունը հաստատելու և պահպանելու համար:

Հայկական լեռնաշխարհի տվյալ հատվածը այժմ բնակեցված է քրդերով (ավելի քան 40%) և թուրքերով (25-30%): Զրդերի թիվը այստեղ հասնում է 12 մլն., իսկ ըստ որոշ տվյալների՝ 18մլն. մարդու: Թուրքիայի քրդերը մոտ մեկ դար պայքար են մղում տիրանալու համար Արևմտյան Հայաստանին: Դեռևս անցյալ՝ 20-րդ դարի սկզբին Հայաստանի հարավային նահանգները իրենց հոծ քրդական բնակչության պատճառով ստացել էին «Զրդստան»

անունը. Սերի պայմանագիրը առաջին միջազգային փաստաթուղթն է, որը սույն տարածքը համարում է «քրդական»: 20-րդ դարի 20-ական թվականներից քրդերը ազգային կազմակերպություններ ստեղծեցին՝ Արևմտյան Հայաստանում անկախ պետականություն ստեղծելու ակնկալիքով: Այս ժողովուրդն այժմ իր ջանքերը փաստորեն ուղղում է Թուրքիայի արևելքում ինքնավարության ստեղծմանը: Սակայն հանդիպում է թուրքական իշխանությունների դաժան, պատմությունից հայանի այլ ազգերի իրավունքները մերժելու քաղաքականությանը: Նրանք բազմիցս փորձել են խաղաղ ճանապարհով լուծել այդ հարցը, սակայն միշտ հանդիպել են թուրքերի անօրինակ քրդատյացության: Վերջին 15 տարիները՝ ընթացքում մոտ 37 հազար մարդ, հիմնականում քրդեր (մոտ 35 հզ. մարդ, որից 8,2 հզ.՝ Հյուսիսային Իրաքում 1997թ. օգոստոսից հոկտեմբեր ընկած ժամանակաշրջանում), սպանվել են թուրք - քրդական հակամարտության հետևանքով: Ավելի քան 4000 քրդական գյուղ է տեղահանվել և փոխադրվել կենտրոնական Անատոլիա, որից 1700-ը Դիարբեքիի իլից՝ ապստամբների հետ համագործակցելու պատճառաբանությամբ:

Քրդական հարցը բազմիցս օգտագործվել է մեծ ու փոքր երկրների կողմից՝ ի շահ իրենց արտաքին քաղաքականության: Մասնավորապես, Հունաստանը և Սիրիան բազմիցս մեղադրվել են թուրքական կառավարության կողմից Արդուլլահ Օզալանի ապստամբությանը աջակցելու մեջ: Դեռ շատ տարիներ առաջ Արևմտյան քաղաքագետները իրենց «մտահոգությունն» էին արտահայտում «Քրդական հարցում» ռուսական/ԽՍՀՄ միջամտության առումով. դեռ 1946թ. հուլիսին «Foreign Affairs»-ում հրատարակված մի հոդվածում նշվում էր, որ քրդական անկախությանն ուղղված շարժումը «ամենամտահոգիչն է Մերձավոր Արևելքի կոնֆլիկտներից, քանի որ այն աջակցություն էր գտել ի դեմս Խորհրդային Ռուսաստանի և, որ դա վերածում է քրդերին ռուսական լծակի»:

ՔԱԿ-ը սկսեց իր ակտիվ գործունեությունը յոթանասունականներին իբրև մարքսիստական կազմակերպություն Թուրքիայի արևելյան մահանգների գյուղական շրջաններում: Այն շուտով գլխավորեց քուրդ ժողովրդի ազգային ազատագրական շարժումը Թուրքիայում և ութսունական թվականների սկզբից ծավալեց անմախաղեպ մի ապստամբություն, որը տևեց մեկ ու կես տասնամյակ: Կազմակերպության հիմնական գործողությունները 1990-ականներին ծավալվում էին Արևմտյան Հայստանի տարածքում, որտեղով, ըստ արևմտյան մախազի, պետք է անցներ Բաքու-Չեչենան մավթամուղը: Թուրքիայի կառավարող շրջանները սկսեցին շահարկել այս վախճան, մանավանդ, որ քրդական կողմը այս առումով, տարք տալով Ռուսաստանի ճնշմանը, բազմիցս նշել էր, որ խաթարելու է այս ծրագիրը: Ռուսաստանը բացահայտ քափահարեց «քրդական խաղաքարտը» Թուրքիայի մոռոթի առջև, կանխելու համար վերջինիս աճող ազդեցությունը մախկին ԽՍՀՄ տարածքում: Թուրքիան, ընկալելով ռուսների քայլերի վտանգը իրենց երկրի համար, առաջարկեց նրանց համաձայնության գալ: Շուտով Մոսկվայում ստորագրվեց «Ախաբեկ-

չության կանխման մասին արձանագրությունը», որը վերջ դրեց վերջին քրդական ապստամբության աջակցությանը ռուսների կողմից, ի պատասխան Թուրքիան պարտավորվեց չխառնվել հյուսիսկովկասյան գործերին եւ հանձնել բոլոր չեչեն անջատողականներին: Թուրքիան և Ռուսաստանը 1995թ. հուլիսի 21-ին վերահաստատեցին, որ չեն աջակցելու անջատողական շարժումներին, որ վտանգում են երկու երկրների տարածքային ամբողջականությունը: Ռուսաստանը ակտիվորեն շարունակում էր շահարկել «քրդական հաղթարտությունը» ի օգուտ իր տարածաշրջանային շահերի՝ մերթ համագործակցելով Թուրքիայի, մերթ էլ՝ կուրմանջների հետ. ինչպես միշտ ռուսները եւ թուրքերը լեզու գտան և ամեն ինչ նորից «խաղաղվեց», բայց ինարկե ոչ քրդերի համար:

Քրդերի ու հայերի շահերը բախվել են և ունեցել հայերի համար ողբերգական հետևանքներ: Ակնհայտ է, որպեսզի ինչ-որ արդյունքի հնարավոր լինի հասնել Արևմտյան Հայաստանի տարածքների նկատմամբ, անհրաժեշտ է գոնե սկզբնական շրջանում աջակցություն ցույց տալ քրդական ազատագրական շարժմանը Թուրքիայում՝ միաժամանակ արժարժելով ցեղասպանության և նրա հետևանքների վերացման խնդիրը և դրանով իսկ լծակ ձեռք բերել վերջինիս յուժման համար: Հենց այս ուղին է բռնել ՀՀ երկրորդ նախագահը: Կարծում եմ, պահանջատիրությունը պետք է կառուցել ոչ թե ամբողջ հայկական տարածքների կամ Սևրի Հայաստանի վերադարձման վրա, այլ Այրարատ, Խաղտիք, Կղարջք, Տայք, Տավուրեթան, Վասպուրական մահանգների ու գավառների վերադարձման վրա, չէ որ սրանց բնակչությունը թեև տեղահանվել է 1915-20թթ., սակայն, զինված պայքարի շնորհիվ՝ չի ոչնչացվել, այլ՝ ցրվել է աշխարհում: Սա ավելի իրատեսական ծրագիր է: Հայ դիվանագետները և քաղաքական գործիչները դարասկզբին չկարողացան ընդհանուր հայտարարի գալ ո՛չ թուրք, ո՛չ էլ քուրդ գործընկերների հետ, իսկ վերջիններս բավական ճկուն էին այս հարցում, մենք չկարողացանք վրացիների հետ կոմպրոմիսի գալ և որպես հետևանք և՛ մենք, և՛ վրացիները տարածքային կորուստներ ունեցանք: Արևմտյան Հայաստանը վերագտնելու մեր ձգտումը սերտորեն կապված է հայ դիվանագիտության հետ, քանզի Հայաստանը չունի այն ռեսուրսները, որ ուժով ստիպի Թուրքիային որևէ բան: Սակայն ունի բնական դաշնակիցներ, որոնց հետ համագործակցությունը և կոմպրոմիսի գալը կտա այն ամենը, ինչը մենք այժմ ռեալ կարող ենք «մարտել»: Վաղ թե ուշ կարևորագույն խնդիր է լինելու քրդական գործունի միջոցով թուրքական ռազմական մեթենային հակազդելը կամ աղբբեջանական զինուժի մեկուսացումը, ինչը ավելի դյուրին կլինի «քրդական պատմեշի» առկայության դեպքում: Թուրքերը, ի սկզբանե ճիշտ կողմնորոշվելով, քրդերի ձեռքով կրակից շագանակ հանելու քաղաքականությունը որդեգրեցին, որը կիրառեցին մինչև անգամ ծոցի «պատերազմում», առավել ևս 1915-1923թթ. Մեծ Եղեռնի մասին. մինչև 20-րդ դարի 20-ական թթ. նրանց հաջողվեց բնաջնջել հայերին Արևմտյան Հայաստանում՝ մեծամասամբ օգտագործելով «սև գործողությունում» քրդերին: Հանգուցալուծումը կախված է այն բանից, թե մեր դիվանագի-

տությունը կկարողանա՞ արդյոք «ուրիշի ձեռքով շագանակ հանել կրակից», թե՞ ինչպես միշտ՝ ընդհակառակը... Եվ բավականին ճկուն կգտնվի՞, որ գոնե այս անգամ ինքը կիրառի «divide et impera» հայտնի դիվանագիտական սկզբունքը:

ՄԵԼ ԶՈՆՅԱՆ ԽՈՒԲԵՆ (ԵՊՀ)

ՆՈՐ ՓԱՍՏԵՔ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՄԵՆԱՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր պատմության ամենաքիչ ուսումնասիրված խնդիրներից մեկը մահմեդական հայերի թեման է, և սրա պատճառները օբյեկտիվ են: Մահմեդական հայ ասելով՝ առաջին հերթին հասկանում ենք համշենահայերին, և ելնելով սրանից՝ կարելի է ասել, որ մահմեդական հայերի պատմության մեջ առավել ուսումնասիրված է հենց մահմեդական համշենահայերի թեման:

8-րդ դարում արաբական հպաժամքների պատճառով հայոց Համամ և Շապուհ Ամատունի իշխանները 12 հազար հայ բնակչությամբ (Արագածոտն և Կոտայք գավառներից) գաղթում են Սև ծովի հարավ-արևելյան ափամերձ շրջանները: Այնտեղ հիմնվում է իշխանություն և կառուցվում է Համամաշեն (Համամ իշխանի անվամբ) քաղաքը, որի անունով էլ հետագայում կոչվեցին տեղանքը և նրա հայ բնակիչները: Այսպես Համամաշենը սղվեց Համշենի և այստեղից էլ՝ նաև համշենահայ անունը: Համշենի իշխանությունը գոյատևեց մինչև 15-րդ դարի վերջերը՝ ընկնելով օսմանյան լծի տակ: 18-րդ դարի սկզբներին համշենահայերին (ինչպես նաև այդ տարածքում բնակվող մյուս քրիստոնյա ժողովուրդներին) սկսեցին բռնությամբ պարտադրել մահմեդականություն: Դրա հետևանքով համշենահայերի մի մասը կոտորվեց, մի մասը գաղթեց, իսկ մի մասն էլ ընդունեց մահմեդականություն:

Համշենահայության պատմությանը, բանահյուսությանը, բարբառին անդրադարձել են մի շարք հեղինակներ: Պետք է նշել, որ վերջին շրջանում համշենահայության խնդրին սկսել են ավելի շատ անդրադառնալ ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակներ, ինչպես նաև թուրք հեղինակներ: Վերջիններս պահում են իրենց բնորոշ գիծը, այն է՝ պատմության խեղաթյուրումը:

Թուրք հեղինակները ժխտում են թուրքիայում ապրող համշենահայության հայկական ծագում ունենալը և փորձում են նրանց ծագումը կապել բյուրքական ցեղերի հետ: Սակայն, որոշ թուրք հեղինակների մոտ կարող են հանդիպել նաև ճշմարտամասն տեղեկություններ: Այսպես, վերջերս գերմանա-սերմակ թուրք գրող Քեմալ Յալընը գրում է «Ճպտյալ հայերի» մասին, որոնք ապրում և աղոթում են իբրև մահմեդականներ, իսկ իրենց քրիստոնյա լինելը գաղտնի պահում: Նրանց ընտանիքներն ապրում են իբրև թուրքեր կամ քղեր և երեխաները երբեք չեն ուսանում իրենց մայրենի հայերենը: Շատերը 15-17

տարեկան հասակում են տեղեկանում, որ հայ են, իսկ նրանց ծնողներն ասում են «մի խոսիր այդ մասին, միայն երազիր»:

Համշենահայերի խնդրին են անդրադարձել նաև որոշ բուրբ քաղաքական գործիչներ: Այսպես, 1990-ականների կեսերին Թուրքիայի արևելյան նահանգները այցելած «Մայր Հայրենիք» կուսակցության նախագահ և Թուրքիայի փոխվարչապետ Մետոք Յըլմազը նշել է, որ համշենահայեր գոյություն չունեն և դրանով արժանացել բանակի ու մամուլի խիստ քննադատությանը:

Մահմեդական հայերի, այդ թվում նաև համշենահայերի թիվը Թուրքիայում մեծ է: Բացի համշենահայերից, Թուրքիայի արևելյան շրջաններում կան թուրքացած, քրդացած հայեր, որոնց գերակշիռ մասը թուրքացել կամ քրդացել է Մեծ Եղեռնի ժամանակ: Նրանց մեծ մասը գիտեն կամ գիտակցում են իրենց հայ լինելը, բայց խուսափում են այդ մասին ասել, իսկ մյուս մասը կասկածներ ունի իր ազգային պատկանելության վերաբերյալ և ցանկանում է ճշտել, բայց վախի մթնոլորտը թույլ չի տալիս դա անել: Պետք է նշել, որ Թուրքիայում մահմեդական հայերի թվաքանակի խնդիրը ունի խորը ուսումնասիրության կարիք, որը այժմ դժվար է կապված մի շարք հանգամանքների հետ:

2001թ. օգոստոսին լինելով Թուրքիայում՝ մենք տեղեկացանք այնտեղ բնակվող համշենահայերի մասին որոշ նոր փաստերի: Պետք է նշել, որ նրանք նույնպես գիտակցում են իրենց հայ լինելը, բայց նրանց շրջապատող անբարենպաստ մթնոլորտը թույլ չի տալիս դա արտահայտել բարձրաձայն: Կան համշենահայեր, որոնք ժխտում են իրենց էթնիկ որևէ առնչությունը հայերի հետ և ամեն կերպ ցանկանում են ներկայանալ իբրև թուրք: Սա կարող է բացատրվել վախի հանգամանքով և, ըստ մեզ, նաև կարող է ունենալ տիրող ազգին պատկանելու հոգեբանական պահ: Կա համշենահայերի մի խումբ ևս, որոնց եթե հայ անվանեն, ապա նրանք կվիճեն և կասեն, որ իրենք «հեմշի» ազգից են և ոչ մի ուրիշ ազգի հետ կապ չունեն:

Թուրքիայում բնակվող համշենահայերի այժմյան վիճակի, բնակության վայրերի, զբաղմունքի մասին տվյալները քիչ են և հանդիպում են շատ կցկտուր: Ըստ մեր ունեցած որոշ տվյալների՝ ներկայիս Թուրքիայում ապրում է 50-60 հազար համշենահայ, բայց նշենք, որ համշենահայերի թվաքանակը պետք է, որ ավելի մեծ լինի: Ներկայումս համշենահայերը Թուրքիայում բաժանված են երկու խմբի: Առաջին խմբին պատկանողները բնակվում են Արդվին նահանգի Հոփա և Բորչկա շրջանների գյուղերում, ինչպես նաև կենտրոնում: Նրանք խոսում են Համշենի բարբառով: Մրանց թվաքանակը մոտ 25 հազար է: Երկրորդ խմբին (արևմտյան համշենահայեր) պատկանողները բնակվում են Ռիզե նահանգի Հեմշին-Չամլիհեմշին-Արդաշեն-Փազար-Ֆընդըքլը շրջաններում, Կազար լեռան ստորոտում, լազերով բնակեցված տարածքներին մոտ: Մրանք չեն պահպանել իրենց բարբառը, բայց փորձում են պահել մշակույթը (օրինակ՝ մինչև այժմ տոնում են Վարդավառը):

Աղափազարի շրջակայքում ևս մի քանի համշենյան գյուղեր կան, որոնց բնակիչները գաղթել են Արդվիհի տարածքից և պահպանել ու օգտագործում են Համշենի բարբառը:

Թուրքիայում տեղի ունեցող ուրբանիզացիային համահունչ՝ երիտասարդ համշենահայերը հիմնականում ապրում են մեծ քաղաքներում Սամսրուլում, Անկարում, Իզմիրում, Սամսունում:

Անդրադառնալով համշենահայերի զբաղմունքին՝ նշենք, որ, օրինակ, Հոփայի համշենահայերը շատ չեն սիրում պետական ծառայությունը, քանի որ ունենալով ըմբոստ քննավորություն՝ նրանք չեն սիրում աշխատել որևէ մեկի հրամանի ներքո: Մինչև 1970-ականների կեսերը նրանք ունեին տիպիկ ֆեոդալական կենցաղ: Ապրուստի միջոցներ հայթայթում են անասնապահության, եռագործության, ինչպես նաև տրասպորտային բեռնափոխադրումների միջոցով:

Իսկ Ռիզեի համշենահայերը հնուց ի վեր և այժմ էլ հայտնի են որպես հացթուխներ, և հատկապես՝ որպես հրուշակագործներ:

Անդրադառնալով կրոնական խնդրին՝ նշենք, որ կրոնի (մահմեդականության) ազդեցությունը և դերը մեծ չէ այժմյան համշենահայերի մոտ: Մինչև 1980-ականները համշենյան շատ գյուղերում մզկիթ անգամ չի եղել: Սակայն իսլամիստական ուժերը ամեն ինչ արել են այդ վիճակը փոխելու համար և այժմ այդ շրջաններում մզկիթներ հանդիպում են համարյա ամեն քայլափոխի: Ամփոփենք.

1. Այժմյան Թուրքիայում էլ շարունակում է գոյություն ունենալ համշենահայկական համայնքը, որի անդամները դարեր առաջ բռնի մահմեդականացված էթնիկ հայեր են:
2. Թեև նրանք ենթարկվել են ծուլման, բայց մինչև այժմ էլ շարունակում են պահպանել իրենց մշակույթը, իսկ որոշ մասը շարունակում է օգտագործել իր մայրենի՝ Համշենի բարբառը:
3. Այժմյան Թուրքիայի վերոնշյալ շրջաններում համշենահայերը բնակչության կարևոր տարրն են և տարբեր բնագավառներում ունեն իրենց որոշակի դերը:

Ներկայացված ոչ մեծաթիվ, բայց մեզ համար նորահայտ փաստերը մեկ անգամ ևս զալիս են ապացուցելու, որ մահմեդական համշենահայերի և ընդհանրապես մահմեդական հայերի խնդիրը դեռևս բաց է և կարիք ունի խորը ուսումնասիրության:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԱՐԱՔԱԿԱՆ ՏԱՐԻԻ ՀԱՍՏԱՏԱՆ
ՇՈՒՐՋ (VIII-XII Դ.Դ.)**

Հայաստանի նվաճումը արաբների կողմից, ինչպես այլ երկրների դեպքում, ուղեկցվում էր ոչ միայն նրանց ներխուժմամբ, այլև երկրի ներսում հաստատմամբ, ուր նրանք հնարավորություն էին ստանում մշտական հսկողություն սահմանել Արմինիա ոստիկանության ողջ տարածքում և արդյունավետ ձևով ճնշել ցանկացած անկախության ձգտման դրսևորում այնտեղ:

Հայաստանում արաբական ցեղերի հաստատման մասին տեղեկությունները սակավ են (Ղևոնդ, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Մովսես Կաղանկատուացի և այլոք): Արաբական կարևոր աղբյուրների շարքում անհրաժեշտ է հիշատակել Յակոբբի, Բալազուրիի, Իբն Խալլիկանի, Թաբարիի և այլոց աշխատությունները:

Ի մի բերելով աղբյուրների տվյալները և արևելագետների ուսումնասիրություններում եղած դիտարկումները, կարելի է մատնանշել այն բնակավայրերը, ուր հաստատվել է արաբամահմեդական տարրը: Դրանք են՝ Ալ-Սուդուրը, որ ներառում էր Չորրորդ Հայքը՝ Մելիտենն կենտրոնով, Հարավարևմտյան Հայաստանում՝ Աղձնիքը, Բերկրին (Աղիովիտ), Գողթնը (Վասպուրական):

Աղձնիքը առաջին նահանգն էր, ուր ոտք դրեցին հյուսիսարաբական Շայբան ցեղի ներկայացուցիչները: Նրանք հաստատվեցին Նիսիկերտում, Ամիդում, Արզնում, Բաղեշում: Քաջ հայտնի է, օրինակ, որ Ամիդ քաղաքը կոչվեց Գիար Բաքր Շայբան արաբական ցեղի անունով (Շայբանը Ռաբի'ա ցեղախմբին պատկանող Բաքր ցեղի մի հատվածն էր): Հետագայում Արզնում ու Բաղեշում ստեղծվեց Ջուրարիկների (Բաքր ցեղից) ամիրայությունը:

Հայաստանում հաստատված հաջորդ ցեղը Սուլայմն էր, ավելի ճիշտ՝ նրա Կայսիկ հատվածը: Այն եռանդուն կերպով մասնակցություն էր բերում Բյուզանդիայի դեմ մղվող պատերազմներում, ուստի հաստատվեց Բյուզանդիային սահմանամերձ տարածքներում՝ Բաղեշից սկսած մինչև Կարնո քաղաքը: Այս տարածքը, որպես հենարան ծգտագործելով, այդ ցեղը կարողացավ զենքի ուժով տարածվել դեպի արևմուտք և մասնավորապես հաստատվել Կամախում, որը, ըստ Բալազուրիի, Սուլայմի ներկայացուցիչ Ումայր իբն ալ-Հուբաբը կարողացավ գրավել բյուզանդացիներից: Բերկրիում և Գողթնում հետագայում ստեղծվեցին Ութմանիկների (Սուլայմի մեկ այլ հատված) ամիրայությունը և Մաջաններին ենթակա մի ամիրայություն:

IX դ. կեսերից Կայսիկները կարողացան տիրել Մանազկերտին և հիմնել Մանազկերտի Կայսիկների ամիրայությունը:

Բացի հարավ-արևմտյան Հայաստանից, արաբները հաստատվել էին նաև Այրարատ նահանգում, և առաջին հերթին Դվին քաղաքում, որը

Արմինիայի վարչական կենտրոնն էր և արաբ ոստիկանի նստավայրը, ուր մեծ թվով մահմեդականներ էին բնակվում:

Եթե իրավ է, որ Գվինը ունեցել է մոտավորապես հարյուր հազար բնակչություն, ապա հաշվի առնելով աղբյուրների հաղորդած որոշ տեղեկություններ, մենք ենթադրում ենք, որ քաղաքը կարող էր ունենալ մոտավորապես 20-30 հազար մահմեդական ազգաբնակչություն:

Պետք է հերքադրել, որ մահմեդականների թիվը նկատելի է եղել Անիում Շաղիադյանների անկախության ժամանակաշրջանում (1072-1199):

Արևելյան Հայաստանի որոշ այլ քաղաքներում մուսուլմաններն էին մահմեդականներ: Այս հարցի պարզաբանմանը կարող է նպաստել վիճագրական նյութը՝ արաբերեն արձանագրությունների և տապանաքարերի ուսումնասիրությունը:

ՄԿՐՏՈՒՅԱԼՆ ԳԱՅԱԼՆԵ (ԵՊՀ)

ԱՐԱԲՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ԱԼ-ԲԱԼԱԶՈՒՐԻԻ «ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԳՐԶԻ»

Անդրկովկասի նվաճման սկզբնական ժամանակաշրջանում արաբների հարաբերությունները տեղական բնակչության հետ իրականացվում էր պայմանագրերի միջոցով, որոնցով սահմանվում էին բնակչության պարտականությունները նվաճողների նկատմամբ: Նրանց հարկային քաղաքականությունը նվաճված երկրներում իրագործվում էր Սասանյան Պարսկաստանից փոխ առնված հարկային համակարգի միջոցով, որը մեծ զարգացում ապրեց Օմայանների օրոք:

Արաբների վարած հարկային քաղաքականության մասին տվյալներ են հաղորդում Աբու Յուսուֆը (7-րդ դ.), Մավարդին (9-րդ դ.), ալ-Բալազուրին (9-րդ դ.): Դրանց ուսումնասիրության ուղղությամբ մեծ աշխատանք են կատարել Հ. Մանանդյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ:

Ալ-Բալազուրին իր «Երկրների նվաճումների գրքում» վերոհիշյալ աշխատության մեջ շարադրել է Արաբական թերակղզու, Եմենի, Շամի, Օմանի, Եգիպտոսի, Հայաստանի և այլ երկրների արաբական նվաճումների պատմությունը, տեղեկություններ հաղորդելով մահմեդական նվաճումների պատմության և սոցիալական կառուցվածքի, հարկահանության մասին: Այսպես, Օսմանը խալիֆա հոջակվելուց հետո (654-656թթ.) հրամայում է Հաբիբ իբն Մալամային արշավելու Հայաստան: Երբ վերջինիս զորքը հասնում է Կարին և պաշարում այն, տեղի բնակիչները համառ դիմադրությունից հետո հանձնվում են արաբներին՝ գլխահարկ տալու պայմանով: Ալ-Բալազուրին, սակայն, չի նշում հարկի չափը: Նրա հաղորդած տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ սկզբում մահմեդական պայմանագրերը ունեցել են բանավոր բնույթ:

Այնուհետև, բերելով արդեն ավելի ուշ շրջանի պայմանագրերի բնագրերը, ալ-Բալազուրին ոչ միշտ է հաղորդում, թե ինչ պայմաններով են արարները պահպանել տեղական բնակչության կյանքը, ունեցվածքը, եկեղեցիները, քաղաքի պարիսպները: Մինչդեռ այլ աղբյուրներից հայտնի է, որ նվաճված երկրների քրիստոնյա ազգաբնակչությունը անձի և ունեցվածքի ազատություն կարող էր ձեռք բերել գլխահարկ (ջիզյա) և հողահարկ (խարաջ) վճարելու պայմանով:

Հարկերի հավաքման մասին ավելի շատ մանրամասներ է հեղինակը հաղորդում, երբ պատմում է Արճեյ և Ապահունիք գավառների գրավման մասին և նշում է, որ Հաբիբը ժողովրդից գլխահարկ է վերցնում, իսկ իշխաններին «խաղաղություն է պարզեում՝ խարաջ տալու պայմանով»: Այսպես, Հաբիբ իբն Մասլաման Դ-վինը նվաճելուց հետո բնակչությունը տալիս է ապահովության գիր (աման), երաշխավորելով նրանց կյանքի, գույքի ապահովությունը: Նա ավելի մանրամասն տվյալներ է հաղորդում Տփղիսի բնակչությանը տրված պայմանագրի տեքստում, ուր շեշտը դրվում է նաև քրիստոնյա համայնքների կողմից մահմեդականների նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա:

Երբ Մրվան իբն Մահմեդը արշավում է Մարիթ (այժմ՝ Դադստան) երկիրը, նրա իշխանի հետ խաղաղության դաշինք է կնքում ամեն տարի 1000 ստրուկ և 100 000 մոդ (չափի միավոր) ցորեն մատակարարելու վերաբերյալ:

Արաբների վարած ծանր հարկային քաղաքականությունը 8-րդ դարի երկրորդ կեսին Մուշեղ սպարապետի գլխավորությամբ հիմք դարձավ ապստամբության բռնկման համար: Ծանր հարկային քաղաքականության հետևանքով դրությունը էլ ավելի սրվեց 9-րդ դարի 2-րդ կեսին, երբ Արաբական Խալիֆայությունը ապրում էր իր թուլացման շրջանը:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ)

ՄՈՌԱՅՎԱՏ ՀՈՒՆԱԳԻՐ ՄԻ ՀՈՒՇԱՐՉԱՆ

ՃԻՃ դարավերջին Կասպադովկիայի տարածքից՝ Կեսարիայի շրջանից հայտնաբերվել է երկաթե սաղավարտածև մի դիմակ՝ հունարեն արձանագրությամբ: Արձանագրության առաջին մասում ընթերցվում է՝ «ՏԻԳՐԱՆ ԹԱԳՎՎՈՐ ՀԱՅՈՑ»: Գրակիր հուշարձանը 1891 թ. ուղարկվել է Կոստանդնուպոլիս, որից հետո դրա մասին որևէ տեղեկություն հայտնի չէ: Մեր նախնական դիտարկումներով՝ հունագիր հուշարձանը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Տիգրան Բ-ի իշխանության ժամանակաշրջանին, ավելի որոշակի՝ Միքայաթ Եվսյատրի դաշնակցությամբ նրա արևմտյան արշավանքների տարիներին: Նշենք, որ հունագիր հուշարձանը այդ մասին առայժմ հայտնի միակ նյութական վկայությունն է:

Արձանագրության առաջին (և, հավանաբար, միակ) հրապարակումը եղել է 1908 թվականին, սակայն այն չի մտել հայագիտության շրջանառության մեջ, ուստի մեր հրապարակումով նպատակ ունենք մաս լրացնելու այդ բացը:

ՅԱԶԸՃՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՅ-ԶՐԴ-ԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ
1919-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1918թ. հոկտեմբերի 30-ին Օսմանյան կայսրության ստորագրած Մուդրոսի կապիտուլյացիայով, բուրքական զորքերը հեռանալու էին մաս Կարսի նահանգից: Նախատեսելով այդ նահանջը, բուրքական և աղբրեջանական իշխանությունները տեղական իսլամ բնակչությունից կազմակերպեցին այսպես կոչված «Արևմտյան Կովկասի հանրապետությունը» և «Մուսուլմանական ազգային խորհուրդը» («Շուրա»), որոնց հիմնական նպատակն էր թույլ չտալ նահանգի տարածքի կցումը Հայաստանի և Վրաստանի հանրապետություններին:

Բրիտանացիների բազմադիմի քաղաքականության պատճառով, հայկական գերիշխանության հաստատումը նահանգում ձգձգվեց մինչև 1919թ. ապրիլ ամիսը: Ապրիլի ավարտին, նահանգի մեծ մասը, իսկ հուլիսին՝ ամբողջ նահանգը անցավ Հայաստանի Հանրապետության գերիշխանության տակ, կազմավորելով ՀՀ վարչական բաժանման չորրորդ նահանգը:

Կարսի նահանգ հայ գաղթականության վերադարձից հետո իսկ, նահանգի բնակչության կեսից ավելին կազմում էին քրդերը, որոնք առավել համախույժ ապրում էին Արդահանի և Կաղզվանի գավառներում: Կարսի նահանգի քրդերը 1878-1918թթ. կեղեքվել էին ռուսական, իսկ 1918թ. հունվար-1919թ. ապրիլ ժամանակաշրջանում բուրքական քաղաքացիական իշխանությունների և զինվորականության ձեռքով: Հետևաբար, մրանք, որոշակի զգուշավորությամբ հանդերձ, ողջունեցին հայկական իշխանության հաստատումը նահանգում. թուրդ ցեղապետներից շատերը շտապեցին իրենց հավատարմությունը հայտնել հայկական իշխանություններին:

1919թ. ապրիլի 12-ին Կարսի (Վանանդի) նահանգապետ նշանակված բազմափորձ պետական վարչական պաշտոնյա Ստեփան Դորդանյանը նահանգի օտարազգիների, մասնավորաբար, մուսուլման թուրքերի ու, հատկապես, քրդերի նկատմամբ վարում էր մեղմ քաղաքականություն, աշխատելով սիրաշահել նրանց երևելի մարդկանց՝ ցեղապետներին և հոգևորականներին: Հայկական իշխանության օգտին մա փորձեց օգտագործել հատկապես «Հաչոդ քրդեր» աղանդի ղեկավար Շեյխ Հուսնիին (աղանդի հետևորդները գեներից հրաժարման ու խաղաղասիրության կոչ էին անում): Քրդերին սիրաշահելու նպատակ էր հետապնդում մաս Նախիջևանի բուրք-աղբրեջանցի

Իբրահիմ Կադիմովի նշանակումը Արդահանի գավառապետի պաշտոնում. դրանով, հայկական իշխանությունը, միաժամանակ, ուժգին հարված էր հասցնում աջարացի Ջալալ բեգ Խիմշիևի մեծ ազդեցությանը Արդահանի գավառում, որը Վրաստանի իշխանությունները փորձում էին ծառայեցնել գավառի նկատմամբ իրենց տարածքային նկրտումների իրականացման նպատակներին:

Սու. Դորդանյանին հակառակ, Կարսի նահանգում տեղակայված հայկական բանակի բարձր հրամանատարական կազմը, մասնավորապես, զենեքալ Հովսեփյանը, քրդերի մեջ տեսնում էին միայն թշնամիներ: Քրդերի նկատմամբ նման վերաբերմունք էին դրսևորում նաև վրեժով լցված արևմտահայ կամավորական խմբերը, ինչը հետևանք էր հայերի ցեղասպանության ընթացքում քրդերի՝ որպես կատարողների, ակտիվ մասնակցության: Քաղաքացիական և զինվորական իշխանությունների այս տրամագծորեն հակառակ մոտեցումները Կարսի նահանգի քրդերի նկատմամբ շփոթի էին մատնում Երևանի կենտրոնական իշխանություններին, որոնք մինչև համրապետության կործանումը այդպես էլ չկարողացան պետական հստակ քաղաքականություն մշակել հանրապետության ոչ հայազգի ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Ձինվորականության կամայականությունների և կենտրոնական իշխանությունների անդամալուծության պատճառով, ապարդյուն անցան քրդերին սիրաշահելու ուղղված նահանգապետ Սա. Դորդանյանի հետևողական քայլերը: Ավելին, դրանք մղեցին նահանգի քրդերին՝ թեքվելու թուրքերի կողմը: ՀՀ-ի նկատմամբ քրդական թշնամանքը նահանգի քրդերից անցավ բեմալականների վերահսկած տարածքների քրդերին: Հետևանքը եղավ այն, որ թե՛ Կարսի նահանգի քրդերը և թե՛ դրան սահմանակից շրջանների քրդերը ակտիվ մասնակցություն ունեցան ՀՀ-ի դեմ Բյազիմ Կարաբեքիրի 1920թ. օգոստոսի 18-ին սկսած պատերազմական գործողություններին, շատ հաճախ կատարելով առաջապահ ջոկատների և հետախույզների դեր:

Ինչպես հայտնի է, 1920թ. հայ-թուրքական պատերազմն ավարտվեց Կարս բերդաքաղաքի համարյա առանց դիմադրության հանձնման խայտառակությամբ, հայկական բանակի խոշոր պարտությամբ, Ալեքսանդրապոլի ամոքալի դաշնագրով և անկախ հայկական պետականության կործանումով: Այսպիսով, Կարսի նահանգի քրդության՝ հօգուտ ՀՀ շահերի չօգտագործումը իր որոշակի դերը ունեցավ հայկական անկախ պետականության կործանման մեջ:

Սեր զեկուցման մեջ, հայկական, ռուսական, քրիտանական և այլ տպագիր ու անտիպ փաստաթղթերի, հուշագրությունների, պատմագիտական աշխատությունների, ժամանակի հայկական պարբերական մամուլի և այլ նյութերի հարուստ հիմքի վրա ուսումնասիրել, վերլուծել ու գնահատել ենք Կարսի նահանգում հայ-քրդական էսթրաբեքությունները 1919-20 թվերին: Եզրակացրել ենք, որ խելամիտ ազգային քաղաքականություն վարելու դեպքում, ՀՀ-ը բավարար հիմքերն ուներ հօգուտ հայկական պետության օգտագործելու

ոչ միայն Կարսի նահանգի, այլև բուրքական վերահսկողության տակ մնացած քրդության գործոնը, որը հիանալի օգտագործեցին Քյազիմ Կարաբեքիրն ու Մուստաֆա Քեմալը:

Ուսումնասիրությունը և նրա արդյունքներն ունեն արդիական ու գործնական նշանակություն, քանի որ տարածաշրջանում քրդական գործոնը այսօր ևս չի կորցրել իր նշանակությունը:

ՅԱՎՐՈՒՄՅԱՆ ՄԱՐԱՏ (ԵՊՀ)

ԲԱՈ-ՆԱԽԱԳԱՄՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՉՈՒՅԳԻ ԲՈՎԱՆ-ԴԱԿԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (ԳՐԱԿԱՆ
ԱՐԱԲԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Դեռևս միջնադարում մշակված արաբերեն լեզվի կանոնակարգված և հարուստ քերականական ժառանգությունը պայմանավորում է այն հանգամանքը, որ նույնիսկ այժմ էլ գրական արաբերենի տեսության որոշ դրույթների մշակումը պահանջում է վերադարձ դեպի միջնադարյան քերականական ուսմունքներն ու վերջիններիս քննադատական վերաիմաստավորում: Նման սկզբունքը բույլ է տալիս մի կողմից լիարժեքորեն զնահատել միջնադարյան արաբ քերականագետների ձեռքբերումները և մյուս կողմից՝ խուսափել մի շարք դրույթների չափազանց «արդիականացումից» (եթե վերջինս ընդունենք որպես հնդեվրոպական լեզուների լեզվաբանական համակարգի տվյալներով ձևավորված տերմինային ապարատի մեխանիկական կիրառումը գրական արաբերենի լեզվական փաստերի նկարագրման նկատմամբ):

Խոսելով բառ-նախադասություն տերմինային զույգի բովանդակության հարաբերակցության և այդ տերմիններով արտահայտվող լեզվական միավորների համակարգային էության մասին՝ պետք է նշել, որ հիմնական խնդիրը, որն առաջանում է վերոհիշյալ շրջանակում և, մասնավորապես, արաբերենում ստորոգական տարբեր տիպերի (բայական նախադրությամբ եւ անվանական նախադրությամբ) կառույցների քննարկման ժամանակ, անմիջականորեն կապված է պրեդիկատի դիրքում (musnad) սխտեմատիկորեն իրացվող լեզվական միավորի երկակի բնույթով: Մի կողմից այն իրենից ներկայացնում է բայահիմք (fel), որը արաբերենում բայի իմաստա-ձեւաբանական կառուցվածքում դեմքի քերականական կարգի իրացման բացակայության պայմաններում, կարող է միաժամանակ ընկալվել որպես բայական բառածև և մյուս կողմից էլ՝ այսպիսի ցանկացած միավորի իմաստային կառուցվածքը ներառում և մատնանշում է նաև սուբյեկտի (musnad 'ilayhi) կամ «ենթադրելի» (mustatir), կամ «բացահայտ» (bāriz) սուկայությունը, որի արդյունքում ստորոգումը տեղի է ունենում հենց այդ բառածևի շրջանակներում և վերջինս կարծես թե ընդգրկում է ոչ թե մեկ, այլ միաժամանակ երկու շարահյուսական դիրքեր՝

և՛ պրեդիկատի, և՛ սուբյեկտի. այն դեպքում, երբ անվանական նախադրությամբ նախադասությունները առաջին հայացքից ձևավորվում են ավանդական սխեմայով՝ «երկու բառածեղ-շարահյուսական երկու դիրք»: Հենց այս հարթության վրա էլ առաջանում է «բառ-նախադասություն» հասկացական հակադրությունը: Արդյունքում առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում առաջին հերթին «բառ» հասկացության բովանդակային էության մեկնաբանման, վերջինիս սահմանների տարանջատման համար անհրաժեշտ որոշակի կոնկրետ չափորոշիչների մշակման, առանձնացման խնդիրը:

Սակայն «բառ» հասկացության սահմանման ընդհանուր բարդությունները, ինչպես նաև վերջինիս սահմանների անորոշությունը լեզվաբանական ընդհանուր տեսության մեջ, որոշակի տեսական դժվարություններ են ստեղծում կոնկրետ լեզուներում նրա տարանջատման համար:

Հատկանշական է, որ արաբական լեզվաբանական ավանդություն (ԱԱ) «բառ» հասկացության արտացոլման համար օգտագործվում են երեք տարբեր՝ «kalima», «lafz» եւ «mufradāt» տերմինները, ուստի առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում այս տերմիններից յուրաքանչյուրով արտահայտված լեզվական հասկացությունների բովանդակային ծավալների եւ համակարգային էության մեկնաբանման խնդիրը:

Այսպիսով, ԱԱ-ում «բառ» հասկացությունը արտահայտելու համար օգտագործված վերոհիշյալ երեք՝ «kalima», «lafz» եւ «mufradāt», հասկացություններն էլ այս կամ այն չափով են միայն արտահայտում ընդհանրապես «բառ» հասկացության համակարգային էության այս կամ այն կողմը, միաժամանակ բազմաթիվ բարդություններ ստեղծելով վերջիններիս համարժեք մեկնաբանության ժամանակ: ԱԱ-ում դրանք ծառայում են որպես սուկ տեխնիկական միջոցներ լեզվական նյութի վերլուծության ընթացքում, որոնցից յուրաքանչյուրը լեզվաբանական վերլուծության այս կամ այն ասպեկտի հետ է միայն առնչվում: Դրանք թեև սկզբունքորեն միևնույն հասկացությունն են, սակայն դրա տարբեր կողմերն են ներկայացնում:

ՇԱՀԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ (ԵՊՀ)

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ**

1923 թ. հռչակվեց Թուրքիայի Հանրապետությունը: 20-30-ական թթ. ձևակերպվեցին ժողովրդագրական քաղաքականության հիմնական սկզբունքները՝ բնակչության աճի խրախուսում և այլն:

Սակայն 2-րդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայում այլ ժողովրդագրական իրավիճակ ստեղծվեց: Առանձին տարիների բնակչության աճի տեմպերը հասնում էին զրեթե 3 տոկոսի: Շատ թուրք սնունտագետ-

ներ և սոցիալոգներ պնդում էին, որ առանց դեմոգրաֆիական խնդիրների լուծման Թուրքիան դժվարությունների կհանդիպի հետագայում:

1965թ. ընդունվեց «Ընտանիքի պլանավորման» օրենքն, որն ուղղված էր բնակչության աճի տեմպերը նվազեցնելու: Մակայն բնակչության արագ աճը շարունակվում էր: Հարցը սուր կերպով դրեց թուրք գիտնական Կոնգարը. «Առաջին հերթին մեզ անհրաժեշտ է հաղթել 2 հրեշների, որոնք կարող են ոչնչացնել Թուրքիան՝ բնակչության «պայթյունը» և գյուղաբնակների հոսքը քաղաք»:

Առաջին համընդհանուր մարդահամարը Թուրքիայում անցկացվել է 1927թվին՝ 13,6 մլն բնակիչ:

1927-1985թթ. բնակչությունն աճել է 3,8 անգամ, ընդ որում, միայն 1955-1985թթ՝ 2,5 անգամ: Բնակչության աճը չի կատարվել համաչափորեն. այսպես 1985թ. հաստատվել է, որ 5 տարվա ընթացքում բնակչության աճը հասել է մաքսիմումի, ընդ որում առաջին տեղն է գրավում Հարավ-արևելյան Անատոլիան՝ 49,61 տոկոս: (Հարավ-արևելյան, ինչպես նաև Արևելյան Անատոլիայի ճնշող մեծամասնությունը ազգությամբ բուրդ է): Պարզվել էր նաև, որ արևմտյան շրջանների բնակչությունը աճում է ի հաշիվ արևելյան շրջանների բնակիչների ներհոսքի: (Վերջինս տեղի է ունեցել ի հետևանք այնտեղ ծավալված հակաքրդական գործողությունների):

Վիճակն այդպիսին է նաև այժմ: Ըստ 2000թ. մարդահամարի արդյունքների՝ որոշ վիլայեթներում միանգամից բնակչության պայթյուն է տեղի ունեցել:

Ամասիայի, Արդիհնի, Բինգյոլի, Չանքըրդի, Չորումի, Էրզինջանի, Գիքետունի, Գյումուշհանեի, Կարսի, Կաստամունուի, Քորշեհիքի, Նևշեհիքի, Ռիզեյի, Սինոպի, Սիվասի, Թոքաթի, Թունջելիի, Ջոնգուլդակի, Բայբուրթի, Բարթինի, Արդահանի և Իզմիրի վիլայեթներում, (որոնք գտնվում են Արևելյան, Հարավ-արևելյան Անատոլիայում և՛ գերազանցապես բնակեցված են քրդերով), որտեղ 3 տարի առաջ բնակչությունը նվազում էր, այս մարդահամարի ժամանակ 50 տոկոսի հասնող աճ արձանագրվեց: Օրինակ, Թունջելին, որտեղ 1997թ. բնակչությունը 61,5 տոկոսով նվազել էր, այս անգամ արձանագրվեց 8,14 տոկոս բնակչության աճ: Պետական վիճակագրական ինստիտուտը նշում է, որ բնակչության պայթյուն է տեղի ունեցել նաև Բիթլիսի, Իսպարթայի, Զահրամանմարաշի, Մուշի, Տրաբզոնի, Յոզգաթի և Քորքյարեիլի վիլայեթներում: Այսպիսով անժխտելի փաստ է, որ Հարավ-Արևելյան Անատոլիայի բնակչության աճի տեմպերը գերազանցում են Թուրքիայի ընդհանուր աճի տեմպերին, ինչը երևում է այս աղյուսակից:

	1990	2000	աճը
Ընդհանուրը	56 473 035	67 844 903	20.13
Հարավ-Արևելյան Անատոլիա	5 157 160	6 604 205	28.06

Մրանից հետևում է, որ եթե այսպես շարունակվի, ապա 2050թ թուրքիայի բնակչությունը կկազմի 169 736 253, որտեղ 22 745 109 կլինեն Հարավ-Արևելյան Անատոլիայում: Եվ եթե այժմ Հարավ-Արևելյան Անատոլիայի բնակչությունը կազմում է ընդհանուր բնակչության 9,73 տոկոսը, ապա 2050թ կկազմի 13,5 տոկոսը:

Եթե 1984թ. Թուրքիայի բնակչությունը 48 միլիոն էր, ապա 2000-ին հասել էր 67 միլիոնի, այսինքն՝ 17 տարում 40 տոկոս բնակչության աճ է գրանցվել: Ի հակակշիռ սրան, եթե 1984 թ. ազգային եկամուտը մեկ շնչի հաշվով կազմում էր 1200 դոլար, ապա 2000թ. այն բարձրացել էր 3090 դոլարի, այսինքն՝ 17 տարում 250 տոկոս աճ է գրանցվել:

Հունաստանում 1984թ. բնակչությունը 10 միլիոն էր, իսկ 2000-ին՝ 11 միլիոն (11 տոկոս աճ); ազգային եկամուտը մեկ շնչի հաշվով կազմում էր 3770 դոլար, իսկ 200-ին՝ 12 000 դոլար (217 տոկոս աճ): Ակնառու օրինակներից է Պորտուգալիան՝ 1984 թ. բնակչությունը կազմում էր 10 միլիոն: Այս թիվն ամփոփոխ է մնացել մինչև 2000 թ.: 1984 թ. ազգային եկամուտը մեկ շնչի հաշվով կազմում էր 1970 դոլար, իսկ 17 տարի հետո՝ 2000 թ. այդ թիվն հասել է 11 060 դոլարի (461 տոկոս աճ): Ըստ 2000 թ. հաշվարկի ավյալների, որին մասնակցել էր 270 երկիր, աշխարհի բնակչության թիվը հասնում է 6 մլրդ. 54 միլիոնի: Թուրքիան ամենաբարձր բնակչություն ունեցող երկրների շարքում գրավում է 15-րդ տեղը: 2000թ. համաշխարհային եկամուտը կազմել է 31 տրիլիոն 171 միլիարդ դոլար: Ազգային եկամտի հաշվարկին մասնակցած 207 երկրների շարքում Թուրքիան, 201 միլիարդ դոլար ազգային եկամտով, գրավում է 22-րդ տեղը: 2000թ. համաշխարհային եկամտի հաշվարկների համաձայն, ազգային եկամուտը մեկ շնչի հաշվով պետք է կազմեր միջինը 5150 դոլար, իսկ Թուրքիայի ազգային եկամուտը մեկ շնչի հաշվով կազմում էր 3090 դոլար: Ազգային եկամտի հաշվարկին մասնակցած 206 երկրների շարքում Թուրքիան գրավում է 82-րդ տեղը՝ ըստ ազգային եկամտի մեկ շնչի հաշվով ընկած դրամի ծավալի: Թուրքիայի ազգային եկամուտը 17 տարվա մեջ 250 տոկոսով աճել է: Ազգային եկամտի տեսանկյունից Թուրքիան 22-րդ տեղում է: Թուրքիայի 1984թ. ընդհանուր ազգային համախառն արդյունքը 60 միլիարդից 2000թ. աճել է մինչև տարեկան 201 միլիարդ, այսինքն՝ 3,5 անգամ:

2000-ից վիճակն ավելի է վտանգավոր դառնում: Եթե ընդունենք, որ բնակչությունը 68 միլիոն է, ապա աշխարհի բնակչության սանդղակում Թուրքիայի տեղը չի փոփոխվի: Ըստ 2001թ. արված ենթադրությունների, Թուրքիայի ազգային եկամուտը 150 միլիարդ դոլարով նվազելու է, և այս պատճառով ազգային եկամուտը մեկ շնչի հաշվով կազմելու է 2200 դոլար: Եթե այլ երկրների մոտ իրավիճակը մնա նույնը, ապա 2001թ. Թուրքիան պահպանելով իր՝ 15-րդ տեղը բնակչության մակարդակի սանդղակում, ազգային եկամտի սանդղակում կիջնի 27-րդ տեղը, իսկ անձնական եկամտի սանդղակում՝ 98-րդ: Այսպիսով Թուրքիային տնտեսական և ժողովրդագրական ճգնաժամից կարող է փրկել կամ մուտքը ԵՄ, երբ նա կկարողանա ուղղել իր բնակչությունը դեպի

Եվրոպա, կամ էլ մի նոր ցեղասպանություն, որը կիրագործվի, հավանաբար, Հարավ-արևելյան Անատոլիայում:

ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՍԱՀԱԿ ԵՀԱՀ

«ԳԵՐԲՆԱԿԱՆԻ» ԵՐԵՎՈՒՅԹԸ «ՇԱՀՆԱՍԵ»
ԵՎ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍՆԵՐՈՒՄ

«Շահնամե» և «Սասունցի Դավիթ» էպոսների համեմատությունը մեծապես ընդգծում է հնդեվրոպական ծագում ունեցող երկու ժողովուրդների մտածողության, կենսափորձի, ըմբռնումների, գեղագիտական չափանիշների, այլ կերպ ասած, հոգեկան կերտվածքի տարբերություններն ու ընդհանրությունները:

Համեմատության միայն մեկ համադրության մակարդակում արված գուգահեռների փորձն ի հայտ է բերում բազմաթիվ գերբնական երևույթների ընդհանրություններ, որոնք գալիս են ժողովրդական բանավոր ստեղծագործական մտքից և արխայիկ շրջանից եկող դիցաբանական մտածողությունից:

Ռոսբան Ջալը և Սասունցի Դավիթը դյուցազուններ են, որոնք գերբնական սխրանքներ են գործում: Բազմաթիվ պերսոնաժներ ունեն հրաշագործ ծնունդ և օրերով մեծանալու հատկություն: Հերոսների դյուցազնական ծիերը, սոգական գեներ ու զրահը օգնում են մենամարտելու կախարդների, վիշապների, վիուկների, օձերի, հրեշների և այլ գերբնական ուժերի դեմ, որոնք հնագույն շրջանից եկող արխայիկ մտածողության աղերսներն են: Դյուցազունները երկրի երեսից անհետանում են բուք ու բորանի մեջ, իսկ Սիերը՝ Ագռավու քարում:

Գերբնական երևույթների թեման առնչվում է նաև միջնադարյան ճակատագրապաշտության հետ: Դյուցազունները երազների և այլ միջոցներով գուշակություններ են անում, բացահայտում աստծո կողմից նախասահմանվածը: Սասունցի Դավթում քրմեր չկան, իսկ հոգևորականները գուշակություններ չեն անում: Այդ շնորհը արված է դյուցազուններին, քանի որ նրանք կիսասատվածային-առասպելական կերպարներ են:

Էպոսներում գերբնական ուժերը հիմնականում ծառայում են հերոսներին՝ հայրենիքի անկախության և ազատության ջատագովներին:

**ԹՈՒԿՈՒԼԹԻ-ՆԻՆՈՒՐԹԱ Ի-Ի (Զ.Ա. 1244-1208 ԹԹ.) ԱՐՇԱՎԱՆՔԸ
ԿՈՒՏԻ, ՇՈՒՔԱՐԻ ԵՎ ՆԱԻՐԻ**

Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրթա I-ի գահակալության առաջին տարում դեպի կուտիների, շուբարեցիների և Նաիրիի երկրները կատարած արշավանքի երթուղին դեռևս լիարժեք չի ուսումնասիրվել:

Մեյագրական հաղորդումների համադրումից ակնհայտ է, որ կառավարման առաջին տարում Թուկուլթի-Նինուրթան բախվել է խեթերի հետ և Եփրատի ավազնում գերել նրանց 28.800 ռազմիկների: Այնուհետև արքան Դարսիանն լեռներից արշավել է Փ.Չարի ավազանով, Շասիլա-Բարնանիշ (նշվում են որպես քաղաքներ)-Մուկուշկի-Լարա (նշվում են որպես լեռներ) երթուղիով դեպի կուտիների և ուկումանեցիների երկրները: Այստեղ, Յատրի (տարբերակ՝ յատրիների) լեռներում, ասորեստանցիները բախվել են բարխեցիների (տարբերակ՝ կուտիների) և ուկումանեցիների հետ, նրանց նկատմամբ հաղթության տարել: Այնուհետև Թուկուլթի-Նինուրթա I-ը գրավել է Էլխունիա և Շարնիդա երկրները մինչև Մեխրի, հաղթություն տարել Բարխի, Կուտուլխի, Պուշի (Բուշի), Մուդանի, Նիխանի, Ալայա, Տեբուրզի, Պուրուլումզի երկրների նկատմամբ, դրանով հնազանդեցրել շուբարեցիների ողջ ընդարձակածավալ երկիրը, որից հետո Աշուրի արքան հաղթահարել է ինչ-որ դժվարաց լեռներ և բախվել Նաիրի երկրի 43 քաղաքների հետ, գերել նաև նրանց կանանց՝ դարձնելով հարկատու: Թուկուլթի-Նինուրթան իր երկրի սահմաններին է միացրել Ազազի և Շեբարդի երկրները, հնազանդեցրել նաև Վերին ծովի ափերին ընկած ինչ-որ երկրներ: Դրանով Թուկուլթի-Նինուրթա I-ը իրեն համարում է «...կուտինների կառավարիչներին կործանող, շուբարեցիների և Նաիրի երկրներին վանող արքա...»: Թուկուլթի-Նինուրթա I-ը վկայում է նաև, որ արշավանքի ընթացքում գրավել է Քաշիարիի շրջանը (այժմ՝ Տուր-Արդիհի լեռներ) և անդրեփրատյան Կումմուխու երկիրը (քիայն. Կումախա, անտիկ Կոմմագենե): Ասորեստանյան զորքերը, հաղթություն տանելով շուբարեցիների նկատմամբ, հասել են Եփրատի ափերը:

Ըստ գիտության մեջ ընդունելության գտած տեսակետի՝ Թուկուլթի-Նինուրթա I-ի զորքերը սկզբնապես անցել են Մոսուլ-Չախտ ճանապարհով, այնուհետև գետանցելով Արևելյան Խարուրը, ճամփա են բռնել հյուսիս՝ Ջեզիրե - Շեբնայն - Էրուխ գծով մինչև Բոհտան գետը: Այնուհետև, նրանք, հավանաբար, շարժվել են հարավ-արևմուտք և, գետանցելով Տիգրիսը, այդ գետի աջափնյակով իջել են հարավ և հետո Գեբջուշ-Միդյատ-Մավուր ճամապարհով կարող էին հայտնվել Մարդինում: Այստեղից, ասորեստանյան զորքերը, հնարավոր է, շարունակել են ճամապարհի հյուսիս-արևմուտք, մինչև Դիարբեքիր: Այնուհետև, գետանցելով Տիգրիսը, Միլվան-Գարգան-Բիթլիս ճամապարհով և Վանա լճի հարավային մասերով, նրանք հասել են մինչև Խոշար, իսկ

այդտեղից Բաշկալայով, Գևարով, Շենիդինանով և լեռնային Չագրուսի կիրճերով հասել Ուշնու: Ինչ վերաբերում է ասորեստանյան զորքերի՝ Եփրատի ավազան և Կումմուխու հասնելուն, սպա դա վերագրվում է Թուկուլթի-Նինուրթայի հիմնական ուժերից առանձնացված մի ինչ-որ զորախմբի:

ՈՒկումանի-Կումանի երկիրը գտնվում էր Խեզիլ և Արլ. Խարբուր գետերի միջև՝ ընդգրկելով նաև Դասն լեռների շրջանը: ՈՒկումանի-Կումանի երկրի հյուսիսային սահմանը, հավանաբար, հասնում էր մինչև Սեխրի, որը հայոց Մեծի-Նուրն է: Այն հյուսիս-արևելքից և արևելքից սահմանակցում էր նաև Խաբիսին:

Կուտին՝ կուտինների երկիրը, Ք.ա. III հազարամյակից հայտնի Կուտիումի (Գուտիումի) ժառանգորդն էր: Ք.ա. 14-րդ դ. հիշատակվող Կուտին պետք է հասկանալ նեղ և լայն առումներով: Նեղ առումով Կուտին պետք է համարդել Մեծ Հայքի Կործայք նահանգի կենտրոն Կորդուքին, լայն առումով՝ Կործայքի, Կադմյան Ծավդեքի, Մոկքի, գուցե և Ադձնիք աշխարհի արևելյան շրջանների հետ: Թուկուլթի-Նինուրթան Կուտի ասելով նկատի ունի և՛ Կորդուքը, և՛ Շուրարտուից արևելք, մինչև Վերին Չաբ ընկած շրջանները:

Կադմուխի-Կատմուխի-Կատմուխին համապատասխանում է Կադմյան Ծավդեքին: Նրա հարավային սահմանը անցնում էր Քաշիարի-Մասիտսի լեռներով, հյուսիսայինը հասնում էր մինչև Արևմտյան Տիգրիս, արևելքում նրա սահմանը անցնում էր Տիգրիսով: Կատմուխին սահմանակից էր Բաբխի, Ռիրուատրի, Ալզի, հավանաբար վերջինիս մեջ մտնող Բուշշե և Մումմի երկրներին:

Բաբխին գտնվում էր Տիգրիսների միախառնման շրջանում, հավանաբար հասնելով մինչև Արգան-Մղեղ-Կեծանի ավազան սահմանագիծը՝ հյուսիսում, իսկ հարավում ընդգրկելով Կորդուքի հյուսիս-արևմտյան շրջանները, գուցե և ողջ Կորդուքը՝ մինչև Նեբքին Խաբխի, Ռուկումանի-Կումանի: Մեխրին ժամանակակից Մեխրին է, նաև հայոց Մեծի-Նար լեռան շրջակայքը, որոնք գտնվում են Խեզիլի և Արլ. Խարբուրի վերին հոսանքների միջև:

Շարնիդայի և Էլխունիայի տեղադրությունը անհայտ է: Մակայն հասկանալի է, որ դրանք Կործայքում՝ Մեխրի, Բաբխի, Կուտի, Ռուկումանի, Կատմուխի երկրների մերձակայքում պետք է փնտրել: Չի բացառվում, որ Շարնիդան համապատասխանի Շիրնակին, իսկ Էլխունիան՝ ուրուստրիական Լուխային կամ ժամանակակից Էրուխին:

Յաուրի լեռները, որտեղ ասորեստանցիները բախվել են կուտինների (տարբերակ՝ բաբխեցիների) և ուկումանեցիների հետ, պետք է փնտրել Կորդուքի և Տնորիքի հարավային սահմաններում: Էլխունիա (Էրուխ)՝ Շարնիդա (Շիրնակ)՝ Մեխրի (Մեծի-Նար) սահմանագծին հասնելուց հետո, ասորեստանյան զորքերը ներ են խուժել Բաբխի՝ հավանաբար Կորդուքի հյուսիս-արևմտյան շրջանները, այնուհետև, անցնելով Տիգրիսը, մտել Կատմուխի: Կատմուխին նվաճելուց հետո, ասորեստանցիները անցել են Քաշիարի-Մա-

սխուսի լեռների շրջանը, այնուհետև մտել Բուշտե և Մումմի երկրները: Հաջորդ հարվածը ուղվում է Ալզի-Աղձնիքին:

Բուշտե(Պուշտի-Պուշտե) և Մումմի երկրների տեղադրությանը գիտություն մեջ հստակ լուծում չի տրվել: Բուշտե-Պուշտեն Ն. Վ. Հարությունյանը համադրում է Շիրվանից հարավ-արևելք գտնվող ժամանակակից Բուշի-Բոշի հետ: Զբացառելով այդ տեղադրության ճշտությունը, այնուամենայնիվ, առավել հավանական ենք դիտում Բուշտե-Պուշտիի համադրումը Բուշերիկ-Բշերիկի հետ, որը գավառ, բնակավայր, դաշտավայր է, տեղակայված Մուֆարկին քաղաքից հարավ-արևելք, Մասունի հարավային մասում: Բարձրան գետը ևս կրում է Բշերիկ անունը: Բուշտե-Բուշերիկ այս համադրությունը առավել վստահելի է պատկերանում Մումմի երկրի տեղադրությամբ: Արևմտյան Տիգրիսի և Արգան գետերի միախառնման արևմտակող հատվածում է գտնվում Մայմունիկ բնակավայրը, որը մեր համազմամբ նույն Մումմի երկիրն է:

Մումմե-Մայմունիկից հետո Թուկուլթի-Նիմուրթան մեկ դեպքում նշում է Քաշիարի շրջանի, մեկ այլ դեպքում Ալզի երկրի գրավման մասին: Առավել հավանական է, որ Աշշուրի արքան Բաբելոնից ներխուժած լինի Կասամուլսի, այնուհետև Քաշիարի շրջանը, ապա միայն Բուշտե և Մումմի, որտեղից և Ալզի:

Ալզի-Աղձնիքից հետո Թուկուլթի-Նիմուրթան մտելն է Մադանի երկիրը, որը ժամանակակից Մադենն է՝ Տիգրիսի ակունքների շրջանում: Հաջորդ հիշատակվող երկրները Նիխանին և Ալայան են: Ալայան, հավանաբար, Արդնի-Արդանան է: Նիխանին պետք է փնտրել Արդանա-Մադենից հյուսիս, քանզի Տեբուրգի երկիրը համադրելի է հայոց Դերսիմին, իսկ նրան հաջորդող Պուրուլումզին՝ Պալունիք, գուցե և Պաղմատուն ու Մուգուր-Մնձուր գավառների՝ միասին վերցրած: «Պուրուլումզի» տեղանունը բաղկացած է * *Պուրուլում* և * *Սզի* կամ * *Մուզի* արմատներից, որոնք պահպանվել են Պալու-Բալու(նիք), հնարավոր է նաև Պաղին-Պաղմատուն և Մուգուր-Մնձուր տեղանունների մեջ: Դրանք բոլորն էլ գտնվում էին Տեբուրգի-Դերսիմի հարևանությամբ: Ստացվում է, որ Թուկուլթի-Նիմուրթան հասել է կամ Բարձր Հայք, կամ էլ Արածանիի միջին ավազան, որտեղ և բախվել է նահրցիների հետ: Այս խնդիրը լուծելու համար կարևոր է ուշադրություն դարձնել Նաիրի երկրից հետո հիշատակվող Վերին Ծովին: Ինչ վերաբերում է Ազալզի(Աջալզի) և Շեբարդի տեղավայրերին, ապա վերջինը կարելի է համադրել բիայնական աղբյուրներից հայտնի Շեբանաշեին, որը հավանաբար ժամանակակից Բերդակն է, իսկ Ազալզին հնարավոր է նույնացնել Անձիտի տարածքում գտնվող Եյազիզին: Այստեղից Աշշուրի արքան, գեռանցելով Եփրատը, մտել է Կումմուլսի-Կումմագենե:

Այսպիսով, Թուկուլթի-Նիմուրթա I-ի արքայականի երթուղին դեպի կուտիների, շուբարեցիների և Նաիրի երկրներ բավականին հստակ վեր է հանում Հայկական լեռնաշխարհում տիրող քաղաքական բազմաբնույթ վիճակը, լույս սփռում հիշատակվող երկրների տեղագրական և բազմաթիվ այլ խնդիրների վրա:

ԱԳՐԲԵՋԱՆԻ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱՆԻ ՀԻՄՆԱՆԵՐԴՈՒՄ
1991-1994 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արցախի վերանիավորման համար 1988թ. փետրվարից սկսված ժողովրդական շարժումը հանգեցրեց Անդրկովկասում քաղաքական լուրջ փոփոխությունների՝ ընդեռայ միմյև Լ.Գ.Հ ստեծումը: 1988 - 1991թթ Ադրբեջանական ԽՍՀ-ը, այնուհետև 1991-1994թթ Ադրբեջանի Հանրապետությունը (Ադրբեջանը իր անկախությունը հռչակեց 1991թ. օգոստոսին 30-ին) Արցախյան հիմնախնդրում ծգտագործեցին «Ադրբեջանական գործունը»:

1988-91թթ. ընթացքում «Ադրբեջանական գործունը» իրենից ներկայացնում էր ԽՍՀՄ ամբողջականության պահպանման երաշխիք, և հենց այս շրջանում Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվեցին Արցախի հարցը խեղդելու առաջին քայլերը՝ հայերի ջարդերը Ադրբեջանում, 1989թ. հուլիսից սկսված Հայաստանի տնտեսական շրջափակումը: Իսկ 1989թ. հոկտեմբերին ԱԽՍՀ կողմից հրապարակված անկախության մասին օրենքը ԽՍՀՄ ԳԽ և կառավարության վրա իրավաբանական և քաղաքական ճնշում գործադրելու միջոց էր՝ Արցախի հիմնախնդրին վերջնական լուծում տալու համար, որին հետևեց 1989թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ ԳԽ ընդունած «Լ.Գ.Խ-ում իրադրությունը նորմալացնող միջոցառումների մասին» որոշումը: Այդ որոշմամբ մարզը կառավարելու համար ստեծվեց հանրապետական կազմկոմիտե՝ Ադրբեջանի ԿԿ II քարտուղար Վ. Պոլյանիկոյի գլխավորությամբ:

1988-1990 թվականներին, որը պայմանականորեն կարելի է անվանել «պաշտոնական հայտարարությունների փուլ», հաջորդեց «ռազմական գործողությունների ժամանակաշրջանը», որը ընդգրկում է 1991-93 թվականները: Այս փուլում ևս նկատելի է Ադրբեջանի իշխանությունների միասնական դիրքորոշումը Արցախի խնդրում:

1. Ադրբեջանի իշխանությունների կողմից որպես Արցախի հարցի արմատական լուծման միջոց օգտագործվեց տեղի հայության բռնագաղթը: 1991թ. ապրիլ-մայիս ամիսներին Լ.Գ.Խ-ի հայ բնակչության դեմ խորհրդային IV բանակի, ԽՍՀՄ ներքին գործերի և Ադրբեջանի օսօն-ի ուժերով իրականացված խոշորամասշտաբ ռազմական օպերացիաների հետևանքով ավելի քան քսան հայկական գյուղերից տեղահանվեցին հինգ հազարից ավելի հայեր: Անձնագրային ռեժիմի ստուգման և այլ պատրակներով ռազմական նույն ուժերի միջոցով հայերի դեմ իրականացվում էին նաև պատժիչ գործողություններ: Ադրբեջանի պետական քաղաքականությունը, որը լուր խրախուսվում էր ԽՍՀՄ-ի կողմից, իրենից ներկայացնում էր պետական բռնության քաղաքականություն և մարդու իրավունքների բացահայտ ռոմահարում:

2. Ադրբեջանի անկախության հռչակումից հետո ստեղծվեցին սեփական զինված ուժեր, որոնք տարբեր ժամանակներում վարժվում էին ԱՄՆ-ի,

Թուրքիայի, Իրանի, Աֆղանստանի, Ռուսաստանի մասնագետների կողմից: Հայերի դեմ սղվող պատերազմին մասնակցում էին նաև վարձկաններ ԱՊՀ-ից՝ Ռուսաստան, Ուկրաինա, մոջաեդները՝ Աֆղանստանից, քուրքեր, անգլիացիներ և ուրիշներ: Բացի այդ, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ադրբեջանում տեղակայված խորհրդային բանակի զրեթե ողջ տեխնիկան մնաց Ադրբեջանի տարածքում: Այս առիթով ՀՀ կառավարությունը բողոքեց ԱՊՀ զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը: Ադրբեջանի իշխանությունների կողմից ռազմական տեխնիկայի խոշոր ներմուծումներ էր կատարվում Իրանից, Թուրքիայից, Չինաստանից և այլ վայրերից:

Ռուսաստանի և այլ պետությունների ռազմական աջակցությամբ են բացատրվում այն մարտական հաջողությունները, որ ունեցավ Ադրբեջանը ԼՂ-ում 1992-93թթ. ընթացքում, իր կեղմից սկսված պատերազմում:

3. Ադրբեջանի իշխանությունների անմիջական հսկողության տակ էին գտնվում նաև Ադրբեջանի զանգվածային լրատվամիջոցները, որոնք ԼՂ-ում, Հայաստանում կատարվող իրադարձությունները կեղծում էին և տարածում ապատեղեկատվություն, որի նպատակն էր միջազգային հասարակությանը շփոթության մեջ գցել և զրավել շահավետ դիրք:

4. Ղարաբաղի հարցի դրական լուծման համար Ադրբեջանը հենվում էր իր ավանդական ռազմաքաղաքական դաշնակցի՝ Թուրքիայի, Իսլամական երկրների համաժողովի անդամ պետությունների, նավթային ընկերությունների և վերջիններիս միջոցով ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և ՆԱՏՕ-ի անդամ այլ պետությունների վրա: Ադրբեջանի կողմից լայնորեն օգտագործվում էր Թուրքիայի միջնորդությունը, որը մեծ խանդավառությամբ ընդունեց Ադրբեջանի անկախացումը: Թուրքիան փաստորեն դարձել էր Անդրկովկասում և Միջին Ասիայում Իրանի ազդեցությունը սահմանափակելու, ստավել ևս Ռուսաստանի քաղաքական ակտիվությունը կանխելու հուսալի միջոց: Չնայած որ Թուրքիան ռազմական մեծ օգնություն ցույց տվեց Ադրբեջանին, նա ընդունելի էր համարում հարցի լուծման քաղաքական ճանապարհը:

Նախիջևանը, որը հանդիսանում է Թուրքիա-Ադրբեջան կապը, գտնվում էր Թուրքիայի անմիջական ուշադրության կենտրոնում: 1992-93թթ. Հայաստան-Նախիջևան սահմանամերձ շրջաններում տեղի ունեցած ռազմական բախումները, 1993 թվականին Ղարաբաղում և Ադրբեջանում հայերի տարած հաղթանակները լուրջ անհամագտություն պատճառեցին Թուրքիային, որն իր սահմանամերձ զինված ուժերը պահում էր ռազմական բարձր պատրաստվածության վիճակում:

5. Ադրբեջանը հակամարտության մասնակից համարելով ՀՀ-ին, մերժում էր ԼՂՀ գոյությունը որպես իրավաբանական սուբյեկտ և միջազգային ասոյաններում Ղարաբաղի պատերազմը ներկայացնում էր որպես ՀՀ կողմից իրականացվող զավթողական պատերազմ: ՀՀ-ին ազդեսոր ներկայացնելու միտումը հատկապես նկատվում է 1993 թվականի դեկտեմբերից 1994թ.

փետրվար ամիսներին, երբ աղբբեջանական կողմը միայն ռազմական անհա-
ջողություններ էր ունենում և նահանջում:

6. 1994 թվականը կարելի է անվանել «բանակցությունների փուլ»: Ռու-
սաստանը, որը 1992 թվականից արտաքին քաղաքական կուրսի հստակեցում
ունեցավ, Արցախյան հիմնախնդրում ակտիվ միջնորդի դեր ստանձնեց և, ի
վերջո, 1994թ. մայիսի 12-ին հասավ հրադադարի կնքմանը: Աղբբեջանը ստիպ-
ված էր տեղի ապ, որովհետև ԼՂՀ ուժերի կազմից գրավված էր Աղբբեջանի
Լալաբաձրի մոտ «քսան տոկոսը», սակայն հետագա բանակցային գործընթաց-
ներում նա վարում էր կոշտ քաղաքականություն՝ հանդես գալով իր տարածքա-
յին անձեռնմխելիության դիրքերից: Հայերի համար ռազմական հաջողություն-
ները քաղաքական աջակցություն էին և միջազգային տեսանկյունից՝
Անդրկովկասում ռուսական դիրքերի ամրապնդում: Իսկ Աղբբեջանի պար-
տությունը նշանակում էր Թուրքիայի և նրա միջոցով Արևմուտքի դիրքերի
թուլացում Անդրկովկասում:

Այսպիսով, Աղբբեջանի քաղաքականությունը Արցախյան հիմնա-
խնդրում հանգեցրեց պատերազմական գործողությունների սանձազերծմանը,
սակայն չհասավ իր վերջնական նպատակին՝ ԼՂ-ի բռնակցմանը:

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ (ԱԲ)

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ ՌԵԶԱ ՇԱՀ ՓԵՀԼԵՎԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՈՔ

19-րդ դարում Պարսկաստանի կրթական համակարգը անմխիթար
վիճակում էր: Տարրական դպրոցները՝ մաքթաբները, որտեղ դասավանդում էին
ցածրաստիճան հոգևորականները՝ ախունդները, գտնվում էին հոգևորակա-
նության ազդեցության ներքո՝ չենթարկվելով պետական կամ մասնագիտական
վերահսկողության: Միջնակարգ ուսուցումը ամբողջությամբ մասնավոր հիմ-
քերի վրա էր: Նրանց համար, ովքեր չէին պատրաստվում հոգևորական դաս-
նալ, կրթական գործընթացը սահմանափակվում էր այդքանով:

Բարձագույն կրթության միակ օջախներն էին Դոմի և Սյախանի
հոգևոր դպրոցները՝ մեդրեսեները: Սակայն այդտեղ սովորող երիտասարդների
զգալի մասի հիմնական նպատակը գիտելիքների հարստացումն էր, այլ ոչ թե
հոգևորական դառնալը: Այս միտումը էլ ավելի ուժեղացավ 19-րդ դարի
վերջում:

Դեռևս 19-րդ դարի կեսերին Պարսկաստանում սկսվել էին կրթական
բարեփոխումներ, որոնց մեծապես նպաստեցին նաև օտարերկրյա միսիոներ-
ները, ովքեր բացեցին առաջին աշխարհիկ դպրոցները:

Այդ բարեփոխումների երկրորդ փուլը սկսվեց Սահմանադրական հեղափոխությունից հետո, երբ ուրվագծվեցին երկրում ժամանակակից կրթական համակարգ հիմնելու ծրագրերը:

Երբ իշխանության գլուխ եկավ Ռեզա Շահը, երկրի ազգային դպրոցներում՝ պետական և մասնավոր աշխարհիկ, ընդգրկված էին ընդամենը 10.000 ուսանողներ:

Ռեզա Շահի նպատակն էր ընդլայնել կրթական համակարգը, որպեսզի այն կարողանա բավարարել ամբողջ ազգի կարիքները: Տարրական և միջնակարգ կրթության նոր ծրագիրը, որը բավականին ընդգրկուն էր, առաջ բերեց կրթված ուսուցիչների, որակյալ դասագրքերի, ուսուցման նոր մեթոդների անեքստեշտություն: 1934թ. ընդունվեց Ուսուցիչների պատրաստման օրենքը, և երկրում սկսվեց մանկավարժական քոլեջների հիմնադրումը, որոնց թիվը 1940-1941թթ. գերազանցում էր 39-ը: 1928թ. Մեջլիսը միջոցներ տրամադրեց՝ տարեկան 100 ուսանող Եվրոպա և ԱՄՆ ուղարկելու համար: Կարևոր նվաճումներից էր երկրում տեխնիկական դպրոցների հիմնադրումը: 1930-ական թթ. հիմնվեցին Երաժշտական և Գեղեցիկ արվեստների ակադեմիաները:

1934թ. մայիսին ընդունվեց Պարսկաստանում Համալսարան հիմնելու օրենքը, որի իրականացման գործընթացը սկսվեց 1935թ.-ից: Անչափ կարևոր էին նշված ժամանակաշրջանում կատարված բարեփոխումները երկրի մեծահասակ բնակչության կրթության գործում: Ռեզա Շահը գիտակցում էր, որ մեծահասակների կրթական մակարդակի բարձրացումը կնպաստի իր՝ բարեփոխումների և արդիականացման ծրագրի իրականացմանը: 1936-1937 ակադեմիական տարվա սկզբում մեծահասակների համար ամբողջ երկրով մեկ բացվեցին 1500 երեկոյան դպրոցներ, որոնք 2 տիպի էին՝ լրիվ անգրագետների և կիսագրագետների համար: 1937թ. սկզբին կառավարությունը մեծահասակների համար բաց արեց 22 միջնակարգ դպրոց: Ռեզա Շահի իշխանության օրոք քայլեր ձեռնարկվեցին սպորտային ավանդույթները վերականգնելու ուղղությամբ: Ֆիզիկական դաստիարակությունը և սկաուտական շարժումը մտցվեցին դպրոցական պարտադիր ծրագրի մեջ: Այս ժամանակաշրջանի կարևոր նվաճումներից մեկն էր մաև կամանց կրթական մակարդակի բարձրացումը:

Գնահատելով Ռեզա Շահի իշխանության օրոք Պարսկաստանում տեղի ունեցած կրթական բարեփոխումները և Արևմուտքի ազդեցության աստիճանը այդ գործընթացում՝ պետք է հավասար ուշադրություն դարձնել կատարված նորամուծություններին և մերժված սկզբունքներին: Անկասկած, հոգևորակա-նությունը նշանակալիորեն կորցրեց իր ազդեցությունն ազգի կրթության գործընթացում: Մակայն նոր համակարգը, մերմուծվելով չափազանց հապճեպ և մակերեսորեն ընդօրինակելով եվրոպական քաղաքակրթության՝ դարերի ընթացքում ստեղծած նվաճումները, ի վիճակի չեղավ դառնալու աստիճանական առաջընթացի բաղկացուցիչ մաս և պահպանելու հնի և նորի հաշվեկշիռը:

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԸ՝ ԲԱՀԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՂ
(ՀՈՒՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՋԵՐՈՎ)

Հայ նշանավոր լեզվաբան Հր. Աճառյանը տարիների իր դեզերումների ընթացքում (Թուրքիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Վրաստան, Ադրբեջան, Պարսկաստան) ուսումնասիրել է ոչ միայն լեզվաբանությանն առնչվող հարցեր, այլև տեղական ժողովուրդների ազգագրությունն ու կրոնական հավատալիքները: Իր հավաքած խիստ արժեքավոր նյութերը նա ամփոփել է տարբեր հոդվածներում, դրանց անդրադարձել իր տպագիր և անտիպ աշխատություններում, ինչպես նաև «Կյանքիս հուշերից» հուշագրության մեջ, որը ոչ միայն մեծ գիտնականի հետաքրքրաշարժ և ուսանելի կյանքն է ներկայացնում, այլև գիտական հարուստ նյութ մատակարարում ուսումնասիրողին:

Հուշագրությունից պարզվում է, որ մեծամուն գիտնականը հայ իրականության մեջ առաջիններից մեկն է, որը ուսումնասիրել է բառայականությունը, մի կրոն, որը ծագել է 19-րդ դարում Պարսկաստանում: Թեև բառայականությունը նա առանձին հոդվածով չի անդրադարձել, բայց «Կյանքիս հուշերից» գրքում բավականին մանրամասն է անդրադարձել նոր կրոնին, որի հետ սկզբնական ծանոթությունը եղել է Բաքվում, այնուհետև՝ 1919-ին, Թեհրանում: «(Բաքվում) մի քանի անգամ գնացել էի նրանց կրոնական հավարտյոթներին, բայց իմ ամբողջ այդ ծանոթությունը մակերեսային էր, - գրում է Աճառյանը, - Թեհրանում առիթ ունեյի ես ավելի խոր, ավելի հիմնական ծանոթություն ձեռք բերելու»: Թեհրանում Աճառյանին հաջողվել է «մասնակցել նույնիսկ նրանց գլխավորների մասնավոր, գաղտնի, դոնփակ նիստերին»: Նա ցանկանալով «ծանոթանալ այդ վարդապետության բոլոր մանրամասնություններին», փորձում է ձեռք բերել սուրբ գիրքը՝ «Քիթաբ-ու-Արզաուր» («Ամենասուրբ գիրքը»): Այն թեև Բահա Ուլլահի կենդանության օրոք արաբերենից թարգմանվել էր անգլերեն, բայց նա այդ թարգմանությունը չէր հավանել և թույլ չէր տվել երատարակել: Աճառյանին օգնության ձեռք է մեկնում մի ամերիկացի բժշկուհի, որն ուներ այդ թարգմանության ձեռագիրը: «Նա թույլ տվեց ինձ կարդալ այդ գիրքը, - հիշում է Աճառյանը, - պայմանով, որ ընթերցումը լիներ միմիայն իր տանը, քանի որ սրբազան մարգարեն թույլ չի տվել երատարակել այն: Այսպիսով հնարիմաց ամերիկուհին, որ մի ջերմեռանդ բեհայի էր, թե՛ կատարած կյիներ իր մարգարեի երամանը, և թե՛ միանգամայն իմ փափագը լրացրած կլիներ»:

Քանի որ Աճառյանը իր հուշերում չի նշել կամ գուցե մոռացել է «հնարիմաց ամերիկուհի» բժշկուհու անունը, մենք փորձեցինք պարզել, թե ո՞վ է օգնել մեր մեծամուն գիտնականին:

20-րդ դարի սկզբին Թեհրանում ամերիկացիները, այն էլ բժշկուհիները եզակի երևույթ էին. դա հույս էր ներշնչում, որ որոնումները արդյունավետ

կլինեն: Օգնող հանգամանք էր այն, որ Աճառյանը նշել էր, որ ամերիկուհին «բեհայիստական մի խմբակցության նախագահ էր»: Կարդալով 20-րդ դարի սկզբին վերաբերող մի շարք ամերիկացի բահայիների հուշագրությունները, մենք պարզեցինք, որ հիշյալ ժամանակաշրջանում՝ 1919թ., Թեհրանում բժշկական գործունեություն է ծավալել ամերիկուհի Սյուզան Մուդին: Ո՞վ էր նա, ե՞րբ և ի՞նչպես է հայտնվել Թեհրանում: Ծնվել է 1851թ.՝ Նյու Յորքում, բողոքականների ընտանիքում: Եղել է լայն հետաքրքրությունների տեր, ուսումնասիրել է գեղանկարչություն, երգարվեստ, բժշկություն: Առաջին անգամ բահայի հավատքի հետ ծանոթացել է Չիկագոյում՝ 1890թ., բայց այդ կրոնն ընդունել է ավելի ուշ՝ 1903-ին: Նրա համար ճակատագրական էր հանդիպումը Բահա Ուլլահի բռան՝ Արդուլ Բահայի հետ Աքքայում՝ 1909թ., երբ Արդուլ Բահան նրան կոչ է անում մեկնել Պարսկաստան և բուժօգնություն ցույց տալ կանանց, քանի որ պարսկուհիները խուսափում էին տղամարդ բժիշկների դիմել: Սյուզանը մեկնում է Թեհրան, ուր և հիմնում է հիվանդանոց, օգնում է բացելու աղջիկների դպրոց, ակտիվորեն մասնակցում է բահայիների համայնքի կյանքին, ծավալում լայն գործունեություն: Նա մահանում է Թեհրանում 1934-ին՝ 83 տարեկան հասակում և թաղվում տեղի բահայիների գերեզմանատանը:

ՎԻՐԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ)

ՀՈՐԴԱՆԱՆԻ ՍԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1948-49թթ. ԱՐԱԲԱ-ԻՍԱՅԵԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1921թ. բրիտանական կառավարության որոշմամբ Պաղեստինի ենթամանդատային տարածքից անջատվում է Անդրհորդանանը, որին, հաշիմյան էմիր Աբդալլահի գլխավորությամբ, տրվում է հատուկ ենթամանդատային կարգավիճակ: Չբավարարվելով միայն Անդրհորդանանով, Աբդալլահը ցանկանում էր իր իշխանության ներքո հռչակել «Մեծ Սիրիա»՝ միավորել Սիրիայի, Լիբանանի, Անդրհորդանանի և Պաղեստինի տարածքները: Այս ծրագրի իրագործման նպատակով Աբդալլահը զաղտնի բանակցություններ է սկսում հրեական գործակալության հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմը բացասաբար անդրադարձավ բրիտանական գաղութատիրական համակարգի վրա: Մերձավոր Արևելքում իրենց ռազմավարական նպատակներն իրականացնելիս անգլիացիները փորձում էին շարունակել «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքի կիրառումը՝ հաշվի չառնելով, որ արաբա-խորայեյան հակամարտության սրումը կարող էր ուղղվել իրենց իսկ դեմ: Երկու կողմերի (արաբների և հրեաների) հետ միաժամանակ չկարողանալով պահպանել բարեկամական հարաբերություններ, բրիտանացիները հրաժարվեցին Պաղեստինի մանդատից: Համաձայն ՄԱԿ Գլխավոր

Ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ին ընդունված 181 բանաձևի, 1948թ. օգոստոսի 1-ից դադարեցվելու էր բրիտանական մանդատը, և երկու ամիս անց, հոկտեմբերի 1-ից ոչ ոչ ուշ, Պաղեստինի տարածքում հիմնվելու էին երկու պետություն՝ հրեական և արաբական:

1948թ. մայիսի 14-ին, բրիտանացիները, ՄԱԿ-ի կողմից սահմանված ժամկետից շուտ, իրենց զորամիավորումները դուրս բերեցին Պաղեստինից: Հրեաները մի քանի ժամ անց հայտարարեցին հրեական պետության՝ Իսրայելի հիմնման մասին, որը և 1948-1949թթ. արաբա-իսրայելյան պատերազմի պատճառ հանդիսացավ:

Արաբական 5 պետությունների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի և Հորդանանի զորամիավորումները մայիսի 15-ին անցան Պաղեստին՝ կանխելու Իսրայելի կողմից արաբական պետության համար հատկացված շրջանների բռնակցումը:

Հիշյալ պատերազմի մասին բազմաթիվ աղբյուրներում նշվում է, որ պատերազմը սկսելուց ի վեր, հրեաները ակտիվ դիմադրություն չցուցաբերեցին հորդանանյան զորամիավորումներին, վերջիններս էլ նշանակալի գործողություններ չձեռնարկեցին՝ օգնելու արաբական դաշնակից բանակներին: Հորդանանյան զորամիավորումները, զբաղեցնելով Կենտրոնական Պաղեստինը, զերծ են մնում հետագա առաջխաղացումներից: Իսկ 1948թ. դեկտեմբերի 1-ից ընդհանրապես դադարեցնում են մասնակցությունը ռազմական գործողություններում:

Ամենայն հավանականությամբ, դրա մասին պայմանավորվածություններ էին ձեռք են բերվել 1948թ. ապրիլին Արդալլահ թագավորի և հրեական գործակալության քաղաքական տնօրեն Գ. Մեյերի հանդիպման ժամանակ:

1948-1949թթ. արաբա-իսրայելյան պատերազմը պաշտոնապես ավարտվեց 1949թ. հունվարի 7-ին՝ Ռոդոս կղզում եգիպտա-իսրայելյան հաշտության համաձայնագրի ստորագրմամբ: Ավելի ուշ նմանատիպ համաձայնագրեր ստորագրեցին Հորդանանը, Սիրիան և Լիբանանը: Մակայն հորդանանա-իսրայելյան հաշտության համաձայնագրով Հորդանանի և Իսրայելի միջև կարևորագույն խնդիրները կարգավորվեցին ոչ թե Ռոդոսի բանակցությունների ընթացքում, այլ ավելի վաղ: Մինչ ռոդոսյան բանակցությունները, Արդալլահ թագավորի անձնական ներկայացուցիչների և հրեական կողմի համապատասխան մախասպտորաստական աշխատանքների արդյունքում, աշ-Շունա քաղաքում տեղի էր ունեցել Արդալլահ թագավորի հանդիպումը սիռնիստական շաբիման բանագնաց Յահիթ Սատունի հետ:

Արդալլահ թագավորը շտապում է իրագործել հորդանանայան զորքերի կողմից զբաղեցրած Կենտրոնական Պաղեստինի տարածքների բռնակցումը Հորդանանին: Այդ նպատակով 1948թ. ապրիլ և մայիս ամիսներին Հորդանանի բարձրագույն զինվորական հրամանատարության մի շարք ներկայացուցիչներ տեսչական այց կատարեցին պաղեստինյան շրջաններ, որից հետո պաղեստինյան Երիթով քաղաքում տեղի ունեցավ հորդանանյան միապետի

կողմնակիցների համաժողով: Այն որոշում կայացրեց Հորդանանի Արդալլահ թագավորի իշխանության ներքո Հորդանանի և Արևելյան Պաղեստինի միավորման նպատակահարմարության մասին՝ համապատասխան արձանագրություն ուղելով ՄԱԿ-ին: Նրանից հետո, երբ Արդալլահը պարտավորվեց զերծ մնալ Իսրայելի հետ փոխադարձ չհարձակման մասին համաձայնագրի կնքումից, 1950թ. հունիսի 13-ին Արաբական պետությունների լիգան ընդունեց մի որոշում, որով նպատակահարմար համարվեց Արևելյան Պաղեստինի ժամանակավոր միավորումը Հորդանանին, մինչև հարցի վերջնական կարգավորումը:

Իսրայելյան իշխանությունների վերաբերմունքը Արդալլահ թագավորի կողմից Արևելյան ափի բռնակցման առնչությամբ առավել քան դրական էր: Հորդանանա-իսրայելյան անջատողական համաձայնությունների մասին էր վկայում 1949թ. փետրվարին պաղեստինցի արաբներին հորդանանյան հպատակություն տրամադրելու Արդալլահ թագավորի որոշումը, որին հետևեցին իսրայելյան փորձերը՝ պաղեստինյան հիմնահարցը միջազգային առյաններում որպես զուտ փախտականների հարց ներկայացնելու ուղղությամբ:

Առաջին արաբա-իսրայելյան պատերազմից հետո իր հրատապ լուծումն էր պահանջում Երուսաղեմի հետագա կարգավիճակի սահմանման խնդիրը: ՄԱԿ մի շարք բանաձևեր սահմանեցին Երուսաղեմի միջազգայնացման ասանհրաժեշտությունը: Սակայն Իսրայելը կտրականապես մեժծում էր միջազգային խնամակալությունը՝ համաձայնելով դրա կիրառմանը միայն որոշ սրբավայրերի նկատմամբ: Ինչ վերաբերում է Արդալլահ թագավորին, ապա նա հայտարարել էր, որ պատրաստ է իսրայելյան կողմի հետ քննարկել Հին քաղաքի փոխանակման հարցը, եթե իսրայելցիները պատրաստակամություն հայտնեն վերադարձնելու ՄԱԿ բանաձևով արաբական պետության համար հատկացված, սակայն Իսրայելի կողմից զբաղեցրած բոլոր տարածքները: Երուսաղեմի միջազգայնացման վերաբերյալ հորդանանա-իսրայելյան այս ներդաշնակ հակադրումը ևս արդյունք էր Իսրայելի հետ հորդանանյան անջատողական համաձայնության:

Այսպիսով, 1948-1949թթ. արաբա-իսրայելյան պատերազմի արդյունքում, շնորհիվ հորդանանա-իսրայելյան գաղտնի համաձայնությունների, Հորդանանի Արդալլահ թագավորը զգալիորեն ընդլայնեց իր տիրույթները Պաղեստինում՝ արաբական պետության համար նախատեսվող տարածքների հաշվին: Ինչ վերաբերում է իսրայելյան կողմին, ապա ի դեմս Արդալլահ թագավորի գտնելով հուսալի դաշնակցի և փոխհամաձայնության հասնելով վերջինիս հետ, հնարավորություն ստացավ խոչընդոտելու Պաղեստինում մեծ հեղինակություն վայելող Հուսեյնիների ընտանիքի գլխավորությամբ հրեաների նկատմամբ թշնաբար տրամադրված երկրորդ արաբական պետության կայացմանը:

Իսրայելցիների հետ գաղտնի գործարքների մեջ մտնելու պատճառով 1951թ. հունիսին Արդալլահ թագավորը սպանվեց Երուսաղեմի ալ-Աքսա մզկիթում:

ՀԱՅ - ԱՍՈՐԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ԴԻՈՆԻՍՈՍ ԲԱՐ - ՍԱԼԻԲԻԻ

Հայ Եկեղեցու հարաբերությունները ասորի հակոբիկ եկեղեցու հետ եղել են բարեկամական, քնն ունեցել են լուրջ տարածայնություններ:

Հայոց Եկեղեցին հակոբիկ եկեղեցու ներկայացուցիչների մասնակցությամբ առաջին ժողովը գումարել է 726թ. Մանազկերտում: Այստեղ ասորիները հայերին մեղադրում էին հուլիանականության, իսկ հայերը նրանց՝ սենրականության մեջ:

Մանազկերտից հետո երկու եկեղեցիների միջև լուրջ բախումներ չեն արձանագրվել: Միայն ԺԱ դարից մեզ է հասել ասորի պատրիարք Հովհանես Ժ Բար-Շուշանի և հայոց Գեորգ Բ կաթողիկոսի մամակագրությունը, որտեղ նրանք վիճաբանում են մի շարք խնդիրների շուրջ: Այս վիճակը պահպանվեց մինչև ԺԲ դարի կեսերը և շարունակվեց մինչև Ներսես Դ Շնորհալու կաթողիկոսության շրջանը, երբ բարեկամական փոխհարաբերություններ հաստատվեցին ասորի պատրիարք Միքայել Մեծի և նրա միջև:

Հակոբիկ եկեղեցու բարիդրացիական վերաբերմունքը Հայոց եկեղեցու նկատմամբ ԺԲ դարի ընթացքում և դրանից հետո, բացատրվում է նրանով, որ հայերը մեծ թիվ էին կազմում Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում, ստեղծել էին հայկական ազդեցիկ իշխանություններ, որոնք որոշակի դեր ունեին տարածաշրջանում: Նշենք նաև այն, որ ԺԳ դարում Հայոց բազավորության հզորացման շրջանում հակոբիկ եկեղեցին Հայկական բազավորության ազդեցության ոլորտում էր:

Այս շրջանի հայ-ասորական եկեղեցական հակամարտության հարցերի վերաբերյալ արժեքավոր աշխատություն է մեզ ավանդել Դիոնիսոս Բար-Սալիբին, որը մեծ դեր է կատարել երկու եկեղեցիների փոխհարաբերությունների ձևավորման գործում:

Դիոնիսոս Բար-Սալիբին ծնվել է Փոքր Հայքի Մելիտենե քաղաքում: 1145թ. ձեռնադրվել է Մարաշի եպիսկոպոս, որտեղից Միքայել Մեծ պատրիարքը 1154թ. նրան փոխադրել է Ամիո, ուր և նա մահացել է: Դիոնիսոս Բար-Սալիբին գրել է մեծաքանակ արժեքավոր աշխատություններ, որոնց մի մասը հասել է մեզ: Դրանցից են՝ «Հին և Նոր Կտակարանների մեկնությունները», «Պատարագի մեկնությունը» և այլն: Դիոնիսոս Բար-Սալիբին գրել է նաև հակաճառություն հակոբիկ եկեղեցուն հակամետ կրոնների աղանդների և հերձվածների դեմ (մուսուլմաններ, հրեաներ, նեստորականներ, քաղկեդոնականներ, հայեր): Մեզ հետաքրքրում է «Ընդդեմ հայերի և իրենց բարբերի և, քե որտեղից են սկզբնավորում նրանք իրենց սովորություններն ու ազգը», հակաճառությունը, որն ունի անզերեն և հայերեն բարգմանություն: Պողոս Էսապայանը մանրամասն անդրադարձել է այս երկուստեղծված խնդիրնե-

րին: Այս աշխատության և հայկական աղբյուրների համեմատության հիման վրա էլ դասակարգում ենք տարածայնության առիթ հանդիսացող խնդիրները, որոնք կարելի է բաժանել 2 հիմնական խմբի՝ դավանաբանական և ծիսական:

ՓԱՇՏՅԱՆ ԱՐԱՔԱ (ԱԻ)

2001թ. ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԱՄՆ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍԼԱՄԻ ՀԱՐՑԸ

2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում ահաբեկիչների կողմից պայթեցվեց Նյու-Յորքի Համաշխարհային առևտրի տունը և Վաշինգտոնում Պենտագոնի շենքի մի հատվածը: Տեղի ունեցած աղբյուրությունը, որին զոհ զնացին հազարավոր մարդիկ, դարձավ ողջ աշխարհի մտահոգության առարկան և ահաբեկչության դեմ միավորեց քաղաքակիրթ աշխարհը: ԱՄՆ-ը կատարվածի մեջ մեղավոր ճանաչեց «ալ-Կաիդա» խմբավորմանը և նրա առաջնորդ Ուսամա Բեն Լադենին, որը հայտնի էր իր ահաբեկչական գործունեությամբ և հակաամերիկյան ուղղվածությամբ:

Իսլամական ծայրահեղ արմատական ռազմա-քաղաքական կազմակերպությունները, հանդես գալով իսլամական կարգախոսներով, ահաբեկչությունը համարում են «Ջիհադ»՝ արդարացված պատերազմ, որը մղվում է «Աստծո ճանապարհին» և «Խանուն Աստծո»: Ինչպես արդարացիորեն նշում է արևելագետ Ն. Հովհաննիսյանը, ԱՄՆ-ին քիրախ դարձնելը ամենևին պատահական չէր. ահաբեկիչների պատկերացմամբ ԱՄՆ-ը չարիքի, բռնության մարմնավորում է, մի պետություն, որը արհամարհում է մյուս ժողովուրդների և երկրների շահերը և ձգտում քելսդրել իր կամքն ու քաղաքականությունը ամբողջ աշխարհին:

Մեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունները, որոնք տեղի ունեցան իսլամի քողի ներքո, մեկ անգամ ևս ապացուցեցին, որ իսլամի չափազանց հարաճուն քաղաքականացումը վճռորոշ գործոն է դարձել միջազգային արդի հարաբերություններում: 1993թ. Ս. Հանթինգթոնի կողմից առաջ քաշված «21-րդ դարը որպես քաղաքակրթությունների բախման հարյուրամյակ» հայտնի կանխատեսումը կարծես եկավ ապացուցելու այն իրողությունը, որ իսլամական գործոնի մուտքը քաղաքական գործընթացների մեջ հղի է անկանխատեսելի հետևանքներով: Արաբական մամուլի մի հրասպարակման համաձայն, աշխարհի բաժանման միջնադարյան մասնեղական պատկերացումները «իսլամի աշխարհի» և «պատերազմի աշխարհի» միջև կարծես կյանքի են կոչվել:

Այս հանգամանքները վճռորոշ եղան, որպեսզի միջազգային առանձին շրջանակների կողմից իսլամի դեմ անհանդուրժողականության դրսևորումները ավելի խորանան:

Իսլամական կրոնի և գաղափարախոսության շուրջ եղած մտայնությունները կանխելու: ապացույցն է արաբական իսլամական պաշտոնական շրջանակների, մասնավորապես, իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ), ինչպես նաև իսլամական քաղաքական և հոգևոր առաջնորդների հայտարարությունները, որոնք խիստ քննադատության ենթարկեցին կատարվածը: 2001թ. սեպտեմբերի 12-ին ԻԿԿ գլխավոր քարտուղար Բեյք Ազիզը տղջ իսլամական աշխարհի անունից ցավակցություն հայտնեց ԱՄՆ-ի նախագահին, իշխանություններին և ժողովրդին, նշելով, որ իսլամական աշխարհը, ընդհանուր առմամբ, կիսում է ամերիկյան ժողովրդի «ցավը և դատապարտում ոճրագործներին: Իրանի նախագահ Մոհամեդ Խաթամին ընդգծեց, որ ԱՄՆ-ում տեղի ունեցած անմարդկային իրադարձությունները պատրվակ են նրանց համար, ովքեր հետամուտ են հակաիսլամական զգացումներ ծնել արևմտյան երկրներում և հակամարտություն առաջացնել իսլամական քաղաքակրթության և Արևմուտքի միջև: Խաթամիի կարծիքով, իսլամական աշխարհի և միջազգային հանրության հետաքրքրությունները պահանջում են, որպեսզի մահմեդական առաջնորդների զգոնության շնորհիվ այդ վտանգը չեզոքացվի:

Սեպտեմբերի 11-ից հետո ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրադրությունը, ինչպես նաև Աֆղանստանում «Տալիբան» շարժման և «ալ-Կաիդայի» դեմ հատուցման ռազմական գործողություններ իրականացնելու ԱՄՆ-ի քաղաքականությունը քննարկելու նպատակով 2001թ. հոկտեմբերի 10-ին Կատարի մայրաքաղաք Դոհայում տեղի ունեցավ ԻԿԿ արտաքին գործերի նախարարների արտահերթ համընթացումը: Իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը հաստատեց, որ «սահաբեկչական գործողությունները խորթ են իսլամի հանդուրժողական աստվածային առաքելությանը» և քննադատության ենթարկեց ցանկացած փորձ, որը ձգտում է եզրեր փնտրել իսլամական հավատքի և սահաբեկչության երևույթի միջև: Իսլամական պետությունների ղեկավարների կարծիքով, նման քաղաքականությունը կարող է վնաս հասցնել աշխարհի ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերություններին: Միևնույն ժամանակ, իսլամական պետությունները, ցանկություն հայտնելով ԱՄՆ-ի հովանու ներքո պայքարել միջազգային սահաբեկչության դեմ, մերժեցին որևէ պատրվակով իսլամական արաբական որևէ պետությանը փրախ դարձնելը: Մերժեց որևէ կապ տեսնել «սահաբեկչության և արաբական իսլամական ժողովուրդների՝ համուն ինքնորոշման, ինքնապաշտպանության, Իսրայելի և օտար տիրապետության դեմ պայքարելու իրենց իրավունքների միջև»:

Իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը, որպես կանոն, դատապարտում է սահաբեկչական այն բոլոր գործողությունները, որոնք օգտագործում են իսլամը շահադիտական նպատակների համար:

**ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ «ԴԱՐԻ» ԼԵԶՎԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ**

Դարին՝ Աֆղանստանի ամենակարևոր լեզուներից մեկը, սկսել է ձևավորվել դեռևս 7-8-րդ դարերում՝ Մամանիների ժամանակ, Արևելյան Իրանի Բայխ, Հերաք, Նեյշաբուր, Բուխարա, Մարվ, Մամարղանդ և Քարուլ քաղաքներում, և իր զարգացման ընթացքում բավական մեծ թվով բառեր է փոխառել արաբերենից ու պահպանել մինչև մեր օրերը: Այնուհետև, 10-15-րդ դարերում, թուրք-մոնղոլական տիրապետության ժամանակ Աֆղանստանում մշտական բնակություն հաստատած մոնղոլական ցեղերի լեզուն խիստ ազդել է նրա բառային կազմի վրա: Դարիի հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն է ունեցել նաև մահմեդական Հնդկաստանը մեծ մոնղոլների օրոք, երբ Արևելյան Աֆղանստանը գտնվում էր նրա իշխանության տակ: Այդ ժամանակվա Հնդկաստանում լայն տարածում գտած ֆարսիի աֆղանական տարբերակը ոչ միայն ազդել է, այլև ազդվել է հնդկական լեզուներից: Դարիի մեջ թափանցել են մեծ թվով հնդկական ծագում ունեցող բառեր: Հենց այդ ժամանակներից էլ դարիի և ֆարսիի միջև սկսել են առաջանալ տարբերություններ: Առաջացել է հնդկական պարսկերեն կամ աֆղանական պարսկերեն անվանումը: Ավելի ուշ, 18-րդ դարի երկրորդ կեսում և 19-րդ դարում ֆեոդալական Աֆղանստանում այդ լեզուն, որը հետագայում կոչվել է դարի, արդեն որպես գրական և պաշտոնական գործառական լեզու, խիստ տարբերվել է երկրի խոսակցական լեզվից: Նշված ժամանակաշրջանում դարին հիմնականում գործածվում էր պարսկական միջավայրում, պաշտոնական գրագրություններում և գրական ստեղծագործություններում:

20-րդ դարի սկզբներին Աֆղանստանում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և մշակութային փոփոխությունների հետևանքով երկրում ձևավորված ազգային ինքնորոշման գաղափարին զուգահեռ մտավորականությունը առաջ քաշեց գրական և խոսակցական լեզուների մերձեցման հարցը:

Գիտնականների մի մասը պնդում է, որ դարին հենց նույն պարսկերենն է, իսկ ոմանց կարծիքով դարին և քաջիքին միևնույն լեզվի՝ պարսկերենի տարբեր բարբառներն են: Վերջիններիս հակառակ, մի խումբ գիտնականներ գտնում են, որ նշված լեզուները ինքնուրույն և անկախ են՝ իրենց ազգային նկարագրով:

Դեռևս անցած դարի երկրորդ կեսին մեր հայրենակից, խորհրդային անվանի աֆղանագետ, փուշտույի և դարիի քաջ գիտակ Մարտիոս Ասլանովն Աֆղանստանի ֆարսիի բառագիտության վերաբերյալ իր հոդվածներից մեկում առաջարկել է, որպեսզի դարիին ինքնուրույնություն տրվի: Նման տեսակետ են հայտնել նաև իրանցի ճանաչված գիտնականներ Մահմուդ Աֆշարը և Մոհամմադ Ջաֆար Յահադլին:

Ժամանակակից Աֆղանստանի դարին շատ հեղինակների աշխատություններում հիշատակվել է տարբեր անվանումներով, որի պատճառով շփոթություն է առաջացել այդ երկրում տարածված ֆարսին դարի անվանելովերաբերյալ: Թե ո՞ր ժամանակվանից է ֆարսի տերմինը փոխվել դարիի, ճշգրիտ հայտնի չէ, սակայն ակնհայտ է, որ մինչև վերջերս այն կոչվել է ֆարսի:

20-րդ դարի լեզվաբանության մեջ դարին ճանաչվել է ինքնուրույն անունով և դասվել հնդեվրոպական լեզուների իրանական ճյուղի արևմտյան ենթաճյուղի լեզուների շարքին, իսկ մինչ այդ այն փաստորեն դիտվում էր որպես պարսկերեն: Մեր կարծիքով, դարին ինքնուրույն լեզու է, որն անցել է զարգացման ինքնատիպ ուղի: Լեզվում առկա են բազմաթիվ փոխառություններ անգլերենից, ռուսերենից, ֆրանսերենից, գերմաներենից, պորտուգալերենից և իտալերենից: Դարիի բառային կազմն անմիջականորեն կրում է պարսկերենի, տաջիկերենի և փուշտույի ազդեցությունը: Ջգալի են նաև հիշյալ լեզուներից փոխառնված բառերը և դրանցով կազմված նոր բարդ բառերը: Այսօր դարին ժամանակակից Աֆղանստանի ամենատարածված և ամենագործածական լեզուն է: Այն ունի բազմաթիվ բարբառներ: Այդ լեզվին տիրապետում է երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԻ – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ՀԱԻ – ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԵՀԱՀ - Երևանի «Հրայր Աճառյան» համալսարան

ՊԻ – ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

ՀՅԹԻ – Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

ՈԻ – ՀՀ Պաշտպանության նախարարության Ռազմական ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<u>ԱՄԻՐՁԱՆՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ (ՀՅԹԻ)</u> - ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԲՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՐՑԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	3
<u>ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒԻԻԱ (ԵՊՀ)</u> - ԿԱԽԱՐԴՆԵՐԻ ԹՈՉՈՂ ԱՆՈԹԸ ԵՎ ՇԱՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	5
<u>ԱՆՈՒՄՅԱՆ ՄԵԼԻՆԵ (ՀՅԹԻ)</u> - ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԲՆԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ (1919-1920թթ.) ԸՆԹԱՅՔՈՒՄ ԵՎ ՄԱՍՈՒԼՈՒՄ	6
<u>ԲԱՐՍՅԱՆ ՆՄԻՐԱ (ԱԻ)</u> - ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱԳԱՆԱՅԻ 1909թ. ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	8
<u>ԲԱԳՂԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ԱԻ)</u> - ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐԵԻԱՅԻ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ	10
<u>ԳՆՈՒՆԻ ՄՐՏԱԿ (ՀՄԻ)</u> - ՇԵՆԳԱՎԻԹՅԱՆ (ՔԻՐԲԵԹ ՔԵՐԱԿՅԱՆ) ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻՐԻԱ, ՊԱՂԵՍՏԻՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼ ԹԱՓԱՆՅՄԱՆ ՇՈՒՐՁ	12
<u>ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ (ԱԻ)</u> - ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ	14
<u>ԳԵՄՈՅԱՆ ՀԱՅԿ (ԵՊՀ)</u> - ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ՝ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՋԼՄ-ՆԵՐԻ ԼՈՒՄԱԲԱՆՄԱՄԲ	16
<u>ԹԱԹՈՅԱՆ ՌՈՐԵՐՏ (ՀՅԹԻ)</u> - ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ (XIX ԴԱՐԻ 60-90-ԱԿԱՆ ԹԹ.)	17
<u>ԻՍԿԱՆԴԱՍՐՅԱՆ ԳՈՀԱՐ (ԱԻ)</u> - 1953թ. ՕԳՈՍՏՈՍԻՆ ԻՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ «ԱՅԱՔՍ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ	20

<u>ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ (ԱԻ)</u> - ԵզիՊՏՈՍՈՒՄ ՏԻՐՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 19-րդ. դարի վերջին ԵՎ 20-րդ. դարի սկզբին	20
<u>ԿՈՍՏԻԿՅԱՆ ԲՐԻՍՏԻՆԵ (ԱԻ)</u> - ՍԵՖՅԱՆ ՇԱՀԵՐ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ, ՍՈՒԼԹԱՆ ՀՈՒՄԵՅՆԻ ԵՎ ԹԱՀՄԱՍՊ ԻԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄՄ ՊԱՀՎՈՂ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ	22
<u>ՀԱԿՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ (ԵՊՀ)</u> - ՀԱՅ-ԹԱԹԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ	23
<u>ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ (ԱԻ)</u> - ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՌԱԶՄԱ- ԲԱՂԱԲԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958-1975թթ.)	26
<u>ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ (ԵՊՀ)</u> - ԵՓՐԱՏ-ՏԻԳՐԻՍԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՋ	28
<u>ՀՄԱՅԱԿՅԱՆ ՀԱՄՍԻԿ (ԱԻ)</u> - ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԵԱՐՀԻ ԱՅԼ ՍԵՊԱԳԻՐ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ	30
<u>ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ (ԱԻ)</u> - 1963-1964 թթ. ԿԻՊՐՈՍՈՒՄ ԾԱԳԱՇ ՃԳՆԱԺԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	32
<u>ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ (ԵՊՀ)</u> - ՍԱՄԱՆՅԱՆ ԻՐԱՆԻ ԴԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ	34
<u>ՂԱՐԻԲՉԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱԻ)</u> - ՈՒՂԴԻՉ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱԴԻՍՏԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՐԻԱՅՈՒՄ	36
<u>ՍԱՆՈՒԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ</u> - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼԻՉՄԸ ՄԻՐԻԱՅՈՒՄ. ԱՌԱՋԱՅՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎԱՅՄԱՆ ՊԱՏՃԱՆՆԵՐԸ	38
<u>ՍԱՐՏԻԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ՌԻ)</u> - ՀԱՅՈՑ ԵՎ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄՏՏՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ» ՎԻՊԱՍՔՈՒՄ	41
<u>ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ԵՊՀ)</u> - ԲՐԴԵՐ-ՀԱՅԵՐ-ԹՈՒՐԹԵՐ. ԱՇԽԱՀԱՐԱԲԱԿԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ	42

<u>ՄԵԼՔՈՆՅԱՆ ՌՈՒՔԵՆ (ԵՊՀ)</u> - ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՄԵՆԱԿԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ	45
<u>ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ՄԻ)</u> - ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՂԱՔԵՐՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԱՐԻԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՈՒՐՁ (VIII-XII Դ.Գ.)	48
<u>ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ (ԵՊՀ)</u> - ԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ԱԼ-ԲԱԼԱՋՈՒՐԻԻ «ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԳՐՔԻ»	49
<u>ՄՄՎՄԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ՄԻ)</u> - ՄՈՌԱՅՎԱԾ ՀՈՒՆԱԳԻՐ ՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ	50
<u>ՅԱԶԲՃՅԱՆ ԳԵՎՈՐԳ</u> - ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՍԻ ԵՎ ՀԱՆԳՈՒՄ 1919-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ	51
<u>ՅԱՎՐՈՒՄՅԱՆ ՄԱՐԱՏ (ԵՊՀ)</u> - ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՋՈՒՅԳԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ (ԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՐՆԻ ԼԵՋՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)	53
<u>ՇԱՔԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ (ԵՊՀ)</u> - ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒՄ	54
<u>ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԱՀԱԿ (ԵՀԱՀ)</u> - «ԳԵՐԲՆԱԿԱՆԻ» ԵՐԵՎՈՒՅԹԸ «ՇԱՀՆԱՄԵ» ԵՎ «ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍՆԵՐՈՒՄ	57
<u>ՄԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ՄԻ)</u> - ԹՈՒԿՈՒԼԹԻ-ՆԻՆՈՒՐԹԱ Ի-Ի (ք.Ա. 1244-1208 ԹԹ.) ԱՐՇԱՎԱՆՔԸ ԿՈՒՏԻ, ՇՈՒՐԱՐԻ ԵՎ ՆԱԻՐԻ	58
<u>ՄԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ (ՊԻ)</u> - ԱԳՐԲԵՋԱՆԻ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴՐՈՒՄ 1991-1994 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ	61
<u>ՄՏԵՓԱՆՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ (ՄԻ)</u> - ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՈՒՅՁԱ ՇԱՀ ՓԵՀԼԵՎԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՈՔ	63
<u>ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ (ԵՀԱՀ)</u> - ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԸ՝ ԲԱՀԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՂ (ՀՈՒՇԱՐՁՈՒԹՅԱՆ, ՀԵՏՔԵՐՈՎ)	65

ՎԻՐԱԲՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ)- ՀՈՐԳԱՆԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
1948-49 ԹԹ. ԱՐԱՐԱ-ԻՄԱՅԵԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ 66

ՏԵՐ - ՏԱՇԱՏՅԱՆ ԻՐԻՆԱ (ԱԻ)- ՀԱՅ - ԱՍՈՐԱԿԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ԳԻՈՆԻՍՈՍ
ԲԱՐ - ՄԱԼԻԲԻԻ 69

ՓԱՇԱՅԱՆ ԱՐԱՔՍ (ԱԻ)- 2001Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԱՄՆ-ՈՒՄ
ՏԵԳԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍԼԱՄԻ ՀԱՐՑԸ 70

ՓԱՐՍԱԳԱՆՅԱՆ ՎՆԵԺ (ԵՀԱՀ)- ԱՖԳԱՆՍԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
«ԳԱՐԻ» ԼԵԶՎԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 72

